2021 թվականին անապատի օդապարուկների և դրանց մշակութային միջավայրում գրեթե մշտապես հանդիպող բնակավայրերի շերտագրական և ժամանակագրական կապը վեր հանելու նպատակով հետախուզական փոսորակ դրվեց գետներես մեծ թվով վանակատից իրերի և վաղ փուլերին տիպորոշիչ խեցաբեկորների ամենախիտ կուտակման հատվածում: Պարզվեց, որ պեղվող հատվածը բնակավայրի արտաքին ցանկապատի արևմտյան եզրն է, որին կից են շրջանաձև և քառանկյուն կառույցներ: Մշակութային շերտի հզորությունը կազմում էր 0.5-0.7 մ:

Տեղամասի պեղումներով հայտնաբերվել են մեծ թվով կենդանական ոսկորներ, վանակատից, դացիտից և այլ հումքերից ցլեպներ և գործիքներ, խեցեղենի բազմաթիվ բեկորներ: Հիշատակելի են սև փայլեցված, երկմաս և եռամաս կառուցվածքով անոթների բեկորները, որոնք հասակագրվում են մ.թ.ա. XX-XVIII դարերով: Հայտնաբերված առարկաները բնորոշ են միջին բրոնզի դարաշրջանի Թեղքվանաձորյան մշակույթին:

Ախուրյանի միջին հոսանքում գտնվող Թլիկ 4 և Արագածավան 1 միջին-բրոնզեդարյան բնակատեղիների պեղումների նախնական տվյալները վկայում են հետազոտվող տարածքների անասնապահական և երկրագործական նպատակներով ինտենսիվ օգտագործման և յուրացման մասին, որոնց ուսումնասիրությունները հնարավորություն կտան հետևելու հետկուրարաքայան տնտեսամշակութային իրողությունների ձևափոփոխություններին:

ВАРДАНЯН Беник (Армения)

Институт археологии и этнографии НАН РА

E-mail: vbenik@yahoo.com

ШАХМУРАДЯН Мариам (Великобритания)

Кембриджский университет

МКРТЧЯН Левон (Армения)

Служба по охране исторической среды и историко-культурных

музеев-заповедников

ХАЗАРЯН Наре (Армения)

Институт археологии и этнографии НАН РА

ЗАРИКЯН Нушик (Армения)

Институт археологии и этнографии НАН РА

ХАЗАРЯН Гор (Армения)

Ереванский государственный университет

АХВЕРДЯН Артак (Армения)

Институт археологии и этнографии НАН РА

ПРЕДВАРИТЕЛЬНЫЕ РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК ПОСЕЛЕНИЯ ТЛИК 4 (2021 Г.)

Новонайденный археологический памятник Тлик расположен на западной границе Ширакской и Арагацотнской областей, на правой стороне автомобильной дороги Гюмри-Армавир, в среднем течении реки Ахурян, в 4,7 км к северо-востоку от одноименного села. Сохранившаяся часть с надземными сооружениями занимает площадь 2,5га, где иногда наблюдаются двусторонние стены высотой 0,3-0,8 м. Наблюдаемые в поселении постройки вытянуты с востока на запад по продольной оси, а четырехугольные и кольцевые постройки расположены по оси север-юг.

В 2021 году с целью выявления стратиграфической и хронологической связи «пустынных змей» и тех типов поселения, которые, практически постоянно, встречаются в одной культурной среде, в поселение Тлик 4 была заложена разведочная яма в районе наиболее плотного скопления обсидиановых и керамических надземных объектов, характерные для ранних этапов эпохи бронзы. Выяснилось, что раскопанная часть представляет собой западный край внешней ограды поселения, к которому примыкают кольцевые и четырехугольные сооружения. Мощность культурного слоя 0,5-0,7 м.

При раскопках было обнаружено большое количество животных костей, орудий труда из обсидиана, дацита и другого сырья, а также многочисленные фрагменты керамики. Обращают на себя внимание фрагменты чернолощёной, двух- и трехслойной керамики, датируемых XX-XVIII вв. до н.э. Обнаруженные предметы типичны для триалети-ванадзорской культуры эпохи средней бронзы Кура-араксского междуречья.

Предварительные результаты раскопок поселений эпохи средней бронзы Тлик 4 и Арагацаван 1 в Арагацотнском районе, расположенных в среднем течении реки Ахурян, свидетельствуют об интенсивном использовании и освоении исследованных территорий для животноводческих и сельскохозяйственных целей.

VARDANYAN Benik (Armenia)

Institute of Archaeology and Ethnography of NAS RA,
E-mail: vbenik@yahoo.com

SHAKHMURADYAN Mariam (Great Britain)

University of Cambridge

MKRTCHYAN Levon (Armenia)

Service for Protection of Historical Environment and
Historical-Cultural Museum-Reserves

GHAZARIAN Nare (Armenia)

Institute of Archaeology and Ethnography of NAS RA,

ZARIKYAN Nushik (Armenia)

Institute of Archaeology and Ethnography of NAS RA

GHAZARYAN Gor (Armenia)

Yerevan State University

NAKHVERDYAN Artak (Armenia)

Institute of Archaeology and Ethnography of NAS RA

**PRELIMINARY RESULTS OF THE EXCAVATIONS OF THE
TLIK 4 SETTLEMENT (2021)**

The newfound archaeological site Tlik is located on the western border of Shirak and Aragatsotn regions, on the right side of the Gyumri-Armavir highway, in the middle basin of the Akhuryan river, 4.7 km to the northeast of the village Tlik. The preserved part with above-ground structures occupies an area of 2.5 ha, where sometimes double-sided walls of 0.3-0.8 m height are observed. The structures observed in the settlement extend from east to west along the longitudinal axis, and the quadrangular and circular structures are located along the north-south axis.

In 2021, in order to identify the stratigraphic and chronological relationship of the "desert kites" and those settlement types which, almost constantly, occur in the same cultural landscape, an exploration pit in the area of the densest accumulation of obsidian and ceramic above-ground objects, characteristic of the early stages of the Bronze Age,

was laid in the Tlik 4 settlement. It turned out that the excavated part is the western edge of the outer fence of the settlement, which is adjoined by circular and quadrangular structures. The thickness of the cultural layer is 0.5-0.7 m.

During excavations a big number of animal bones, tools made of obsidian, dacite and other raw materials, as well as numerous fragments of pottery were found. The fragments of black polish, two-layer and three-layer ceramics dating to the XX-XVIII centuries BC attract attention. The found objects are typical for the Trialeti-Vanadzor culture of the Middle Bronze Age in the Kura-Araxes interfluve.

The preliminary results of the excavations of the Middle Bronze Age settlements Tlik 4 and Aragatsavan 1 in the Aragatsotn region, located in the middle course of the Akhuryan River, testify to the intensive use and development of the studied territories for livestock and agricultural purposes.

ՓԱԼԱՆՋՅԱՆ Ռուզան (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Էլ. փոստ՝ ruzanpal@gmail.com

ՀՈՌՈՄԻ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՄՐՈՑԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՕԾԱՆԵԼԻՔԻ ՍՐՎԱԿԻ ՃՈՒՐՁ

Շիրակի մարզի Հոռոմ գյուղում գտնվող ուրարտական ամրոցից հայտնաբերված հնագիտական իրերի թվում մեծ հետաքրքրություն է ներկայացնում նեղ վզով, երկարավուն, դեպի ներքև սրվող իրանով կավե սրվակը: Սրվակը իր գուգահեռներն ունի Կարմիր բլուրից, Արգիշտիխինիլիից, Լոռի բերդի դամբարանադաշտից հայտնաբերված ուրարտական ժամանակաշրջանի իրերի շարքում: Այդ տիպի սրվակները նախատեսված են եղել հեղուկ կազմության օժանելիքներ պահելու համար: Այդպիսի սրվակներ արտադրվել են տարբեր երկրներում, և չի բացառվում, որ ուրարտական կենտրոններում նույնպես զբաղվել են դրանց արտադրությամբ: Այս տեսակետի օգտին խոսում է այն հանգամանքը, որ, ինչպես ցույց է տալիս հետազոտությունը, Ուրարտում զբաղվել են օժանելիքների արտադրությամբ, որոնց համար որպես տարա են ծառայել հիշյալ սրվակները: Այդ օժանելիքները բավականին թանկ արժեին, և մատչելի էին միայն վերնախավին: Հետևաբար, Հոռոմի Ուրարտական ամրոցում օժանելիքի սրվակի հայտնաբերման փաստը վկայում է ամրոցի բնակչության բարեկեցության մասին:

ПАЛАНДЖЯН Рузан (Армения)

Институт археологии и этнографии НАН РА

e-mail: ruzanpal@gmail.com

О ПАРФЮМЕРНОМ ФЛАКОНЕ, ОБНАРУЖЕННОМ В УРАРТСКОЙ КРЕПОСТИ ОРОМА

Среди археологических предметов, найденных в урартской крепости в селе Ором Ширакской области, большой интерес представляет глиняный флакон с узким горлышком, удлинённым, заостренным вниз туловом. Флакон имеет параллели среди предметов урартского периода, найденных в Кармир блуре, Аргистихинили, некрополе Лори берда. Эти флаконы предназначались для хранения жидких духов. Подобные флаконы производились в разных странах, и, не исключено, что производились они и в Урарту. В пользу этого мнения говорит тот факт, что, согласно исследованиям, в Урарту занимались производством духов, емкостью для которых служили упомянутые флаконы. Эти духи были довольно дорогими, доступными только избранным. Поэтому обнаружение парфюмерного флакона в урартской крепости Ором свидетельствует о благополучии населения крепости.

PALANJYAN Ruzan (Armenia)

Institute of Archaeology and Ethnography NAS RA

e-mail: ruzanpal@gmail.com

ABOUT A PERFUME BOTTLE DISCOVERED IN THE URARTIAN FORTRESS OF HOROM

Among the archaeological objects found in the Urartian fortress in the village of Horom, Shirak region, a clay bottle with a narrow neck and an elongated body pointed down is of great interest. The bottle has parallels among objects of the Urartian period found in Karmir Blur, Argishtikhinili, the necropolis of Lori Berd. These bottles were meant to hold liquid perfumes. Similar bottles were produced in different countries, and it is possible that they were also produced in Urartu. This opinion is supported by the fact that, according to research, in Urartu they were engaged in the production of perfumes, the containers for which were the mentioned bottles. These perfumes were quite expensive, available only to the elite. Therefore, the discovery of a perfume bottle in the Urartian fortress of Horom testifies to the well-being of the population of the fortress.

ԲԱԴԱԼՅԱՆ Միխայիլ (Հայաստան)

Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան

ՄԻՄՈՆՅԱՆ Հասմիկ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ Արմինե (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Արթուր (Հայաստան)

Անկախ հետազոտող

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Արման (Հայաստան)

Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան

ԿՅՈՒՐԵՂՅԱՆ Հայկ (Հայաստան)

Անկախ հետազոտող (Հայաստան)

Էլ. փոստ՝ hassimonyan89@gmail.com

**ՕԶԱԲԵՐԴԻ ԱՐՏԱՔԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՊԵՂՎԱԾ
ԹԱՂՈՒՄՆԵՐԸ**

2018 թվականին պեղումներ են իրականացվել Օձաբերդի արտաքին բնակավայրի հարավարևմտյան հատվածում (տեղամաս H): Այստեղ բացվել են 2 մ լայնությամբ կիսակոպտատաշ քարերով հզոր պատերի մի հատված՝ մոտ 16 մետր: Ֆիքսվել են կավածեփ հատակներ, տնտեսական հոր, ինչպես նաև կցապատեր: Ըստ երևույթին, այստեղ գործ ունենք բնակատեղիի արտաքին պարսպաշարի մի հատվածի հետ: Համաձայն նախնական շերտագրական դիտարկումների՝ այս կառույցը կարելի է թվագրել հետուրարտական ժամանակաշրջանով (Ք. ա. 7-րդ դարի վերջ-5-րդ դար): Այս տեղամասից գտնվել են տարատեսակ խեցեղենի և շարժական կրակարանների հատվածներ, մետաղե բեկորներ, կենդանական ոսկորներ և այլն: Պատի հարավարևմտյան արտաքին անկյան քիչ հյուսիս ձգվող երկայնքով ուշ փուլում (հավանաբար ուշ անտիկ ժամանակաշրջանում) արվել են թաղումներ:

Այստեղ փաստվել են խմբային (5 անհատի) և քիչ հյուսիս՝ մեկ կարասային թաղումներ: Պարզվել է, որ խմբային թաղումը բաղկացած է մեկ մանկական (5-6 տ.), երկու իգական (14-17 և 35-45 տ.) և երկու արական (30-35 և 50-55 տ.) սեռի անհատներից: Խմբային թաղումն արված է կանոնիկ, անհատները թաղված են կծկված վիճակում՝ աջ կամ ձախ կողքի վրա, բացառությամբ մեկ անհատի, որի մարդաբանական նյութը հավաքվել է թաղման տարբեր հատվածներից: Կարասային թաղումն անհատական է: Ըստ համեմատաբար վատ պահպանված մարդաբանական նյութի՝ անհատը պատկանում է արական սեռի (35-45 տ.): Հանգուցյալը կարասում տեղադրված է եղել կծկված՝ էմբրիոնի դիրքով: Անհատին ուղեկցող հնագիտական նյութեր չեն հայտնաբերվել:

Թաղումների առկայության փաստը ինքնին վկայում է, որ առնվազն ուշ անտիկ ժամանակաշրջանում Օձաբերդի արտաքին բնակավայրը լքվել է և մասամբ օգտագործվել է թաղումներ իրականացնելու համար: Օձաբերդից հայտնաբերված բոլոր վեց կմախքներից վերցվել են նմուշներ և ուղարկվել հնագույն ԴՆԹ հետազոտությունների համար:

БАДАЛЯН Михаил (Армения)

Историко-археологический музей-заповедник Эребуни

СИМОНЯН Асмик (Армения)

Институт археологии и этнографии НАН РА

ГАБРИЭЛЯН Армине (Армения)

Институт археологии и этнографии НАН РА

МИКАЕЛЯН Артур (Армения)

Независимый исследователь

ЕГИАЗАРЯН Арман (Армения)

Историко-археологический музей-заповедник Эребуни

КЮРЕГЯН Айк (Армения)

Независимый исследователь

e-mail: hassimonyan89@gmail.com

ПОГРЕБЕНИЯ, РАСКОПАННЫЕ НА ТЕРРИТОРИИ ВНЕШНЕГО ПОСЕЛЕНИЯ ОДЗАБЕРД

В 2018 году были проведены раскопки на территории внешнего поселения Оцаберда, в юго-западной части (квадрат Н). Здесь была открыта одна часть полугруботесаных мощных стен, приблизительно 16 метров. Зафиксированы глинобитные полы, хозяйственная яма, а также пристроенные стены. Судя по всему, мы имеем дело с частью внешней крепости поселения. Согласно стратиграфическим наблюдениям, это сооружение может датироваться постурартской эпохой (конец 7-го века-5 в. до н.э). С места данных раскопок были найдены различные виды керамической утвари и фрагменты переставных очагов, части металлических изделий, кости животных и т.д. Были сделаны погребения, осуществленные скорее всего, в позднюю античную эпоху по вытянутой длине стены юго-западного наружного угла.

Здесь были аргументированы групповые (5 человек) и чуть севернее одно карасное погребение. Выяснилось, что групповое погребение состоит из одного детского (5-6 лет), двух женских (14-17 и 50-55 лет) полов. Групповое погребение сделано канонически, люди погребены в скорченной позе, на правом или левом боку, за исключением одного человека, чей антропологический материал был собран с разных частей погребения. Карасное погребение индивидуальное. По сравнению плохо сохранившемуся антропологическому материалу человек принадлежит к мужскому полу (35-45 лет). В карасе усопший расположен в скорченной позе эмбриона. Не было обнаружено сопровождающего материала.

Факт существования погребений свидетельствует о том, что хотя бы в позднюю античную эпоху внешнее поселение Оцаберд было покинуто и частично использовалось для осуществления захоронений. Со всех 6 скелетов, найденных из Оцаберда, были взяты образцы и отправлены на исследование древней ДНК.

BADALYAN Mikhail (Armenia)

Erebuni Historical Archaeological Reserve-Museum

SIMONYAN Hasmik (Armenia)

Institute of Archeology and Ethnography NAS RA

GABRIELYAN Armine (Armenia)

Institute of Archeology and Ethnography NAS RA

MIKAYELIAN Arthur (Armenia)

Independent researcher

EGHIAZARYAN Arman (Armenia)

Erebuni Historical Archaeological Reserve-Museum

KYUREGHYAN Hayk (Armenia)

Independent researcher

e-mail: hassimonyan89@gmail.com

BURIALS EXCAVATED IN THE OUTER SETTLEMENT OF ODZABERD

In 2018, the excavations were carried out in the south-western part of Odzaberd's outer city (locus H).

A section of strong walls with semi-rough stones of the 2m width, about 16 meters, were opened here. Clay floors, economic well, as well as fences were fixed. Apparently, we are dealing with a part of the outer fence of the dwelling. According to preliminary stratigraphic observations, this structure can be dated to the post-Urartian period (late 7th - 5th centuries BC). Various pottery shreds were found in this area, such as portable hearts, metal fragments, animal bones, etc. Burials were made at a later stage (probably in Late Antiquity) along the south-western outer corner of the wall towards to the north.

There have been unearthened collective (5 individuals) and on the northern direction one jar burial. It came out that collective burial includes one child (5-6 years old), two female (14-17 and 35-45 years old) and two male (30-35 and 50-55) individuals. The collective burial was canonic; individuals were buried in flexed positions on their right or left sides, except one individual whose anthropological materials were collected from different parts of the burial. The jar burial is a single one. According to relatively poorly preserved anthropological materials, the individual is a male (35-45 years old). The skeleton is placed in a jar in flexed embryo position. The archaeological artifacts accompanying the individual have not been unearthened there.

The fact of the burials itself indicates that at least in the Late Antique period the outer city of Odzaberd was abandoned and partially used for creating burials. From all six skeletons excavated in Odzaberd anthropological samples were taken and sent for ancient DNA analysis.

ՊԵՏՐՈՍՅԱՆ Արմենուհի (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Էլ. փոստ՝ petrosyanarmenuhi@yandex.ru

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԱԳԱՐԱԿԻ ԴԱՄԲԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ

(մ. թ. ա. VI - մ. թ. VI դդ.)

Ագարակի հուշարձանախումբը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Ագարակ և Ոսկեհատ գյուղերի տարածքում՝ Երևան – Գյումրի մայրուղու երկու կողմում՝ Ամբերդ գետի աջ ափին՝ հրաբխային տուֆե ելուստներից կազմված ժայռոտ հրվանդանի վրա: Այն զբաղեցնում է ավելի քան 200 հա տարածք, որից 118 հա ՀՀ կառավարության որոշմամբ ստացել է պատմամշակութային արգելոցի կարգավիճակ:

2001-2012 թթ. ընթացքում, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը (արշավախմբի ղեկավար՝ Պ. Ավետիսյան)՝ «Ամերիկայի Գֆոլլեր հիմնադրամ, ընկերության» հայաստանյան մասնաճյուղի ֆինանսական և կազմակերպչական օժանդակությամբ, այս տարածքում իրականացրել է պեղումներ, ինչի արդյունքները վկայում են, որ Ագարակը բնակեցված է եղել վաղ բրոնզի դարից մինչև ուշ միջնադար: Այստեղ արձանագրվել են առանց ընդհատվելու իրար հաջորդող հնագիտական շերտեր:

Հուշարձանախմբի տարածքում բացվել են թաղման կառույցներով, ձևերով ու ծեսով իրարից տարբերվող մի շարք դամբարաններ՝ քարարկղային, սալարկղային, կարասային, ժայռափոր, հիմնահողային, կլոր հատակագծով քարաշար:

Թաղումների ուղեկցող գույքը բազմազան է: Այստեղից հայտնաբերվել են ապարանջաններ, ականջօղեր, ականջօղի ուլունքե և ոսկորե կախիկներ, պարզ օղակաձև և վահանակով մատանիներ, շքասեղի գլխիկ, ձևով, պատրաստման նյութով ու տեխնիկայով միմյանցից տարբեր բազմաթիվ ուլունքներ, գլանաձև և բազմանիստ կնիքներ, դրամներ, խեցեղեն և այլ իրեր: Որոշ թաղումների շրջակայքում պահպանվել են հոգեհացի արարողության հնագիտական հետքեր:

Դամբարանների մի մասի ուղեկցող գույքն ու հոգեհացի հետքերը կա՛մ չեն պահպանվել, կա՛մ վատ են պահպանվել, քանի որ դամբարանադաշտում թաղումներն իրար շատ մոտ են, երբեմն մեկը մյուսի վրա, երբեմն էլ միջնադարյան շերտերը վնասել են թաղումները:

Ագարակից հայտնաբերված դամբարանները գալիս են լրացնելու Հայաստանի հնավայրերից հայտնաբերված թաղումների և տվյալ ժամանակաշրջանի նյութական մշակույթի վերաբերյալ մեր գիտելիքները:

Դրանք հայտնաբերված ուղեկցող նյութի ուսումնասիրության և շերտագրական դիտարկումների հիման վրա թվագրվում են մ. թ. ա. VI -մ. թ. VI դդ.:

ПЕТРОСЯН Арменуи (Армения)

Институт археологии и этнографии НАН РА

e-mail: petrosyanarmenuhi@yandex.ru

ПОГРЕБАЛЬНЫЕ КОМПЛЕКСЫ ПАМЯТНИКА АГАРАК В АРАГАЦОТНЕ (VI ВЕК ДО Н.Э. - VI ВЕК Н.Э.)

Археологический комплекс Агарак расположен на правом берегу реки Амберд, на территории сел Агарак и Воскеат по обе стороны трассы, на скалистом мысу, образованном из выходов вулканического туфа. Памятник занимает площадь почти 200 га, из которых территория в 118 га решением правительства РА получила статус историко-культурного заповедника.

В 2001-2012 гг. экспедиция Института археологии и этнографии НАН РА (руководитель экспедиции – П.Аветисян) при финансовой и организационной поддержке Армянского отделения американского фонда «Gfoeller» производила на территории памятника Агарак раскопки, результаты которых показали, что Агарак был заселен с эпохи ранней бронзы до позднего средневековья. Здесь были зафиксированы последовательные, сменяющие друг друга без перерыва, археологические слои.

На территории памятника был открыт ряд различных по конструкции, формам и обрядам погребений: циста, каменный ящик, кувшинные погребения, скальные мавзолеи, грунтовые погребения, а также круглые каменные насыпи.

Сопутствующий погребению материал разнообразен. Здесь были найдены браслеты, серьги, подвески из кости или в виде бусин для серег, цилиндрические и многогранные печати, монеты, керамика и пр. Рядом с некоторыми погребениями сохранились следы тризны. Инвентарь некоторых погребений и следы тризны либо не сохранились, либо сохранились очень плохо, посему как погребения расположены близко друг к другу, а зачастую встречаются даже друг на друге. В некоторых случаях средневековые слои разрушили погребения.

Гробницы, обнаруженные на городище Агарак, восполняют наши знания как о кувшинных захоронениях с памятников Армении, так и о материальной культуре того периода. Согласно изучению сопутствующего материала и стратиграфическим наблюдениям, памятник датируется 6 веком до н.э. - 6 веком н.э..

PETROSYAN Armenuhi (Armenia)

Institute of Archaeology and Ethnography NAS RA

e-mail: petrosyanarmenuhi@yandex.ru

THE TOMB COMPLEXES OF AGARAK OF ARAGATSOTN (6TH CENTURY BC-6TH CENTURY AD)

The archaeological complex of Agarak is located on the right bank of the Amberd river, on the territory of Agarak and Voskehat villages, on the both sides of the highway,

on the rock cape formed from volcanic tuff protrusions. It occupies an area of approximately 200 hectares, 118 of which received the status of a historical and cultural reserve by the decision of the RA Government.

In 2001-2012 the expedition of the Institute of Archaeology and Ethnography of the NAS RA (headed by Dr. Pavel Avetisyan) with the financial and organizational support of the Armenian branch of the American Gfoeller Foundation, held excavations on the territory of Agarak complex. The results of the work and the data of dwellings and burials of different time period evidenced that Agarak was settled from the Early Bronze Age till Late Middle Ages.

The stratigraphic sequence without traces of interruption has been recorded here. A number of tombs were excavated in the territory of the site, different by burial structures, shapes and rituals: cysts/stone boxes, jar burials, rock-cut tombs, ground burials, and stone mounds round in plan.

Grave goods are diverse. Bracelets, earrings, bead and bone pendants of earrings, simple circular rings and rings with head, head of a pin, various beads made with different materials and techniques, cylindrical and multifaceted seals, coins, pottery and other items have been revealed. Near some of the burials remnants of funeral feast have been preserved.

Some of the grave goods and remnants of funeral feast either are not preserved, or their preservation is very poor, because the burials are placed very close, sometimes even overlapping each other. In some cases Medieval layers damaged the burials.

Tombs discovered at the site of Agarak fulfill our knowledge both about jar burials from the sites of Armenia, and about the material culture of that period.

According to the study of the associated material and the stratigraphic observations, the site dates back to the 6th century BC - 6th century AD.

ԳԱՐԲԻԵԼՅԱՆ Արմինե (Հայաստան)

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ինեսա (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Էլ. փոստ՝ arminegabriel.iae@gmail.com

**ՆՈՐԱՀԱՅՑ ԱՆՏԻԿ ԿԱՐԱՍԱՅԻՆ ԹԱՂՈՒՄՆԵՐ
ՄԱՍՏԱՐԱՅԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ**

Արագածոտնի մարզի Մաստարա գյուղից 2-3 կմ արևմուտք, ծովի մակերևույթից 1815 մ բարձրություն ունեցող լեռնազանգվածի միջնալանջի վրա հայտնաբերված համանուն նորահայտ հուշարձանի երկու տարի (2017-2018 թթ.) տևած դաշ-

տային պեղաշրջանի աշխատանքները բացահայտեցին, որ Մաստարա հնավայրը կառուցվել է վաղ բրոնզի դարաշրջանում: Բնակավայրից պահպանված կառույցների պատերի մնացորդների վրա հելլենիստական և ուշ անտիկ դարաշրջանում հառնել է մի նշանակալի բնակավայր: Այն եղել է պարսպապատով շրջափակված, ունեցել է բնակարանային համալիրներով հագեցած ընդարձակ թաղամասեր և պարսպապատի հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ձգվող հատվածի արտաքին, երեսին կից տեղադրված դամբարանադաշտ:

Այստեղ բացվել են բնակավայրին ժամանակակից (մ.թ.ա 3-րդ - մ.թ. 3-րդ դարերի առաջին կես) քարարկղային դամբարաններ, որոնցից երեքի մեջ կատարվել են զեկուցման թեմա հանդիսացող, իջեցուկ կարասային թաղումները: Կարասային թաղումներից երկուսն ուղեկցող նյութեր չունենին, սակայն երրորդն ընձեռեց յուրահատուկ տվյալներ թաղման ծեսի և հոգեհացի վերաբերյալ:

Մաստարայի կարասային թաղումների այս տեսակը՝ սակավաթիվ կամ առանց ուղեկցող գույքի, տեղադրված իրենցից ավելի վաղ դամբարաններում կամ բնակավայրերի վերին շերտերում, սովորական է և բնորոշ ուշ անտիկ՝ մ.թ. 2 - 3-րդ դարի համար և թույլ է տալիս մտածել, որ բնակավայրի գործունեության դադարեցման և ավերման պատճառը եղել է մ.թ. 3-րդ դարի սկզբից սկսված և մինչև դարավերջ տևած՝ Միջագետքին և Հայաստանին տիրանալու համար Հռոմեա-պարսկական պատերազմները: Կարծում ենք, որ բնակավայրը պատկանել է Արագածոտնի մարզի վերջին տասնամյակների հնագիտական հետազոտություններով բացահայտված մեկ տասնյակի հասնող մեծ ու փոքր ամրոցների ու բնակավայրերի թվին, որոնք իրարից որոշակի հեռավորությամբ ձգվում են ներկայիս Աշտարակ-Թալին-Գյումրի մայրուղու երկու կողմով՝ Ագարակ, Կոշ, Ներքին և Վերին Բազմաբերդ, Կաթնաղբյուր, Աշնակ, Ակունք, Արեգ, Չաքարի բերդ: Այս ամրոցները կազմել են պաշտպանական մի հզոր համակարգ, որը հանդիսացել է հնագույն ժամանակներից գործող, Հնդկաստանից Էկբատան եկող և Հայաստանի վրայով Մեոտիդիս ձգվող «Հյուսիս-հարավ» միջազգային հաղորդակցության՝ Արտաշատ-Սեբաստոպոլիս մայրուղու արևմտյան թևի կարևոր հատվածը:

ГАБРИЕЛЯН Армине (Армения)

КАРАПЕТЯН Инесса (Армения)

Институт археологии и этнографии НАС РА, к. ф. Н

e-mail: arminegabriel.iae@gmail.com

АНТИЧНЫЕ КУВШИННЫЕ ПОГРЕБЕНИЯ ПОСЕЛЕНИЯ МАСТАРА

Археологический памятник Мастара находится в 2-3 км от современного одноименного села в области Арагацотн, на высоте 1815 м над уровнем моря, на среднем склоне горного массива. Работы, произведенные на памятнике в течение двух полевых сезонов (2017-2018 гг.), выявили, что археологическое поселение

Мастара было построено в эпоху ранней бронзы. На остатках стен ранних построек в эллинистический период и в поздней античности было возведено значимое поселение. Оно было окружено стеной, имело просторные кварталы с жилыми комплексами. С внешней стороны части стены, тянувшейся с северо-востока на юго-запад, к нему прилегал могильник.

Здесь были открыты синхронные поселению (3 век до н.э. – первая половина 3 века н.э.) погребения в виде каменных ящиков, в трех из которых были совершены впускные кувшинные погребения, исследуемые в данной работе. Два из них сопутствующего материала не содержали, однако третий предоставил уникальные данные о погребальном обряде и тризне.

Обсуждаемый вид кувшинных погребений со скудным инвентарем или с полным его отсутствием, вкопанных в более ранние погребения или слои поселения, вполне обычны и присущи поздней античности (3 век н.э.). Этот факт дает нам повод утверждать, что причиной прекращения жизни и разрушения поселения явились римско-персидские войны за господство над Арменией и Месопотамией, длившиеся с начала до конца 3 века н.э.

Мы полагаем, что поселение относилось к десятку крупных и малых крепостей и поселений, обнаруженных в последние десятилетия благодаря археологическим исследованиям в области Арагацотн, которые расположены по обеим сторонам нынешней магистрали Аштарак-Талин-Гюмри на определенном расстоянии друг от друга: Агарак, Кош, Неркин и Верин Базмаберд, Катнахбюр, Ашнак, Акунк, Арег, Закари берд. Эти крепости образовывали мощную оборонительную систему действовавшего с древних времен международного сообщения «Север - Юг» от Индии до Экбатан, и являвшуюся важной частью западного крыла пути Арташат-Себастополис, пролежавшего через Армению и достигающего Меотиды.

GABRIELYAN Armine (Armenia)

KARAPETYAN Inessa (Armenia)

Institute of Archaeology and Ethnography NAS RA

e-mail: arminegabriel.iae@gmail.com

THE NEWLY DISCOVERED JAR BURIALS OF THE CLASSICAL PERIOD AT THE SETTLEMENT OF MASTARA

The archaeological site of Mastara is located 2-3 km from the modern village of the same name in the Aragatsotn region, at the altitude of 1815m above sea level, on the middle slope of a mountain range. The work carried out during two field seasons (2017-2018) at the site revealed that the archaeological settlement of Mastara was built in the Early Bronze Age.

A significant settlement was erected on the remains of the walls of early buildings in the Hellenistic period and in the Late Classical period. It was surrounded by a wall, had

spacious quarters with residential complexes. A tomb field occupied the outer area of the settlement adjacent to the wall that stretched from the northeast to the southwest. At the tomb field burials in the form of stone boxes, synchronous with the settlement (3rd century BC - first half of the 3rd century AD), were discovered. In three of those intrusive jar burials discussed in this work were made. Two of those did not contain accompanying material, but the third one provided important data on the funerary rite and funeral feast.

The discussed type of jar burials with small amount of goods or with complete absence of inventory dug into earlier burials or layers of the settlement is quite common and inherent in the Late Classical period (3rd century AD). This fact gives us reason to assert that the reason for the termination of life and the abandonment of the settlement was the Roman-Persian wars for dominance over Armenia and Mesopotamia, which lasted from the beginning to the end of the 3rd century AD.

We suppose that the settlement belonged to a dozen large and small fortresses and settlements discovered in recent decades in the frames of the archaeological research in the Aragatsotn region, which are located on both sides of the current Ashtarak-Talin-Gyumri highway at a certain distance from each other: Agarak, Kosh, Nerkin and Verin Bazmaberd, Katnaghbyur, Ashnak, Akunk, Areg, Zakari berd.

These fortresses formed a powerful defensive system of the North-South international communication operating from ancient times from India to Ecbatana, and were an important part of the western wing of the Artashat-Sebastopolis route, which ran through Armenia and reached Meotida.

ՔՈԶԱՐՅԱՆ Գայանե (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Էլ. փոստ՝ vruyr2001@gmail.com

ՇԻՐԱԿԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

1. Ամրաշինական կառույցների տեղագրական և ժամանակագրական տվյալների համեմատական վերլուծությամբ ուրվագծվում է Շիրակի պաշտպանական համակարգի շարունակական զարգացման համապատկերը ընդհանուր գծերով՝ մ. թ. ա. III հազարամյակից ներառյալ մ. թ. I հազարամյակը:

2. Սույն համակարգի ձևավորման ընթացքում ակնհայտ է Ախուրյանի հովիտի տարանցիկ առևտրի ուղիների երկայնքով հնագույն ամրոցների վերակառուցման ու համալրման միտում:

3. Բազրատունիների թագավորության շրջանում (IX-XI դդ.) վերակազմավորված և կատարելագործված Շիրակի պաշտպանական համակարգը՝ Այրարատի

ընդհանուր պաշտպանական համակարգի բաղկացուցիչ օղակը, դառնում է պետականությունը վերականգնած ինքնիշխան երկրի համար առաջնակարգ ռազմավարական կարևորության հանգուցակետ:

КОЧАРЯН Гаянэ (Армения)

Институт археологии и этнографии НАН РА

e-mail: vruyr2001@gmail.com

ПРОЦЕСС ФОРМИРОВАНИЯ ОБОРОНИТЕЛЬНОЙ СИСТЕМЫ ШИРАКА

1. Сравнительным анализом топографических и хронологических данных фортификационных сооружений вырисовывается картина продолжительного развития оборонительной системы Ширака с III тысячелетия до н. э. по I тысячелетие н. э.

2. В процессе формирования данной оборонительной системы наблюдается тенденция перестройки и пополнения древнейших крепостей, расположенных вдоль транзитных торговых путей Ахурянской долины.

3. В период царствования Багратидов (IX-XI вв.) реорганизованная и усовершенствованная оборонительная система Ширака - составное звено общей оборонительной системы Айрарата - становится контролирующим узлом стратегической важности для восстановленной государственности суверенной страны.

KOCHARYAN Gayane (Armenia)

Institute of Archaeology and Ethnography NAS RA

e-mail: vruyr2001@gmail.com

THE PROCESS OF FORMATION OF SHIRAK DEFENSIVE SYSTEM

1. Comparative analyses based on topographical and chronological data of the fortifications enable to reveal the picture of continuous developments of Shirak defensive system since the 3rd millennium BC up to 1st millennium AD.

2. In the process of formation of Shirak defensive system ancient fortresses along Akhuryan valley transit trade routes are being rebuilt and completed.

3. During the reign of the Bagratids (9th-11th centuries AD) reorganized and improved Shirak defensive system - one of the composite links of the Ayrarat state defensive system - became the controlling junction with strategic significance for the reconstructed statehood sovereign country.

ԱԳԱՄՅԱՆ Սուսաննա (Հայաստան)

ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Էլ. փոստ՝ susannaia@mail.ru

**ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԱՆՏԱՎՈՐՆԵՐԸ. ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՉԱԼԱԼՅԱՆՑ (1810-1879)**

XIX դ. երկրորդ կեսը նշանավորվեց հայագիտական մի շարք ուղղությունների սկզբնավորմամբ ու ձևավորմամբ: Դրանցից էր նաև վիմագրությունը, որը հնարավորություն էր տալիս դարերի խորքերից վեր հանելու կարևոր տեղեկություններ լեռնաշխարհի իրական բնակիչների պատմության և մշակույթի մասին: Այդ առումով աննկարագրելի դեր ունեցան հայ հոգևորականները, որոնք ուսյալ և ժողովրդասեր լինելով՝ կարողացան հավաքել և մեզ փոխանցել հարուստ հայագիտական ժառանգություն: Նրանցից է Սարգիս արքեպիսկոպոս Չալալյանցը, որը մեր պատմության մեջ ներկայանում է որպես հոգևորական, բանասեր, հնէաբան, գրող և տեղագիր-նանապարհորդ:

Սարգիս Չալալյանցը սերում է նշանավոր Հասան-Չալալյան տոհմից, որն իշխում էր Արցախ աշխարհի Խաչեն գավառում: Ըստ ավանդության՝ Հասան-Չալալյանները սերում են Հայկ նահապետի որդի Միսակի թոռ Առանից: Այստեղից էլ միջնադարում առաջացել է Առանշահիկների տոհմը, որը պայքար է մղել Արցախում և Աղվանքում իշխանություն հաստատելու համար: Վերջապես IX դ. Առանշահիկները հաստատում են իրենց իշխանությունն Արցախում: Հետագա սերունդները շարունակել են ապրել և արարել Արցախում, սակայն սերունդները տարածվել են նաև Արևելյան Հայաստանում: Մերոնդներից Սարգիս Չալալյանցը ծնվել է 1810 թ. Վասպուրականի Արտազ գավառի Եղինդ գյուղում:

Պատանի Սարգիսը հինգ տարի սովորել է Կարապետ վարդապետի մոտ: 1828 թ. նա ձեռնադրվել է սարկավագ, 1830 թ.՝ կուսակրոն քահանա: Այդ տարիներին Շուշիում և Գանձասարում ակտիվ հոգևոր գործունեություն էր ծավալում փիլիսոփա Հովսեփ վարդապետը, որի մոտ էլ 1841 թ. Չալալյանցը շարունակել է կրթությունը:

1855 թ. Սարգիս Չալալյանցը ձեռնադրվել է եպիսկոպոս: 1857 թ. նրան շնորհվել է արքրության պատիվ և տիտղոս: 1857-1863 թթ. նա եղել է Վրաստանի և Իմերեթիայի թեմական առաջնորդը: Այդ տարիներին մեծ գործունեություն է ծավալել հայոց թեմում: 1861թ. նա ավարտին է հասցնում Թիֆլիսի վիրահայոց առաջնորդարանի շենքի կառուցումը, որի պատին թողել է արձանագրություն:

XIX դ. կեսերին Ռուսաստանի հայությունը տեղաբաշխված էր վեց թեմերում: Հոգևոր կյանքի վերահսկողությունը ռուսահայ հոգևոր կենտրոններում տրված էր Ս. Չալալյանցին, որը ստուգումներ անցկացնելու ընթացքում լուրջ բախումներ ունեցավ առաջադեմ հասարակական գործիչներ Ս. Նարանդյանի, Գ. Պատկանյանի, ապա Ներսիսյան դպրոցի տեսուչի հետ: Հանդարտեցնելու նպատակով Ամենայն հայոց Մատթեոս կաթողիկոսը սահմանափակեց նրա իրավունքները, որի պատճառով Չալալյանցը պաշտոնանկ է արվում և 1863-1865 թթ. մեկուսանում

Սանահինի վանքում: Վանահայր լինելու կարճ ժամանակահատվածում նա ուսումնասիրել է վանական համալիրի որմերին պահպանված 68 վիմագրերը:

1865-1876 թթ. Սարգիս Ջալալյանը նշանակվել է Ղարաբաղի թեմի առաջնորդ: Այդ տարիներին իր միջոցներով Շուշիում ընդարձակել է Ղարաբաղի թեմի առաջնորդ Բաղդասար Հասան-Ջալալյանի (1775-1854) կառուցած առաջնորդարանի շենքը: Իսկ 1877թ. ավարտում է Շուշիի Ս. Հռիփսիմեան օրիորդաց երկհարկանի դպրոցի շինարարությունը:

Հոգևոր գործունեությանը զուգահեռ՝ նա շրջել է Արցախի բնակավայրերում և գրառել վիմագրական նյութեր: Միայն Արցախից հավաքել է 142 արձանագրություն, որից մեզ չի հասել 48-ը: Այդ առումով Ս. Ջալալյանցի հիշատակությունները ստանում են սկզբնաղբյուրային նշանակություն: Նա հիշատակում է նաև 10 արձանագրություն Աղվանքից, 63-ը՝ Իջևանի տարածաշրջանից, որոնց մի մասը վերծանվել է թերություններով:

Հոգևոր գործունեությանը զուգահեռ՝ Ս. Ջալալյանը ճանապարհորդել է Արևելյան Հայաստանում, իր տպավորություններն ու հավաքած հայագիտական նյութերն ամփոփել է իր ուղեգրության մեջ, որը գրված է գրաբար, բաղկացած է երկու մասից: Ս. Ջալալյանը մահացել է 1879 թ. հոկտեմբերի 16-ին Թիֆլիսում, 60 տարեկան հասակում:

АДАМЯН Сусанна (Армения)

Институт археологии и этнографии НАН РА
e-mail: susannaiae@mail.ru

**ПОКРОВИТЕЛИ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ,
АРХИЕПИСКОП САРКИС ДЖАЛАЛЯНЦ (1810-1879)**

Вторая половина 19 века ознаменовалась зарождением и развитием ряда арменоведческих направлений. Одним из них стала эпиграфия, позволившая извлечь из глубины веков важные сведения об истории и культуре реальных обитателей высокогорья. В этом смысле неопределима роль армянского духовенства, которое, будучи образованным и патриотичным, смогло собрать и передать нам богатое арменологическое наследие. Один из них-архиепископ Саркис Джалалянц, который в нашей истории представляет себя филологом, археологом, писателем, топографом-путешественником.

Саркис Джалалянц происходит из знаменитой династии Гасан-Джалалянов, правившей в арцахской провинции Хачен. Согласно легенде, Гасан-Джалаляны происходят от Арана, внука Сисака, сына прародителя Айка. Отсюда в середине века возникла династия Араншахигов, которая боролась за власть в Арцахе и Агванке. Наконец в 19 веке Араншахики установили свою власть в Арцахе. Последующие поколения продолжали жить и творить в Арцахе, но распространились и в Восточной Армении.

Саркис Джалалянц родился в 1810 году в Васпуракане в Артазанской области в селе Егид. Молодой Саркис 5 лет учился у архимандрита Карапета. В 1828 году был посвящен в дьякона и в 1830 году стал безопасным священником. В те годы в Шуши и Гандзасаре действовал философ Овсеп Вардапет, у которого Саркис и продолжил своё образование. В 1855 году он стал епископом. 1857-1863 гг. он был епархиальным руководителем Грузии и Имерети. В те годы он был очень активен в Армянской епархии. В 1861 году он завершил строительство здания армянской епархии в Тбилиси, на стене которого оставил надпись.

В середине 19 века армяне России располагались в шести епархиях. Духовная жизнь армян в России была полностью под управлением Саркиса Джалалянца, у которого во время проверок были серьезные столкновения с такими прогрессивными общественными деятелями, как М. Налбандян, Г. Патканян, затем и инспектор школы Нерсисян. Чтобы успокоить обстановку, Католикос всех армян, Матфей, ограничил его права, из-за чего Джалалянц был отправлен в отставку и в 1863-1865 гг. изолировался в монастыре Санаин. За короткое время своего монашества, он изучил 68 литографий, хранившихся на стенах монастыря.

В 1865-1867 гг. Саркис был назначен главой Карабахской епархии. В эти годы на собственные средства он расширил здание епархии, построенное предводителем Карабахской епархии Багдасаром Гасан-Джалаляном (1775-1854) в Шуши, а в 1877 году закончил строительство двухэтажной женской школы святой Рипсиме. Параллельно со своей деятельностью, он объездил населённые пункты Арцаха и написал эпиграфические материалы. Только из Арцаха он собрал 142 записи, из которых 48 до нас не дошли. В этом смысле его воспоминания приобретают самобытное значение. Он упоминает 10 протоколов из Агванка, 63 из Иджеванского района, некоторые из которых были расшифрованы с ошибками. Параллельно он путешествовал по Восточной Армении, обобщая свои впечатления и собирая арменоведческие материалы в своем путевом дневнике, написанном на древнеармянском языке и состоящем из двух частей. Джалалянц умер в 1879 году 16 октября в возврате 60 лет в Тбилиси.

ADAMYAN Susanna (Armenia)

Institute of Archaeology and Ethnography NAS RA
e-mail: susannaiae@mail.ru

THE GRATEFULES OF THE ARMENIAN CHURCH: SARGIS ARCHBISHOP JALALYANTS (1810-1879)

The second half of the XIX century became remarkable for the beginning and development of a number of Armenological directions. One of them was the epigraphy, which made it possible to extract important information about the history and culture of the real inhabitants of the highlands from the depths of the centuries. In that sense, the

Armenian clergy had a remarkable role, who, being educated and patriotic, were able to gather and inherit us a rich Armenological heritage. One of them is Archbishop Sargis Jalalyants, who presents himself as a philologist, archaeologist, writer, topographer-traveler in our history.

Sargis Jalalyants is descended from the famous Hasan-Jalalyan dynasty, who ruled in the province of Khachen of Artsakh. According to the legend, the Hasan-Jalalyans are descended from Aran, the grandson of Sisak, who was the son of the ancestor Hayk. In the Middle Ages, from here, the Aranshahik dynasty emerged, which fought for power in Artsakh and Aghvank. Finally, in the IX century, the Aranshahiks established their power in Artsakh. Later, the generations continued to live in Artsakh, but the generations also spread in Eastern Armenia.

Sargis Jalalyants was born in 1810 in the village of Yeghind of Artaz province of Vaspurakan. Young Sargis studied with Archimandrite Karapet for five years. In 1828 he was ordained a deacon and in 1830 a celibate priest. During those years, the philosopher Hovsep priest was performing activities in Shushi and Gandzasar, where Jalalyants continued his education. In 1855 Sargis Jalalyants was ordained a bishop.

In 1857 he was awarded the title of kingdom's honor. In 1857-1863 he was the diocesan leader of Georgia and Imereti. During those years he carried out large activities in the Armenian Diocese. In 1861 Sargis completed the construction of the building of the Armenian Diocese in Tbilisi (Georgia), on the wall of which he left an inscription.

In the middle of the 19th century, the Armenians of Russia were located in six dioceses. The control of the spiritual life in the Russian-Armenian centers was given to S. Jalalyants, who had serious clashes with progressive public figures M. Nalbandyan, G. Patkanyan, then with the inspector of Nersisyan school.

In order to calm down, Catholicos of All Armenians Matthew restricted his rights, due to which Jalalyants was dismissed and during 1863-1865 was isolated in Sanahin Monastery. During the short time of being monk, he studied the 68 lithographs preserved on the walls of the monastery.

In 1865-1876 Sargis Jalalyants was appointed Primate of Karabakh Diocese. During those years, with his own funds, he expanded the building of the diocese built by the Primate of Karabakh Diocese Baghdasar Hasan-Jalalyan (1775-1854) in Shushi. And in 1877 he finished the construction of St. Hripsime ladies' two - storey school. In parallel he toured the settlements of Artsakh and wrote epigraphic materials. Only from Artsakh he collected 142 records, 48 of which did not reach us.

In that sense, S. Jalalyants's memoirs acquire a primary importance. He mentions 10 epigraphs from Aghvank, 63 from Ijevan region, some of which were decoded with shortcomings. Sargis Jalalyants died on October 16 1879 in Tbilisi (Georgia) at the age of 60.

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Տիգրան (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ
Էլ. փոստ՝ mtigran2002@yahoo.com

**ՍԱՐԱՎԱՆԻ (ԹԵՐՓ, ՎԱՅՈՑ ԶՈՐ) ՀՆԱԳՈՒՅՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ԽՈՅԱԿԵՐՊ ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎԵՐԱՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ**

1928թ. իր աշխատության մեջ մեծանուն հայ գիտնական Գարեգին Հովսեփյանը նկարագրում է Թերփի (ներկայիս՝ Սարավան) գյուղի (:ՉԺԳ 1264թ. տասնավորն ու միավորը՝ կասկածելի) խոյակերպ տապանաքարը, որը Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնի հայկական ամենահին խոյակերպ հուշարձանն է:

Գյուղը մինչև 1988 թ. բնակեցված է եղել է ադրբեջանցիներով, այժմ գյուղում ապրում են Ադրբեջանից վերաբնակեցված հայերը:

Տարիներ առաջ մենք ուղևորվեցինք Սարավան՝ այս խոյը գտնելու նպատակով, սակայն ոչինչ հնարավոր չեղավ հայտնաբերել, իսկ բնակիչները անտեղյակ էին դրա գոյության մասին:

2022թ. մայիսին ֆեյսբուք սոցիալական կայքում բժիշկ Լևոն Մանասյանի մեկնաբանության շնորհիվ (նա պատահաբար տեսել և լուսանկարել էր խոյը) հնարավոր եղավ այն հայտնաբերել խիստ վնասված վիճակում: Ներկայումս մենք ջանքեր ենք գործադրում հուշարձանը փրկելու ուղղությամբ:

Չեկուցման նպատակն է ներկայացնել այդ մեծարժեք խոյատապանը, ինչպես նաև դիտարկել ՀՀ տարածքում առկա հայկական և մուսուլմանական խոյակերպ տապանաքարերի առանձնահատկությունները:

МИКАЕЛЯН Тигран (Армения)

Институт востоковедения НАН РА
e-mail: mtigran2002@yahoo.com

**ПЕРЕОБНАРУЖЕНИЕ ДРЕВНЕЙШЕГО АРМЯНСКОГО
НАДГРОБИЯ В ВИДЕ ИЗВАЯНИЯ ОВНА В СЕЛЕ САРАВАН
(ТЕРП, ВАЙОЦ ДЗОР)**

В своей работе 1928 года выдающийся армянский ученый Гарегин Овсепян описывает надгробие в виде изваяния овна в селе Терп (современный Сараван) (:ՉԺԳ датированный 1264 г. десятичное и единичное числа сомнительны), являющийся древнейшим доселе известным армянским подобным памятником на территории Республики Армения.

Село до 1988 г. было неселено азербайджанцами, в настоящее время там проживают армяне-переселенцы из Азербайджана.

Несколько лет назад мы предприняли поездку в Сараван в целью обнаружить его, однако этого сделать не удалось, а сельчане не подозревали о его существовании.

В мае 2022 г. благодаря комментарию врача Левона Манасяна в социальной сети фейсбук, который случайно увидел и сфотографировал изваяние, удалось обнаружить его в сильно поврежденном состоянии. В настоящее время мы предпринимаем усилия по спасению памятника.

Цель доклада – представить данный памятник в виде изваяния овна, имеющий высокую ценность, а также особенности армянских и мусульманских изваяний в виде овна на территории Республики Армения.

MIKAYELYAN Tigran (Armenia)

Institute of Oriental Studies NAS RA

e-mail: mtigran2002@yahoo.com

REDISCOVERY OF THE OLDEST ARMENIAN RAM-SHAPED TOMBSTONE IN VILLAGE OF SARAVAN (TERP, VAYOTS DZOR)

The renounced Armenian scientist Garegin Hovsepyan in his work published in 1928 describes a ram-shaped tombstone in the village of Terp (current Saravan) dated (:ՉԺԳ 1264 of the Armenian era, decimal and singular numbers are doubtful) that is the oldest known Armenian monument of the kind so far on the territory of the Republic of Armenia.

The village was inhabited by Azerbaijanis until 1988, while the Armenian resettlers from Azerbaijan reside there.

Years ago we made a travel to Saravan to find out the ram, however nothing was possible to discover and the villagers had no idea about the existence of the monument.

In May 2022 due to a comment made by doctor Levon Manasyan on Facebook, who saw the ram by chance and took its picture, it was possible to discover it in a very damaged state. Currently we are making efforts to save the monument.

The report's purpose is to present this highly valuable Armenian monument as well as to observe the peculiarities of the Armenian and Muslim ram-shaped tombstones on the territory of the Republic of Armenia.

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ Աշոտ (Հայաստան)

ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

էլ. փոստ՝ ashot.manucharyan.1959@mail.ru

ՎԱՆԱՆԴԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅՈՒՆԸ (IV-IX ԳԳ.)

Վանանդի եպիսկոպոսությունը Հայաստանի հնագույն 12/13 թեմերից էր, որը հաստատել է Ս. Գրիգոր Լուսավորիչը IV դ. սկզբին: Որոշ ժամանակ անց Գրիգոր Լուսավորչի թեմական երկրորդ բաժանմամբ այն Հայաստանի 30 (36)

գլխավոր եպիսկոպոսությունների շարքում 15-րդն է՝ այդպիսով զբաղեցնելով կենտրոնական դիրք:

Վանանդի եպիսկոպոսությունը վաղ միջնադարում վճռորոշ դեր է խաղացել երկրի ազգային-եկեղեցական գործերում:

V-VIII դդ. հայկական մատենագրական աղբյուրներում հիշատակվում են Վանանդի թեմի 12 եպիսկոպոսներ, որոնցից 5-ը դարձել է Հայոց կաթողիկոս:

МАНУЧАРЯН Ашот (Армения)

Институт археологии и этнографии НАН РА
e-mail: ashot.manucharyan.1959@mail.ru

ЕПИСКОПАЛЬНАЯ ЕПАРХИЯ ВАНАНДА (IV-IX ВВ.)

Епископство Вананда было одной из древних 12/13 епархий Армении, которые были подтверждены Св. Григорием Просветителем в начале IV века. Спустя некоторое время, со вторым епархиальным отделением Св. Григория Просветителя, она стала 15-й среди 30 (36) основных епархий Армении, занимая центральное место.

Епископство Вананда играло решающую роль в национально-церковных делах страны в раннем средневековье.

В V-VIII вв. в армянских историографических источниках упоминаются 12 епископов Ванандской епархии, 5 из которых стали Армянскими католикосами.

MANUCHARYAN Ashot (Armenia)

Institute of Archaeology and Ethnography NAS RA
e-mail: ashot.manucharyan.1959@mail.ru

EPISCOPAL DIOCESE OF WANAND (IV-IX CC.)

The Bishopric of Vanand was one of the ancient 12/13 dioceses of Armenia, which were confirmed by St. Gregory the Illuminator at the beginning of the 4th century. Some time later, with the second diocesan branch of St. Gregory the Illuminator, it became the 15th among the 30 (36) major dioceses of Armenia, occupying a central place.

The bishopric of Vanand played a decisive role in the national church affairs of the country in the early Middle Ages.

In the V-VIII centuries Armenian historiographic sources mention 12 bishops of the Vanand diocese, 5 of whom became Armenian Catholicos.

ՄԵԴՎԵԴԵՎԱ Մարիա (Ռուսաստան)

Նյութական մշակույթի պատմության ինստիտուտ ՌԳԱ
e-mail: marriyam@mail.ru

**«ԿՀՀ-Ի ԳՈՐԾԸ Ն. ՄԱՌԻ ՌՈՒՄԱՀԱՅԱՍՏԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ
ՄԱՍԻՆ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ» - 1892
Թ. ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԳԻՏԱԿԱՆ
ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՉ**

1892 թ. Սանկտ Պետերբուրգի համալսարանի դոցենտ Ն. Մառն առաջին անգամ Կայսերական հնագիտական հանձնաժողովի (ԿՀՀ) հանձնարարությամբ սկսեց ուսումնասիրել Հայաստանի հնությունները: Ուղևորությունը նշանավորեց գիտնականի երկարամյա աշխատանքի սկիզբը Անիում և հարակից տարածքներում: Պեղումները տևեցին մոտ մեկ ամիս և ունեցան կարևոր արդյունքներ: Բացի այդ՝ Մառը մի շարք հետախուզական արշավանքներ է կատարել Անիի շրջակայքում՝ հարավային ուղղությամբ մինչև Ալեքսանդրապոլ քաղաք, հյուսիսային ուղղությամբ՝ մինչև Արաքս գետը՝ ուսումնասիրելով եկեղեցական ճարտարապետության միջնադարյան հուշարձանները, որոնցից շատերն անձամբ ուսումնասիրեց և լուսանկարեց, մի քանիսի մասին տեղեկություններ հավաքեց:

Մառը 1892 թ. ԿՀՀ-ին է տրամադրել հետազոտության արդյունքները՝ մանրամասն ձեռագիր օրագրեր և մի քանի հարյուր բարձրորակ լուսանկարներ, որոնք արվել են լուսանկարիչ Փափագյանի հետ: Այս բոլոր նյութերը պահվում են ՌԳԱ ՆՄՊԻ-ի արխիվում՝ ԿՀՀ հավաքածուում: Օրագրերը պարունակում են մանրամասն տեղեկություններ պեղումների, ճարտարապետական հուշարձանների, գտածոների նկարագրությունների, արշավախմբի կենցաղային ու կազմակերպչական դժվարությունների և ազգագրական տեղեկությունների մասին: Օրագրի ձեռագիրը մի քանի անգամ պատրաստվեց տպագրության, սակայն այդպես էլ չհրատարակվեց, ինչպես նաև անգին լուսանկարների հավաքածուն: Նրանք Անիի ուսումնասիրությունների մասին 1934թ. Մառի վերջնական մենագրության մեջ նույնպես չեն ներառվել, իսկ հետագայում միայն առանձին փաստաթղթեր են տպագրվել տարբեր հոդվածներում: Փաստագրական այս աղբյուրն ամբողջությամբ գիտական շրջանառության մեջ ներառելը, անկասկած, ժամանակակից գիտության հրատապ խնդիրն է:

Ուսումնասիրությունն իրականացվել է Ռուսաստանի գիտական հիմնադրամի դրամաշնորհով (նախագիծ՝ թիվ 22-18-00354):

МЕДВЕДЕВА Мария (Россия)

Институт истории материальной культуры РАН

e-mail: marriyam@mail.ru

**"ДЕЛО ИАК О КОМАНДИРОВАНИИ Н.Я. МАРРА В
РУССКУЮ АРМЕНИЮ ДЛЯ ПРОИЗВОДСТВА ТАМ
АРХЕОЛОГИЧЕСКИХ РОЗЫСКНИЙ": ВОЗВРАЩЕНИЕ В
НАУЧНЫЙ ОБОРОТ ДОКУМЕНТАЦИИ ИЗ ПОЕЗДКИ 1892 Г.**

Նույն սկզբունքով գաղթականներին տրամադրված ԿՀԲԸ-ի օգնության մասին են վկայում Հայաստանի ազգային արխիվի համապատասխան ֆոնդերում պահվող կազմակերպության տարեկան տեղեկագրերը, լիազորների հաշվետվությունները, ինչպես նաև ժամանակի պարբերական մամուլը:

АДАМЯН Нинета (Армения)

Институт истории НАН РА
e-mail: ninettadamyam@gmail.com

**ДЕЯТЕЛЬНОСТЬ КАВКАЗСКОГО АРМЯНСКОГО
БЛАГОТВОРИТЕЛЬНОГО ОБЩЕСТВА В АТРОПАТЕНЕ
(конец 1914 г. – начало 1915 г.)**

В начале Первой мировой войны неудачи русской армии на Кавказском фронте вызвали большую панику среди христианского населения Атропатены и Западной Армении, вынудив десятки тысяч людей перебраться в более безопасные районы Кавказа.

В годы войны было создано множество общественных организаций для оказания различной помощи беженцам. Наиболее активными среди них были Кавказское Армянское благотворительное общество (далее - КАБО) и Армянский центральный комитет (далее - АЦК). Гуманитарную помощь беженцам оказывали также многие зарубежные общественные организации.

Для определения размера помощи (денег, продуктов питания и т.д.) и организации ее распределения эти благотворительные организации посылали своих представителей в Ардаган, Ардануч, Олти, Сарыкамыш, Джульфу, Маку и другие районы. Например, в 1914 г. в Джульфу был направлен представитель АЦК Александр Шарафян. Его отчеты содержат подробную информацию о беженцах в районах Тебриз, Салмаст и Урмия. Согласно А. Шарафяну, в Джульфе было около 44.000 беженцев, из них 24.000 армян, эмигрировавших из Тебриза (3.000 человек), 2.000 – из Хоя, 15.000 – из Салмаста, 4.000 – из Урмии, а остальные 20.000 были ассирийцами и греками.

О подобном принципе оказания помощи беженцам КАБО свидетельствуют ежегодные бюллетени организации, хранящиеся в соответствующих фондах Национального архива Армении, отчеты уполномоченных, а также периодическая печать того времени.

ADAMYAN Nineta (Armenia)

Institute of History of NAS RA
e-mail: ninettadamyan@gmail.com

**THE ACTIVITY OF THE ARMENIAN BENEVOLENT SOCIETY
OF THE CAUCASUS IN ATROPATENE
(at the end of 1914 until the beginning of 1915)**

In the first days of World War the failure of the Russian army at the Caucasian front spread great panic among the Christian population of Atropatene and Western Armenia, making tens of thousands go to safer regions of Transcaucasia.

In the years of the war various social organizations were created to provide the refugees with wide-ranging aid. The Armenian Benevolent Society of the Caucasus (henceforth ABSC) and the Central Armenian Committee (henceforth CAC) were the more actively operating organizations among them. A great number of foreign, social organizations also provided the refugees with humanitarian aid.

These organizations sent their representatives to Ardahan, Ardanuch, Olti, Sarikamish, Julfa, Maku and other regions in order to estimate the scale of the aid needed (money and provisions to be allotted). In his last reports of 1914 Alexander Sharafian, a special envoy sent to Julfa by CAC, introduced detailed information on the state of refugees in the regions of Tabriz, Salmast and Urmia. Accordingly, there were about 44000 refugees of whom 24000 were Armenians. 3000 Armenians came from Tabriz, 2.000 - from Khoy, 15.000 were from Salmast and 4.000 - from Urmia. The remaining 20.000 refugees were of Greek and Assyrian origin.

Similarly, the annual records of the ABSC, the envoys' accounts and the periodicals of the time preserved at the corresponding reserves of the National Archives of Armenia evidence the assistance that the Armenian Benevolent Society of the Caucasus gave to the refugees.

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՄԺԻԹԱՐ (Հայաստան)

Երևանի պետական համալսարան
Էլ. փոստ՝ m.gabrielyan@ysu.am

ՄԽՈՅԱՆ ՀԱՅԿ (Հայաստան)

Երևանի պետական համալսարան
Էլ. փոստ՝ mxoyanhayk@ysu.am

**ՀԱՅ ԵՎ ԹՈՒՐԲ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ
ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ 1918-1920
Թ.Թ. ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ¹**

Առաջին համաշխարհային պատերազմը, 1914-1916 թթ. Հայոց ցեղասպանությունը, 1917թ. Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխությունը, ապա նաև Հոկտեմբերյան հեղաշրջումը նոր իրողություններ ստեղծեցին Արևելյան և Արևմտան Հայաստաններում բնակվող հայության համար: 1918 թ. տարածաշրջանում առաջացած աշխարհաքաղաքական տեղաշարժերի, մեծ ճիգերի ու կենտրոնացման շնորհիվ հայությունը ի վերջո կարողացավ հայրենիքի մի հատվածում վերստին հոչակել անկախություն: Այս պայմաններում անհրաժեշտ էր նոր լուծումներ գտնել առաջացած բազմապիսի մարտահրավերները հաղթահարելու համար:

Այդպիսի մարտահրավերներից էր հայ և թուրք ժողովուրդների փոխհարաբերությունների հարցը: Հայության տարբեր շերտեր երբեմն տարբեր կերպ էին պատկերացնում թուրքերի հետ հարաբերվելու ու շփումներ կառուցելու խնդիրները: Վիճակն ավելի էր բարդանում հատկապես Թուրքիայում արագ փոփոխվող իրողությունների պարագայում, երբ Հայաստանի իշխանությունները ստիպված էին փոխհարաբերվել թուրքական տարբեր կառավարական շրջանակների և հաճախ տարբեր մոտեցումներ ունեցող իշխանությունների հետ: Սակայն կարևոր է ոչ միայն երկու կառավարությունների փոխհարաբերությունները դիտարկելը, այլև ուսումնասիրության առարկա դարձնել երկու ժողովուրդների հարաբերությունները և նույն տարածաշրջանում ապրելու նրանց տեսլականը: Այս խնդիրների վերաբերյալ առկա են մեծաթիվ գիտական հրապարակումներ (Ա. Կարինյանը, Լ. Խուրշուդյանը, Ա. Հակոբյանը, Ռ. Հովհաննիսյանը, Հ. Սիմոնյանը): Երկու ժողովուրդների հարաբերությունների խնդիրներին են անդրադարձել նաև Հայաստանի առաջին հանրապետության մի շարք գործիչներ, որոնք մենագրություններում, հոդվածներում մշտապես անդրադարձել են այդ հարցերին: Այդ տարիներին լույս տեսած տասնյակ հայկական պարբերականներ ևս իրենց ուշադրության կենտրոնում են պահել հարևան երկու ժողովուրդների խնդիրները: Այս տեսանկյունից կարևոր է ինչպես արևելահայ ու արևմտահայ իրականության մեջ լույս տեսնող պարբերականները, այնպես էլ սփյուռքում հրատարակվող թերթերն ու ամսագրերը: Այս զեկուցման նպատակն է ներկայացնել այդ պարբերականների անդրադարձները

¹ Զեկուցումը ներկայացվում է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող 21T-6A269 ծածկագրով թեմայի շրջանակներում:

երկու ժողովուրդների փոխհարաբերություններին, դրանց անցած ուղուն և հարաբերությունների զարգացման միտումներին: Հետազոտության համար հիմք են հանդիսացել «Մշակ» (Թիֆլիս), «Ազգ» (Բոստոն), «Արագած» (Կ. Պոլիս), «Արև» (Ալեքսանդրիա, Կահիրե»), «Արձագանք Փարիզի» (Փարիզ), «Երիտասարդ Հայաստան» (Չիկագո), «Ժամանակ» (Կ. Պոլիս), «Ժողովուրդ» (Երևան), «Ժողովուրդ» (Կ. Պոլիս) և այլ պարբերականներ: Չեկուցման մեջ քննարկվելու են հասարակական-քաղաքական շրջանակների պատկերացումները խնդրի վերաբերյալ, ներկայացվելու են տարբեր շերտերի հակասությունները երկկողմ փոխհարաբերությունների կարգավորման ուղիների և երկու ժողովուրդների գոյակցության տեսլականի վերաբերյալ:

ГАБРИЕЛЯН Мхитар (Армения)

Ереванский государственный университет

e-mail: m.gabrielyan@ysu.am

МХОЯН Айк (Армения)

Ереванский государственный университет

e-mail: mxoynhayk@ysu.am

ПОДНЯТИЕ ВОПРОСА ОБ ОТНОШЕНИЯХ МЕЖДУ АРМЯНСКИМ И ТУРЕЦКИМ НАРОДАМИ В 1918-1920 гг. В АРМЯНСКОЙ ПРЕССЕ

Первая мировая война, Геноцид армян 1914-1916 гг., революция 1917 г. в России, а затем Октябрьский переворот создали новые реалии для проживающих в Восточной Армении армян. В 1918 году благодаря геополитическим сдвигам в регионе, а также большим усилиям армяне, наконец, смогли вновь провозгласить независимость на части своей родины. В этих условиях необходимо было найти новые решения для преодоления различных вызовов.

Одним из таких вызовов был вопрос отношений между армянским и турецким народами. Разные слои армянского общества иногда имели разные представления об отношениях и налаживании контактов с турками. Ситуация особенно усугублялась в связи с быстро меняющимися реалиями в Турции, когда властям Армении приходилось взаимодействовать с властями различных турецких правительственных кругов, зачастую с разными подходами. Однако важно не только наблюдать за отношениями двух правительств, но и изучать отношения двух народов, их видение жизни в одном регионе. По этим вопросам имеются многочисленные научные публикации (А. Каринян, Л. Хуршудян, А. Акопян, Р. Ованнисян, Г. Симонян).

Вопросы взаимоотношений двух народов затрагивались и рядом деятелей Первой Республики Армения, которые всегда ссылались на эти вопросы в монографиях и статьях. Десятки армянских периодических изданий, издававшихся в те годы, были посвящены проблемам двух соседних народов. С этой точки зрения

важны как периодические издания, издаваемые в восточно- и западноармянской действительности, так и газеты и журналы, издаваемые в диаспоре. Цель настоящего доклада – представить ссылки этих периодических изданий на отношения между двумя народами, их прошлое и тенденции в развитии отношений.

В основу исследования легли публикации «Мшак» (Тбилиси), «Азг» (Бостон), «Арагац» (Константинополь), «Арев» (Александрия, Каир), «Ардзаганк Парижа» (Париж), «Молодая Армения» (Чикаго), «Жаманак» (Константинополь), «Жоговурд» (Ереван), «Жоговурд» (Константинополь), а также статьи из других периодических изданий. В докладе будут обсуждены взгляды общественно-политических кругов на проблему, представлены противоречия разных слоев общества по поводу путей нормализации двусторонних отношений, видение сосуществования двух народов.

GABRIELIAN Mkhitar (Armenia)

Yerevan State University
e-mail: m.gabrielyan@ysu.am

МКHOYAN Hayk (Armenia)

Yerevan State University
e-mail: mxoyanhayk@ysu.am

RAISING THE ISSUE OF RELATIONS BETWEEN THE ARMENIAN AND TURKISH PEOPLES IN 1918-1920 IN THE ARMENIAN PRESS

World War I, the Armenian Genocide in 1914-1916, 1917 Revolution in Russia and then the October coup created new realities for the Armenians living in Eastern Armenia. In 1918, thanks to geopolitical shifts in the region, as well as great efforts, the Armenians were finally able to re-declare independence in some part of their motherland. In these conditions, it was necessary to find new solutions to overcome the various challenges.

One of such challenges was the issue of the relations between the Armenian and Turkish peoples. Different layers of the Armenian society sometimes had different ideas about the relations and establishing contacts with Turks. The situation was aggravated especially in the case of rapidly changing realities in Turkey, when the Armenian authorities had to interact with the authorities of different Turkish government circles, often with different approaches. However, it is important not only to observe the relations between the two governments, but also to study the relations between the two peoples, their vision of living in the same region. There are numerous scientific publications on these issues (A. Karinyan, L. Khurshudyan, A. Hakobyan, R. Hovhannisyanyan, H. Simonyan).

The issues of the relations between the two peoples were also touched upon by a number of figures of the First Republic of Armenia, who always referred to those issues

in monographs and articles. Dozens of Armenian periodicals, published in those years, focused on the problems of the two neighboring peoples. From this point of view, both the periodicals published in Eastern and Western Armenian reality, as well as the newspapers and journals published in the Diaspora are important. The purpose of this report is to present the references of these periodicals to the relations between the two peoples, their past and tendencies in the development of relations.

The study was based on “Mshak” (Tbilisi), “Azg” (Boston), “Aragats” (Constantinople), “Arev” (Alexandria, Cairo), “Ardzagank of Paris” (Paris), “Young Armenia” (Chicago), “Zhamanak” (Constantinople), “Zhoghovurd” (Yerevan), “Zhoghovurd” (Constantinople) and other periodicals. The report will discuss the views of social and political circles on the issue and present the contradictions of different layers of the society on the ways of normalization of bilateral relations, the vision of coexistence of the two peoples.

ԿԱՎՐԵԼԻՇՎԻԼԻ ՌՈՒԿԻՆ (Վրաստան)

Սամցխե-Չավախեթիի պետական հմայսարան
Էլ. փոստ՝ roinkav@gmail.com

**ՀԱՅ-ԹՈՒՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԸՍՏ ՎՐԱՑԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ
ՆՅՈՒԹԵՐԻ (1920թ.)**

Սևրի հաշտության պայմանագիրը անընդունելի էր Անկարայի կառավարության համար: Այդ իսկ պատճառով Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանային հակամարտությունը վերածվեց պատերազմի: Հայաստանը 1920 թվականի սեպտեմբերի 24-ին Թուրքիային պատերազմ հայտարարեց: Թուրքիան պաշտոնապես պատերազմ չի հայտարարել Հայաստանին, բայց 1920 թվականի սեպտեմբերի 28-ին թուրքական բանակը հատեց Արդաշեն-Յուսուֆեյի-Օլտիսի-Բայազետ սահմանը և պատերազմի մեջ մտավ հայկական գործի դեմ: Հայկական գործը այս պատերազմում պարտություն կրեց, և 1920 թվականի դեկտեմբերի 2-ին Գյումրի քաղաքում ստորագրվեց պայմանագիր:

Վրացական թերթերը՝ «Էրթորա», «Գրուզիա», «Վրաստանի Հանրապետություն», հիմնականում Հայոց բանակի գերագույն գլխավոր հրամանատարի տարածած տեղեկատվության վրա են հիմնվում: Նրանցում խոսվում են թուրքական գործերի կողմից ռազմական գործողության սկսման ժամկետների ու ուղղությունների մասին:

Այստեղ տեղադրված է նաև Վրաստանում հավատարմագրված Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության տեղեկատվությունն ընթացիկ ռազմական

գործողությունների մասին: Դրանք պարունակում են տեղեկատվություն Հայաստանի Հանրապետությունում սկսված զորահավաքի, դասալքության պատժի, երկաթուղիներում մտցված ռազմական կանոնների մասին:

Վրացական թերթերը, սեփական տեղեկություններից բացի, հրապարակել են արտասահմանյան, այդ թվում՝ հայկական մամուլից ստացված տեղեկություններ, որոնք անմիջական առնչություն ունեին ընթացիկ իրադարձությունների հետ: Նշանակալից է նաև այն, որ, վրացական թերթերում լուսաբանված են ազգությամբ հայ՝ Վրաստանի քաղաքացիների կողմից հայերին սատարող ցույցերը Թբիլիսիում: Ըստ երևույթին, ցուցարարները հավաքվել են Վանքի տանարի բակում, ապա երթով շարժվել դեպի Վրաստանում հավատարմագրված տարբեր երկրների դեսպանատներ՝ բողոքելու Թուրքիայի ռազմական գործողությունների դեմ:

Խորհրդային Ռուսաստանի և քենալական Թուրքիայի միջև համագործակցությունը դիտվում է որպես Հայաստանի խորհրդային-ռուսական կառավարության վերջնագիր, որով խորհրդային կառավարությունը պահանջում էր, որ Հայաստանը հրաժարվի Սևրի պայմանագրից և բոլշևիկյան զորքերը մտցնի իրենց տարածք՝ միանալու Անկարայի կառավարության զորքերին:

Չեկոցման նպատակն է ընթերցողներին ծանոթացնել այն ժամանակաշրջանի հայ-թուրքական պատերազմի մասին վրացական մամուլում պահպանված տեղեկատվությանը և համապատասխան պատմական աղբյուրների ու գրականության հետ ներկայացնել ընթացիկ իրադարձությունների պատկերը:

КАВРЕЛИШВИЛИ Роин (Грузия)

Самцхе-Джавахетский государственный университет

e-mail: roinkav@gmail.com

АРМЯНО-ТУРЕЦКАЯ ВОЙНА ПО МАТЕРИАЛАМ ГРУЗИНСКОЙ ПРЕССЫ (1920 г.)

Условия Севрского перемирия были неприемлемы для правительства Анкары. Поэтому, пограничный конфликт между Арменией и Турцией перерос в войну. Армения в 24 сентября 1920 г. объявила войну Турции. Турция официально не объявляла войну Армении, но 28 сентября 1920 года турецкая армия перешла линию Ардашен-Юсуфели-Олтиси-Баязет и вступила в войну с армянскими войсками. Армянские военные потерпели поражение в этой войне и 2 декабря 1920 года в городе Гюмри было подписано перемирие.

Грузинские газеты - "Эртоба", "Грузия", "Республика Грузия" в основном опираются на информацию, распространяемую главнокомандующим Армянской армией. В них говорится о датах и направлениях начала военной операции турецкими войсками. Здесь же размещена информация аккредитованной в Грузии дипломатической миссии Армении о текущих боевых действиях. В них содержится

информация о начатой в Республике Армения военной мобилизации, наказании за дезертирство, введённого военного положения на железных дорогах.

Помимо собственной информации, грузинские газеты публиковали информацию, полученную из иностранной прессы, в том числе армянской, которая имела непосредственное отношение к текущим событиям. Следует также отметить, что грузинские газеты освещают митинги в Тбилиси в поддержку Армении со стороны граждан Грузии армянской национальности. Судя по всему, протестующие собирались во дворе храма Ванк, а затем направлялись к посольствам различных государств, аккредитованных в Грузии, в знак протеста против турецких военных действий.

Сотрудничество между Советской Россией и кемалистской Турцией рассматривается как ультиматум советско-российского правительства Армении, в котором советское правительство потребовало от Армении отказаться от Севрского договора и провести большевистские войска на свою территорию, чтобы присоединиться к войскам правительства Анкары.

Цель статьи – ознакомить читателей с информацией грузинской прессы того периода об армяно-турецкой войне и представить картину текущих событий в сочетании с соответствующими историческими источниками и литературой.

KAVRELISHVILI Roin (Georgia)

Samtskhe-Javakheti State University
e-mail: roinkav@gmail.com

THE COVERAGE OF THE ARMENO-TURKISH WAR IN THE GEORGIAN PRESS CONTEMPORARY WITH THE EVENT (1920)

The terms of the Treaty of Sevres were unacceptable for authorities in Ankara. Consequently, the border conflict between Armenia and Turkey grew into a war. Armenia declared war on Turkey on September 24th, 1920. This was not done on official level, but on September 28th, 1920 Turkish army crossed Ardashen-Iusupheli-Oltisi-Baiazet line and was engaged with the Armenian troops in the war. Finally, the Armenian military forces suffered a defeat and on December 2nd, 1920 a peace treaty was signed in the city of Gyumri.

Georgian newspapers such as Ertoba (the Unity), Sakartvelo (Georgia) and Sakartvelos Respublika (The Republic of Georgia) use the information, disseminated by the high command of the Armenian army, as their main source. This is the news about the dates of starting the military operations by the Turkish troops and the directions of those actions. Herewith, there are reports on the ongoing military operations provided by the diplomatic mission accredited in Georgia. They contain information about the military mobilization in the Republic of Armenia, the punishment for deserting from the army and also about the rules which were introduced to be operated throughout the railway system.

Apart from the information obtained on its own, the Georgian press published reports received from the foreign media too and among them those from the Armenian one as well which was in direct touch with the ongoing developments. It is also worth mentioning that the Georgian newspapers cover the demonstrations supporting Armenia held in Tbilisi by the ethnically Armenian citizens of Georgia. It is clear from this coverage that the demonstrators, in order to protest against the Turkish military actions, gathered in the yard of Vank Church and then they headed towards embassies of different states accredited in Georgia.

An ultimatum of the Soviet government addressing Armenia, by which the Soviet side claimed that Armenia should renounce the terms of the Treaty of Sevres and allow the Bolshevik troops to pass through its territory and give them the way to join the army of Ankara authorities, is assessed as a collaboration between Soviet Russia and Kemalist Turkey.

The purpose of this article is to introduce readers to the information about the Armeno-Turkish war documented in the Georgian press, contemporary with those developments, and to show the ongoing events with the comparison of corresponding historical sources and literature.

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Կարինե (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Էլ.փոստ՝ karineal@mail.ru

**ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՎ ՊԱՏԵՐԱԶՄԵԼՈՒ ԹՈՒՐԲԱԿԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 1918-1921թթ.**

Հայոց վերջին՝ գրեթե նույնությամբ կրկնվող 100 տարվա պատմությունը, նոր մարտահրավերների առաջ կանգնեցնելով համայն հայությանը, վկայում է, որ այն դեռ լուրջ գիտական ուսումնասիրությունների և հանրայնացման կարիք ունի: Խոսքը վերաբերում է մասնավորապես հայ-թուրքական հարաբերությունների և թուրքական դիվանագիտական զինանոցում մշակված և գործարկված ռազմավարությունների ուսումնասիրություններին:

Մեր առաջ նպատակ ենք դրել սույն հոդվածով բացահայտելու թուրքական դիվանագիտական զինանոցում ուրույն տեղ զբաղեցրած, թուրքերի ռազմական և դիվանագիտական հաջողություններն ապահոված «խաղաղության օրակարգով» պատերազմելու ռազմավարության էությունը:

«Խաղաղության օրակարգը», որ թուրքերն առաջ են քաշել սովորաբար պատերազմական հանցագործություններից հետո, նրանց հնարավորություն է

ընձեռել ոչ միայն խուսափելու պատասխանատվությունից, այլև բանակցելով միաժամանակ շարունակելու պատերազմը:

Խաղաղության օրակարգով պատերազմելու ռազմավարության էության բացահայտման համար կարևոր աղբյուր ենք համարել 1918-1921թթ. թուրքերի վարած պատերազմական հանցագործություններով ուղեկցվող պատերազմների և կնքած պայմանագրերի ուսումնասիրությունները: Խոսքը վերաբերում է մասնավորապես Բրեստ-Լիտովսկի, Բաթումի, Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերին, որոնց կնքման նախորդող բանակցություններում մշակվել և կիրառվել է վերը նշված ռազմավարությունը:

Ի դեպ, խաղաղության օրակարգով պատերազմելու ռազմավարությունը այսօր էլ հաջողությամբ գործարկվում է հայոց պետականության և ժողովրդի դեմ: Հետևաբար մեր առաջ խնդիր ենք դրել ցույց տալ «խաղաղության դարաշրջանի» և հայոց ցեղասպանության անտեսանելի կապերը և հիմնավորել թուրքական խաղաղությունից պաշտպանվելու անհրաժեշտությունը:

АЛЕКСАНИЯ Карине (Армения)

Ширакский центр арменоведческих исследований НАН РА

e-mail: karineal@mail.ru

ТУРЕЦКАЯ СТРАТЕГИЯ ВОЙНЫ С ПОВЕСТКОЙ МИРА 1918-1921гг.

Послевоенные события происшедшие в Армении, еще раз свидетельствуют о том, что Турция с удивительной точностью повторяет кровавую реальность 100 летней давности и использует свой арсенал дипломатических средств и методов для достижения целей в мировом обществе.

Исходя из вышесказанного, мы считаем целью нашего исследования: выявить и обосновать те методы и средства турецкой дипломатии, с помощью которых она обеспечивает себе бесспорное преимущество в деле мирного урегулирования военных конфликтов и неоспоримый успех в стратегии “мирной повестки”.

В докладе мы раскроем ведущую роль “мирной повестки” Турции в деле урегулирования военного конфликта и достижения успеха в переговорах на вышеуказанных дипломатических переговорах, одновременно ведя захватческую и кровополитную войну.

Следует особо отметить, что даже в момент подписания договоров о прекращении огня, они не соблюдали данный акт подписания на государственном уровне и нарушали согласованность.

Создавалось впечатление, что подписанные соглашения не имеют никакого значения и не мешают Турции вести открытую войну, нарушая все договоренности.

Важно указать, что Турция и сейчас, применяет, стратегию “мирной повестки” на разных уровнях дипломатических переговоров и с Россией и с Арменией.

Следовательно перед нами стоит важнейшая задача: показать невидимые связи между Геноцидом армянского народа и ложной турецкой стратегией “мирной повестки”, обосновать необходимость защиты от ее дальнейших пагубных последствий.

ALEKSANYAN Karine (Armenia)

Shirak Center for Armenological Studies of NAS RA

e-mail: karineal@mail.ru

TURKISH STRATEGY OF WAR ON THE PEACE AGENDA 1918-1921

The 100-year history of the Armenians, repeating itself almost identically, posing new challenges to all Armenians, testifies that it has not yet received serious scientific research. We are talking, in particular, about studies of Armenian-Turkish relations and strategies developed and used in the Turkish diplomatic arsenal.

Our goal is to reveal in this article the essence of the strategy of waging war on the "peace agenda", which has taken its special place in the Turkish diplomatic arsenal, ensuring the military and diplomatic successes of the Turks.

The "peace agenda", which the Turks usually put forward after war crimes, gave them the opportunity not only to avoid responsibility, but also, by negotiating, to continue the war. 1918-1921 the strategy of the "peace agenda", developed and successfully launched by Turkish diplomacy during the Turkish-Armenian wars, ensured diplomatic and military victories of the Turks. In particular, having violated the resistance of the Armenians with the propaganda of peace and dulled their vigilance, the Turks continued to implement the policy of seizing Armenian territories and the Armenian Genocide.

An important source for revealing the essence of the strategy of war with the peace agenda are the years 1918-1921. studies of wars and treaties accompanied by war crimes carried out by the Turks. We are talking, in particular, about the Brest-Litovsk, Batumi, Alexandropol, Moscow and Kars treaties, in previous negotiations on the conclusion of which the above strategy was developed and applied.

We tried in 1918-1921 having studied the peace negotiations and the agreements concluded during the Turkish-Armenian wars, we have identified the role of the strategy of the peace agenda in the Turkish diplomatic and military successes in the negotiation process for a peaceful settlement in Brest Litovsk, Batumi, Alexandropol, Moscow and Kars and in the relevant concluded agreements.

By the way, the strategy of war with the peace agenda is successfully operating against the Armenian statehood and people today. Therefore, we have set ourselves the task of showing the invisible links between the "era of peace" and the Armenian Genocide and substantiating the need to protect against the Turkish world.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գեղամ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
Էլ.փոստ՝ gegham.hovhannisian@mail.ru

**ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ (1917-1918 թթ.)**

1917թ. փետրվարյան հեղափոխությունը և ցարական ինքնակալության վերացումը Ռուսաստանում ազգային պետականության վերականգնման հույսեր արթնացրին հայության մեջ: Հարցը լայնորեն քննարկվում է Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության ամերիկյան մասնաճյուղի պաշտոնաթերթ «Երիտասարդ Հայաստանում»:

Պարբերականի գաղափարական-քաղաքական ուղղվածության հարցում կարևոր դեր ուներ նրա գլխավոր խմբագիր, կուսակցության տեսաբան Ստեփան Սապահ-Գյուլյանը: «Երիտասարդ Հայաստանի» հրապարակումներում առանցքային էր հայ ժողովրդի քաղաքական կարգավիճակի հարցը: Պարբերականն արտահայտում էր հարցի վերաբերյալ արևմտահայ հնչակյանների ամենաազդեցիկ կազմակերպության տեսակետը, ըստ որի՝ Արևմտյան Հայաստանը Կիլիկիայի հետ միասին անջատվելու էր Օսմանյան կայսրությունից և ստանալու էր ինքնավարություն Անտանտի երկրների հովանավորության ներքո: Պարբերականը հանդես էր գալիս Արևելյան Հայաստանի կամ Ռուսահայաստանի ինքնավարության օգտին:

1917-1918 թթ. «Երիտասարդ Հայաստանի» հրապարակումները ցույց են տալիս, որ հնչակյաններն ամբողջությամբ չէին ընդունում սոցիալիստական պետության կառուցման բոլշևիկյան գաղափարները: Նրանք դատապարտում են Կովկասյան ռազմաճակատից ռուսական զորքերի դուրսբերումը, որը գործնականում ի չիք դարձրեց Թուրքահայաստանի մասին հրովարտակով բոլշևիկյան Ռուսաստանի կողմից արևմտահայերին տրված ինքնավարությունը:

1918 թ. գարնանը թուրքերի Անդրկովկաս կատարած արշավանքի ժամանակ «Երիտասարդ Հայաստանը» կոչ էր անում համայն հայությանը համախմբվելու, թիկունք կանգնելու և օգնելու արևելահայությանը:

Այսպիսով, «Երիտասարդ Հայաստան» պարբերականն արտահայտում էր արձարժված հարցի վերաբերյալ հնչակյանների տեսակետը, ըստ որի՝ 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո՝ Հայաստանի առաջին հանրապետության ստեղծման ժամանակաշրջանում, Հնչակյան կուսակցության ներսում դեռևս չէր ձևավորվել ազգային միասնական պետության պահանջը:

Այդ շրջանում հայկական պետականության հնչակյանների տեսլականն արտահայտվում էր Արևմտյան և Արևելյան Հայաստանների ինքնավարությունների ձևով: Եթե Թուրքիայից անջատ Անտանտի երկրների հովանավորության ներքո գտնվող Արևմտյան Հայաստանի (ներառյալ Կիլիկիան) կարգավիճակի շուրջ հնչակյանների պատկերացումը շատ հստակ էր, ապա այդպիսի հստակություն չկար Արևելյան Հայաստանի ինքնավարության հարցում:

Ռուսաստանի անկայուն ու լարված ներքաղաքական իրավիճակի առկայության պայմաններում հնչակյանների մեջ հստակ ձևակերպված չէր ինքնավար Արևելահայաստանի և հետհեղափոխական Ռուսաստանի փոխհարաբերության հարցը:

ОГАННИСЯН Гехам (Армения)

Институт истории НАН РА
e-mail: gegham.hovhannisian@mail.ru

ВОПРОС НАЦИОНАЛЬНОГО ГОСУДАРСТВА В ПЕРИОДИЧЕСКОМ ИЗДАНИИ «МОЛОДАЯ АРМЕНИЯ» (1917-1918 гг.)

Февральская революция 1917 г. и падение царского самодержавия пробудили в армянском народе надежду на восстановление национальной государственности. Вопрос широко обсуждался на страницах официального органа американского филиала Социал-демократической партии Гнчакян «Молодая Армения».

В вопросе идеолого-политической направленности данного издания важную роль играл главный редактор, идеолог партии Степанос Сапах-Гюлян. В публикациях газеты ключевой была тема политического статуса армянского народа. Газета отражала точку зрения самой влиятельной организации западноармянских гнчакянов, согласно которой Западная Армения вместе с Киликией должна была выйти из состава Османской империи и получить автономию под протекторатом стран Антанты. Газета «Молодая Армения» выступала в защиту автономии Восточной Армении, либо Русской Армении.

Материалы, публикуемые на страницах «Молодой Армении» в 1917-1918 гг., явствовало о том, что гнчакяны не принимали большевистские идеи создания социалистического государства. Они осуждали вывод русских войск с Кавказского фронта, что снимало с повестки дня вопрос предоставления автономии западным армянам большевистской Россией на основе манифеста о Турецкой Армении.

Во время наступления турок на Закавказье весной 1918 г. газета выступала с призывом об объединении армянства и оказании помощи восточным армянам.

Таким образом, это периодическое издание отражало точку зрения гнчакянов по рассматриваемому вопросу. Согласно гнчакянам, после Февральской революции 1917 года, в период создания Первой Республики Армения в рядах гнчакянов еще не созрела идея создания единого национального государства. В этот период по представлениям гнчакянов создание армянской государственности рассматривалось в контексте автономии Восточной и Западной Армении.

Если представления гнчакянов о статусе Западной Армении (включая Киликию), находящейся под протекторатом стран Антанты, были весьма четкими, то вопрос автономии Восточной Армении был пока неясен.

В условиях нестабильной и напряженной внутривосточной ситуации, царившей в России, гнчакянами еще не был определен вопрос отношений между автономной Восточной Арменией и постреволюционной Россией.

HOVHANNISYAN Gegham (Armenia)

Institute of History of NAS RA
e-mail: gegham.hovhannisian@mail.ru

**THE ISSUE OF THE NATIONAL STATE IN PERIODICAL
“YOUNG ARMENIA” (1917-1918)**

The 1917 February Revolution and the abolition of tsarist dictatorship in Russia raised hopes for the restoration of national statehood among the Armenians. The issue is widely discussed in “Young Armenia” official newspaper of the American branch of the Social Democrat Hunchakian Party. Its editor-in-chief, party theorist Stepan Sapah-Gyulyan played an essential role in the ideological and political orientation of the periodical. The issue of the political status of the Armenian people was pivotal in the publications of “Young Armenia”. The periodical expressed the opinion of the most influential organization of the Western Armenian Hunchakians on the issue, according to which Western Armenia, together with Cilicia, would secede from Turkey and gain autonomy under the auspices of the Entente countries. It advocated the autonomy of Eastern Armenia or Russian-Armenia.

The publications of “Young Armenia” in 1917-1918 indicate that the Hunchakians did not fully accept the Bolshevik ideas of building a socialist state. They condemn the withdrawal of Russian troops from the Caucasus front, which practically nullified the autonomy given to the Western Armenians by Bolshevik Russia through a proclamation on Turkish Armenia.

In the spring of 1918, during the Turkish invasion of Transcaucasia, “Young Armenia” called on all Armenians to unite, support and help the Eastern Armenians.

Thereby, periodical “Young Armenia” expressed the opinion of the Hunchakians on the issue, according to which the demand for a united national state had not yet been formed within the Hunchakian Party after the 1917 February Revolution until the establishment of the First Republic of Armenia.

At that period, the vision of the Hunchakians on the Armenian statehood was expressed through the autonomy of Western and Eastern Armenia.

If the Hunchakians had a very clear idea of the status of Western Armenia (including Cilicia) under the auspices of the Entente countries separate from Turkey, there was no such clarity on the issue of the autonomy of Eastern Armenia.

In the conditions of the unstable and tense internal political situation in Russia, the Hunchakians did not clearly formulate the question of the relationship between autonomous Eastern Armenia and post-revolutionary Russia.

ԱՅՎԱԶՅԱՆ Գևորգ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Էլ. փոստ՝ Ayg.84@mail.ru

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԳՊՐՈՑՆԵՐԻ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ «ԹՈՓԱԼ-ԹԱԹՈՍ»
ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

1860-1870-ական թթ. ընդհանուր կրթության մասսայականացման գաղափարը Ալեքսանդրապոլում մեծ տարածում էր գտել: Չափազանցրած չենք լինի, եթե ասենք, որ քիչ թե շատ գրագետ համարվող մարդիկ, իրար հերթ չտալով, բացում էին նախակրթարաններ: 6-8 տարեկան մանուկներն այդտեղ ստանում էին տարրական գիտելիքներ: Աշակերտների հիշողությունները վկայում են, որ դրանցից շատերը տեղավորված էին անբարեհամբույր շինություններում: Դաստիարակության մանկավարժական մեթոդները ծայրահեղ հետադիմական էին: Այդ կապակցությամբ մեր զեկուցման մեջ քննարկելու ենք ավերպուլցի գրող, հրապարակախոս Կարապետ Հովհաննջանյանցի՝ կատակերգության ձևով պատմվող հիշողությունները: Սկզբնաղբյուրը Ալեքսանդրապոլի կրթական կյանքի գունեղ և հյույժեղ պատկեր է:

АЙВАЗЯН Геворг (Армения)

Ширакский центр арменоведческих исследований НАН РА
e-mail: Ayg.84@mail.ru

**ОПИСАНИЕ НАЧАЛЬНЫХ ШКОЛ АЛЕКСАНДРОПОЛЯ В
КОМЕДИИ «ТОПАЛ-ТАТОС»**

В 1860-1870-х гг. идея массового общего образования была широко распространена в Александрополе. Не будет преувеличением, если скажем, что более или менее грамотные люди открыли частные школы начальных классов. Воспоминания учащихся свидетельствуют о плачевном состоянии учебных помещений и об отсталых методах воспитания. В нашем докладе обсуждается мемуары писателя, публициста Карапета Оганджянца. Автор первоисточника дает яркое описание образовательной жизни Александрополя.

AYVAZIAN Gevorg (Armenia)

Shirak Center for Armenological Studies NAS RA

e-mail: Ayg.84@mail.ru

DESCRIPTION OF THE ELEMENTARY SCHOOLS OF ALEXANDRAPOL IN THE COMEDY "TOPAL-TATOS"

In the 1860-1870s the idea of mass general education was widespread in Alexandrapol. It will not be an exaggeration if we say that more or less literate people have opened private elementary schools. The memories of students testify the deplorable state of the classrooms and backward methods of education. The report discusses the memoirs of the writer, publicist Karapet Hovhanjanyants. The author of the original source gives a vivid description of the educational life of Alexandrapol.

ՄՈՎՍԵՍՅԱՆ Նարինե (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Էլ.փոստ՝ narinem2006@gmail.com

1920 Թ. ԹՈՒՐԲ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԼՈՒՍԱԿԵՐԱՆՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՉ

1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախօրյակի ռազմաքաղաքական իրադարձությունները լուսաբանվել են շատ հայ խորհրդային պատմաբանների կողմից: Քննարկվում են խորհրդահայ պատմագրության դիրքորոշումն ու գնահատականները՝ 1920 թ. ամռանը Անդրկովկասում ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակի վերաբերյալ: Բացահայտվում է պատմաբանների ու կուսակցական-քաղաքական գործիչների դիրքորոշումը պատերազմի պատճառների ու սկզբնավորման կարևոր հարցերի վերաբերյալ: Նրանց մի շարք գնահատականներ տեղին են և հիմնարար: Հայաստանի խորհրդային պատմագիրները հանգամանորեն քննարկում են 1919-1920 թթ. ստեղծված բարդ քաղաքական իրավիճակը:

Խորհրդային ժամանակաշրջանի հեղինակները ձգտում էին ներկայացնել խորհրդային կառավարության քաղաքական վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ, ինչպես նաև նրա ձգտումը՝ հանդես գալու միջնորդի դերում, հարթեցնելու ծայրահեղորեն լարված հայ-թուրքական հարաբերությունները:

Հետազոտողները միաժամանակ մատնանշում են, որ Անատոլիայում ձևավորված քեմալական կառավարությունն իր առաջնային նպատակ էր հռչակել

ոչնչացնել Հայաստանը, որն իր արտաքին քաղաքականության մեջ պահպանում էր արևմտյան կողմնորոշումը, թեև եվրոպական տերություններն ու ԱՄՆ որևէ քայլ չէին ձեռնարկում Հայաստանին օգնելու:

ՄՈՎՏԻՏՅԱՆ Նարինե (Արմենիա)

Институт истории НАН РА
e-mail: narinem2006@gmail.com

**ОСВЕЩЕНИЕ ВОПРОСА ВОЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ СИТУАЦИИ
НАКАНУНЕ ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 г. В
СОВЕТСКОЙ ИСТОРИОГРАФИИ АРМЕНИИ**

Вопросы военно-политической ситуации накануне турецко-армянской войны 1920 г. освещали многие советские историки Армении. В статье анализируются позиция и оценки советской армянской историографии относительно военно-политической обстановки в Закавказье летом 1920 г.

Раскрываются позиция и отношение историков и партийно-политических деятелей к ключевым вопросам причин и начала турецко-армянской войны. Их некоторые оценки уместны и обоснованны. Авторы обстоятельно рассматривают сложный в политическом отношении период 1919-1920 годов.

Авторы советского периода стремились представить политические подходы советского правительства к отношениям с Арменией как его стремление выступить в роли посредника, чтобы сгладить чрезвычайно напряженные армяно-турецкие отношения.

При этом исследователи указывают, что образовавшееся в Анатолии кемалистское правительство провозгласило своей первоочередной задачей уничтожение Армении, сохранявшей западную ориентацию в ее внешней политике, хотя европейские Державы и США не предприняли каких-либо шагов по оказанию помощи Армении.

MOVSISYAN Narine (Armenia)

Institute of History NAS RA
e-mail: narinem2006@gmail.com

**ELUCIDATION OF THE MILITARY AND POLITICAL SITUATION ON
THE EVE OF THE TURKISH-ARMENIAN WAR IN, 1920, IN THE
SOVET HISTORIOGRAPHY OF ARMENIA**

Issues of the military and political situation on the eve of the Turkish-Armenian war, 1920, had been elucidated by many Soviet historians of Armenia.

The paper illustrates the position and attitude of historians and party-political leaders over the problem of the reasons and the beginning of the the Turkish-Armenian War. A number of opinions had been appropriate and well-grounded.

The paper analyses position and estimations of the military-political developments in Transcaucasia during the summer, 1920, by the Soviet Armenian historiography. The authors of the Soviet period strived to present the political approach of the Soviet Government towards its relations with Armenia as its aspiration to perform the role of mediator who would smooth over very tense Armenian-Turkish relations.

The scholars point out that the Kemalist government, which was set up in Anatolia, declared the annihilation of Armenia to be its primary goal: though European Powers and the USA did not commit any actions to aid Armenia.

ՀԱՄԱՐԶՈՒՄՅԱՆ Արգամ (Հայաստան)

Երևանի պետական համալսարան
Էլ. փոստ՝ arghambardzumyan8@gmail.com

**ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ
ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ**

Աշխատանքի նպատակն է ցույց տալ անկախության շրջանում մայրաքաղաքում միջպետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հիմնադրման նախապատմությունը, կառուցվածքը, դրանց կողմից իրականացվող կրթական ծրագրերը, դրանց խաղացած դերն ու առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետության և մասնավորապես մայրաքաղաքի բուհական համակարգում: Քննության առարկա դարձած հինգ միջպետական բուհերն են Հայաստանի Ամերիկյան համալսարանը, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանը, Հայաստանում ֆրանսիական համալսարանի հիմնադրամը, Հայաստանի եվրոպական համալսարանը և Մոսկվայի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղը: Վերջիններս կոչված են զարգացնելու ամերիկյան, ռուսական, ֆրանսիական և համաեվրոպական կրթական համակարգերի ավանդույթները տարածաշրջանում և կրթական, գիտահետազոտական և մշակութային գործունեություն ծավալելու բնական գիտությունների և հումանիտար գիտելիքի լայն ոլորտներում:

Կատարված աշխատանքի արդյունքում փաստարկել ենք այն հիմնադրույթները, որ ժամանակակից աշխարհում պետության կրթական հեղինակությունը պայմանավորող գործոններից մեկն էլ մրցունակ միջպետական և միջազգային բուհական համակարգի գոյությունն է, որի հաջողության գրավականը գիտակրթական օրենսդրության ճկունությունն է. որքան ճկուն է այդ համակարգը, այնքան գրավիչ է միջազգային համբավավոր համալսարանների համար մասնաճյուղեր բացելու

տեսանկյունից: Մյուս կողմից միջպետական բուհական համակարգի գոյությունը մայրաքաղաքում միայն ու միայն դրական է անդրադառնում ազգային կրթական համակարգի համար՝ ստիպելով վերջինիս ավելի արագորեն արդիականանալ հեղինակությունն ու դիմորդներին չկորցնելու, ինչպես նաև օտարերկրացի ուսանողների ներգրավելու առումով: Այս տեսանկյունից կարևոր ենք համարում միջպետական բուհական համակարգի պահպանումն ու շարունակական ընդլայնումը մայրաքաղաքում, ինչպես նաև դրա «արտահանումը» հանրապետության քաղաքային այլ բնակավայրեր:

АМБАРЦУМЯН Аргам (Армения)

Ереванский государственный университет
e-mail: arghambardzumyan8@gmail.com

МЕЖГОСУДАРСТВЕННАЯ УНИВЕРСИТЕТСКАЯ СИСТЕМА В СТОЛИЦЕ ЕРЕВАН ЗА ГОДЫ НЕЗАВИСИМОСТИ

Цель работы - показать предысторию создания межгосударственных высших учебных заведений столицы в период независимости, структуру, реализуемые ими образовательные программы, их роль и особенности в университетской системе Республики Армения, особенно в столице. Пять изученных межгосударственных университетов: Американский университет Армении, Армяно-российский (славянский) университет, Французский университет в Армении (фонд), Европейский университет Армении и Ереванский филиал Московского государственного университета. Последние призваны развивать и преумножать традиции американской, российской, французской, общеевропейской систем образования в регионе, осуществлять образовательную, научно-исследовательскую и культурную деятельность в сферах естественных и гуманитарных наук.

В результате проделанной работы аргументировано положение о том, что одним из факторов, определяющих роль образовательного органа любого государства в современном мире, является наличие конкурентоспособной межгосударственной и международной университетской системы, успех которой, однозначно, гибкость научного и образовательного законодательства. Чем более гибкая система, тем привлекательнее для всемирно известных университетов открытие филиалов. С другой стороны, наличие межгосударственной системы университетов в столице оказывает только положительное влияние на национальную систему образования, заставляя ее быстрее модернизироваться, чтобы не терять свой престиж и абитуриентов, а также в плане привлечения иностранных учеников. С этой точки зрения мы однозначно считаем важным сохранение и постоянное расширение системы межгосударственного университета в столице, а также ее «экспорт» в другие городские поселения республики.

HAMBARDZUMYAN Argam (Armenia)

Yerevan State University

e-mail: arghambardzumyan8@gmail.com

**INTERGOVERNMENTAL UNIVERSITY SYSTEM IN THE CAPITAL
YEREVAN DURING THE YEARS OF INDEPENDENCE**

The paper aims at showing the background of the establishment of interstate higher education institutions in the capital during the period of independence, the structure, the educational programs implemented by them, their role and peculiarities in the university system of the Republic of Armenia, particularly in the capital. The five interstate universities examined are the American University of Armenia, the Armenian-Russian (Slavonic) University, the French University Foundation in Armenia, the European University of Armenia, and the Yerevan branch of Moscow State University. The latter are called to develop and multiply the traditions of the American, Russian, French, pan-European educational systems in the region, by carrying out educational, research and cultural activities in the fields of natural sciences and humanities.

As a result of the work done, we have argued the principles that one of the factors determining the role of the educational authority of any state in the modern world is the existence of a competitive intergovernmental and international university system, the success of which is unequivocally the flexibility of scientific and educational legislation. The more flexible the system, the more attractive it is for internationally renowned universities to open branches. On the other hand, the existence of an interstate university system in the capital has only a positive impact on the national education system, forcing it to modernize more quickly in order not to lose its prestige and applicants, as well as in terms of attracting foreign students. From this point of view, we definitely consider the preservation and continuous expansion of the interstate university system in the capital, as well as its "export" to other urban settlements of the republic.

ՍՈՒՔԻՍՅԱՆ Համո (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
Էլ.փոստ՝ hamosukiasyan@mail.ru

ՂԱԶԱՐՅԱՆ Գայանե (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
Էլ.փոստ՝ gayane.ghazaryan.1992@mail.ru

**ԶԱՐԿՆԱԿՆԵՐԻ ԳՐԱԿԱՆԱԿՆԵՐԸ ԽՈՐՀԱՆՈՒՄԻ ԽՈՐՀԱՆՈՒՄԻ ԽՈՐՀԱՆՈՒՄԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՄԱՆԻՏԱՐԻՎՄԱՆ ԾՐԱԿՆԵՐՈՒՄ 1940-1980-
ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

Խորհրդային Հայաստանի հետպատերազմյան շրջանի չուսումնասիրված էջերի թվում է հանրային կյանքի գրեթե բոլոր բնագավառներում տարածված չարաշահումների խնդիրը: Այս հիմնահարցը պատմագիտության կողմից արժանացել է միայն հպանցիկ անդրադարձների: Պաշտոնական դիրքի չարաշահումները, որ խորհրդային իրավակարգի պայմաններում բնորոշվում էին իբրև պետական-կուսակցական մակարդակում բույն դրած չարիք, 1940-1950-ական թվականներին առավելապես հետպատերազմյան ժամանակաշրջանին բնորոշ ընդհանուր ճգնաժամի ֆոնին գոյություն ունեցող հասարակական կարգի օղակների թուլացման հետևանք էր: 1960-ական թվականներին խրուշչովյան վերակառուցումների ու ստեղծված հարաբերական ազատությունների ֆոնին խորհրդային հասարակության մեջ արդեն իսկ գոյություն ունեցող խութերը նոր դրսևորում և երանգ ստացան: 1960-1970-ական թվականներին չարաշահումների դրսևորումներն առավելապես կապված էին խրուշչովյան ազատությունների և բրեժնևյան տնտեսական ու կադրային քաղաքականության, կոմունիստ կադրերի նկատմամբ վստահության բարձրացման հետ, որոնք միութենական հանրապետություններում և հատկապես շրջաններում տարբեր կերպարանք էին ընդունում: Գորբաչովյան վերակառուցման պայմաններում չարաշահումների ծավալների մեծացման համար առավել նպաստավոր պայմաններ ստեղծվեցին:

Չեկույցը նվիրված է Խորհրդային Հայաստանի հյուսիսարևմտյան շրջաններում (ներկայիս ՀՀ Շիրակի մարզի տարածքում) չարաշահումների դրսևորումների ուսումնասիրությանը: Այդ հարցերը լուսաբանվում են Հայկական ԽՍՀ պատմության ընդհանուր ֆոնի վրա: Հայաստանի ազգային արխիվում և նրա Շիրակի մարզային մասնաճյուղում պահվող նորահայտ արխիվային փաստաթղթերի հիման վրա ցույց է տրվում, որ 1940-1980-ական թվականներին, չնայած առկա բազմաթիվ խնդիրներին, քայլ առ քայլ բարելավվում էին Հայկական ԽՍՀ ազգաբնակչության սոցիալ-տնտեսական դրությունը, կենցաղային սպասարկումը: Այս ամենին զուգահեռ, 1960-ականներից սկսած, հայաստանյան տեղական ղեկավար գործիչները, տարբեր կարգավիճակի պաշտոնյաները սկսեցին առավել հաճախ պետական ունեցվածքի յուրացումներ ու վատնումներ կատարել: Սույն երևույթը 1970-1980-ականներին հատկապես նկատելի չափեր ընդունեց շինարարության ոլորտում: Մեծ ծավալներ ընդունած բնակարանաշինությունը դրան «նպաստող» հանգամանքներ

րից էր: Այս ամենը 1988 թ. դեկտեմբերյան երկրաշարժի ժամանակ մեծաքանակ գր-
հերի պատճառներից դարձավ:

СУКИАСЯН Амо (Армения)

Институт истории НАН РА
e-mail: hamosukiasyan@mail.ru

КАЗАРЯН Гаяне (Армения)

Институт истории НАН РА
e-mail: gayane.ghazaryan.1992@mail.ru

ПРОЯВЛЕНИЯ ЗЛОУПОТРЕБЛЕНИЙ В СЕВЕРО-ЗАПАДНЫХ РАЙОНАХ СОВЕТСКОЙ АРМЕНИИ В 1940-1980 гг.

Неисследованным страницам послевоенного периода Советской Армении от-
носится проблема злоупотреблений широко распространенных практически во всех
сферах общественной жизни. Этот вопрос был удостоен лишь беглых упоминаний
в историографии.

Злоупотребление служебным положением, которое в условиях советской
правовой системы определялось как гнездящееся на государственно-партийном
уровне зло, было следствием ослабления существовавших звеньев общественного
порядка на фоне общего кризиса, характерного для послевоенного периода 1940-
1950-х гг. В 1960-е годы на фоне хрущевских перестроек и создавшихся относи-
тельных свобод уже существующие в советском обществе проблемы приобрели
новые проявления и оттенки. В 1960-1970-е годы проявления злоупотреблений в
основном были связаны с хрущевскими свободами и брежневской экономической и
кадровой политикой, повышением доверия к коммунистическим кадрам, которые
принимали различные облики в союзных республиках и особенно в регионах. В
условиях горбачевской перестройки создались более благоприятные условия для
увеличения объема злоупотреблений.

Данное исследование посвящено изучению проявлений злоупотреблений в
северо-западных районах Советской Армении (на территории нынешней Ширак-
ской области РА). Эти вопросы освещаются на общем фоне истории Армянской
ССР. На основе новообнаруженных архивных документов, хранящихся в Нацио-
нальном архиве Армении и его Ширакском областном отделении, показано, что в
1940-1980-е годы, несмотря на множество существовавших проблем, социально-
экономическое положение населения Армянской ССР и бытовое обслуживание шаг
за шагом улучшались. Параллельно всему этому, начиная с 1960-х гг. армянские
местные руководители и чиновники разного ранга стали чаще присваивать и
растрачивать государственное имущество. Это явление в 1970-1980-е годы приняло
особо заметные размеры в сфере строительства. Одним из “способствующих”

обстоятельств было масштабное жилищное строительство. Все это стало одной из причин многочисленных жертв во время декабрьского землетрясения в 1988 году.

SUKIASYAN Hamo (Armenia)

Institute of History of NAS RA
e-mail: hamosukiasyan@mail.ru

GHAZARYAN Gayane (Armenia)

Institute of History of NAS RA
e-mail: gayane.ghazaryan.1992@mail.ru

MANIFESTATIONS OF ABUSES IN THE NORTHWEST REGIONS OF SOVIET ARMENIA IN THE 1940-1980

The problem of widespread abuses in almost all spheres of public life is among the unexplored pages of the post-war period of Soviet Armenia. This issue has received only cursory references by historiography. The abuse of official position, which under the conditions of the Soviet legal system was characterized as an evil nested at the state-party level, was a consequence of the weakening of the existing social order links in the background of the general crisis characteristic of the post-war period in the 1940s-1950s. In the 1960s, against the background of Khrushchev's reconstructions and the relative freedoms created, the already existing obstacles in the Soviet society gained a new manifestation and tone. In the 1960s and 1970s, the manifestations of abuses were mostly connected with Khrushchev's freedoms and Brezhnev's economic and personnel policies, increasing trust in communist cadres, which took different forms in the union republics and especially in the regions. Under the conditions of Gorbachev's reconstruction, more favorable conditions were created for the increase in the volume of abuses.

The present research touches upon the manifestations of abuse in the northwestern regions of Soviet Armenia (in the territory of the current Shirak Marz of RA). These questions are elucidated in the general background of the history of the Armenian SSR. On the basis of newfound archival documents preserved in the National Archives of Armenia and its Shirak regional branch, it is disclosed that in the 1940s-1980s, despite the numerous existing problems, the socio-economic situation of the population of the Armenian SSR, the household service, improved step by step. Parallel to all this, starting from the 1960s, Armenian local leaders and officials of various statuses began to embezzle and waste state property more often. In the 1970s and 1980s, this phenomenon took on particularly noticeable proportions in the field of construction. Large-scale housing construction was one of the "contributing" circumstances. All this became one of the causes of large number of victims during the 1988 December earthquake.

ՄԱՏԻՆՅԱՆ ՀԵՆՐԻ (Հայաստան)

Վանաձորի պետական համալսարան
Էլ. փոստ՝ henri.matinyan@gmail.com

**ՂԱՐԱԲԱԳՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅ-ԼԵՀԱԿԱՆ
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 1991-2018 թթ.**

Նորանկախ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առաջնահերթություններից էր արցախյան հակամարտության վերաբերյալ միջազգային հայանպաստ դիրքորոշում ձևավորելը: 1998 թ. հունվարից Լեհաստանը ստանձնեց ԵԱՀԿ նախագահությունը և այդ ամենով պայմանավորված՝ ակտիվ դեր ստանձնեց դարաբաղյան հակամարտությունը դիվանագիտական ճանապարհով լուծելու հարցում: Այդ ժամանակահատվածում լեհ ղեկավար շրջանակներում շրջանառվում էր այն կարծիքը, որ Լեհաստանի նախագահության շրջանակներում հնարավոր էր հասնել հիմնահարցի խաղաղ կարգավորմանը: Լեհաստանի արտաքին գործերի նախարար Բրոնիսլավ Գերեմեկի համոզմամբ՝ Լեհաստանը ակտիվորեն ներգրավվելու էր դարաբաղյան հակամարտության կարգավորմանը՝ որպես ԵԱՀԿ նախագահող երկիր՝ քննարկելով խնդիրը Մինսկի խմբի համանախագահողների հետ: Լեհաստանը ցանկանում էր Մինսկի խմբի շրջանակներում հասնել այնպիսի կարգավորման, որ կբավարարեր բոլոր կողմերին և հիմնված կլիներ բոլոր կողմերի բարի կամքի վրա: Լեհաստանի Հանրապետության դիրքորոշումն այս հարցում բնորոշվում էր հետևյալ կերպ՝ իրատեսությունն առանց չափազանց սպասումների:

1998 թվականի ապրիլի 10-ին Լեհաստանում պաշտոնապես բացվեց Հայաստանի Հանրապետության դեսպանությունը: Այս հանգամանքը նպաստեց, որ հայ-լեհական քաղաքական շփումներն ավելի սերտանան, իսկ արցախյան հակամարտության կարգավորման վերաբերյալ քննարկումները կրեն ավելի հաճախակի ու խորը բնույթ: ՀՀ արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվի նյութերը վկայում են, որ անցած ավելի քան 20 տարիների ընթացքում արցախյան հակամարտության կարգավորման հարցը մշտապես գտնվել է հայ-լեհական բարձր մակարդակի հարաբերություններում: Խնդիրը Լեհաստանի Հանրապետությունում հանրային հնչեղություն է ստացել, որի վկայությունները լեհական մամուլում այդ ընթացքում տեղ գտած բազմաթիվ և տարաբնույթ հրապարակումներն են:

МАТИНЯН Генри (Армения)

Ванадзорский государственный университет
e-mail: henri.matinyan@gmail.com

**ВОПРОС КАРАБАХСКОГО КОНФЛИКТА В АРМЯНО-ПОЛЬСКИХ
ОТНОШЕНИЯХ В 1991-2018 гг.**

Одним из приоритетов внешней политики независимой Республики Армения было формирование проармянской международной позиции по карабахскому

конфликту. В январе 1998 г. Польша приняла председательство в ОБСЕ. В связи с этим она приняла активное участие в решении карабахского конфликта дипломатическим путем. В то время польское руководство придерживалось мнения, что мирное урегулирование вопроса возможно в рамках польского председательства. По словам министра иностранных дел Польши Бронислава Геремека, Польша была намерена принимать активное участие в урегулировании нагорнокарабахского конфликта в качестве действующего председателя ОБСЕ, обсуждая этот вопрос с сопредседателями Минской группы. Польша хотела достичь урегулирования в рамках Минской группы, которое удовлетворило бы все стороны, на основе доброй воли всех сторон. Позиция Республики Польша по этому вопросу была определена следующим образом: реализм без завышенных ожиданий.

10 апреля 1998 года в Польше было официально открыто Посольство Республики Армения. Это обстоятельство способствовало более тесным армяно-польским политическим контактам, а дискуссии по урегулированию арцахского конфликта участились и стали более глубокими. Материалы историко-дипломатического архива Министерства иностранных дел Республики Армения свидетельствуют о том, что на протяжении последних более 20 лет вопрос урегулирования арцахского конфликта всегда находился в армяно-польских отношениях на высоком уровне. Этот вопрос привлек внимание общественности в Республике Польша, о чем свидетельствуют многочисленные и разнообразные публикации в польской прессе того времени.

MATINYAN Henri (Armenia)

Vanadsor State University
e-mail: henri.matinyan@gmail.com

THE ISSUE OF THE KARABAKH CONFLICT IN ARMENIAN-POLISH RELATIONS IN 1991-2018

One of the priorities of the foreign policy of the independent Republic of Armenia was the formation of a pro-Armenian international position on the Karabakh conflict. In January 1998, Poland assumed the chairmanship of the OSCE. In this regard, it took an active part in resolving the Karabakh conflict through diplomacy. At that time, the Polish leadership had an opinion that a peaceful settlement of the issue was possible within the framework of the Polish presidency. According to the Polish Foreign Minister Bronisław Geremek, Poland intended to take an active role in the settlement of the Nagorno-Karabakh conflict as the OSCE Chairman-in-Office, discussing this issue with the co-chairs of the Minsk Group. The Republic of Poland aimed to reach a settlement within the Minsk Group that would satisfy all parties, based on the goodwill of all parties. The position of the Republic of Poland on this issue was defined as follows: realism without high expectations.

On April 10, 1998, the Embassy of the Republic of Armenia was officially opened in Poland. This circumstance contributed to closer Armenian-Polish political contacts, and discussions on the settlement of the Karabakh conflict became more frequent and deeper. The materials of the historical and diplomatic archive of the Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia testify that over the past 20 years the issue of the settlement of the Artsakh conflict has always been in Armenian-Polish high-level relations. This issue attracted public attention in the Republic of Poland, as evidenced by numerous and various publications in the Polish press of that time.

ՆԵՐՍԻՍՅԱՆ Արմեն (Հայաստան)

Շիրակի պետական համալսարան
Էլ. փոստ՝ hajarmen77@gamil.com

**ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆԵՐԿԱ
ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԵՎ ԱՊԱԳԱ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Ձեկուցման շրջանակներում քննարկվում են համամարդկային քաղաքակրթական ժամանակակից ճգնաժամի հաղթահարման հնարավորությունները, այդ համատեքստում՝ հայկական քաղաքակրթության հնարավոր դերակատարություն-առաքելությունը:

Մարդկությունն այսօր գտնվում է կենսական հանգրվանում, որին բնորոշ է խորացող ճգնաժամերի համակարգային դրսևորումները: Ժամանակակից ճգնաժամն աննախադեպ է, որի երևութական մասը կարելի է ընդհարական ձևով բնութագրել որպես սովորական-համակեցական: Սակայն այն իր խորքի մեջ էությունական է՝ արժեքային-ճանաչողական, հոգևոր-բարոյական, ոգեղեն-գաղափարական և իմաստային-գոյաբանական շերտերով: Հետևաբար, ապագայում ոչ միայն դերակատարություն, այլև ընդհանրապես գոյություն կունենան միայն այն քաղաքակրթությունները, որոնք կձևակերպեն և՛ սեփական, և՛ համամարդկային կենսընթացը:

Առաջ է քաշվում այն գիտական պարադիգմը, որ Հայկական քաղաքակրթությունն՝ իր վերածային կենսընթացով, նորից հնարավորություն է ստանալու վերագտնել (կրկին ձեռք բերել) սեփական գործառույթ-առաքելությունը և ըստ այդմ՝ ապահովել մարդկության կենսագարգացումը 3-րդ և հաջորդող հազարամյակներում՝ ժամանակակից ճգնաժամի հաղթահարման էությունական հիմքով:

Այսպիսով, կարելի է հստակ բանաձևել. **մարդկության ապագան՝ նրա հոգևոր-վերածային տրամաբանության մեջ է**, որը հնարավոր է միայն **համապատասխան ոլորտների էվոյուցիայի շնորհիվ**, իսկ դա պարտադրում է **նոր՝ ոգե-**

նորգլխական շարժում՝ հստակ նպատակադրման և կենսընթացի միջոցով: Վերջինիս պարագայում, որպես ջահակիր կարող է և պետք է հանդես գա **Հայկական քաղաքակրթությունը՝ նախասահմանված սեփական առաքելության իրացմամբ:** Իսկ դա հնարավոր է, երբ սեփական երկրում նախ տեղի է ունենում **համակեցության վերած՝ Ազգային պետության ձևավորմամբ,** այնուհետև՝ **ազգակեցական միասնականությամբ՝ Հայոց ազգապետության ձևավորում (Ազգ-Քաղաքակրթության մակարդակ):** Դրանով հանդերձ, Հայկական քաղաքակրթությունը դառնում է **համաշխարհային սուբյեկտ,** որը պետք է առաջնորդի մարդկության էվոլյուցիոն կենսընթացը:

НЕРСИСЯН Армен (Армения)

Ширакский государственный университет
e-mail: hajarmen77@gamil.com

МИССИЯ АРМЯНСКОЙ ЦИВИЛИЗАЦИИ В КОНТЕКСТЕ ПРЕОДОЛЕНИЯ НЫНЕШНЕГО КРИЗИСА И ФОРМИРОВАНИЯ БУДУЩЕГО ОБЩЕСТВЕННОГО ПОРЯДКА

В докладе обсуждаются возможности преодоления современного общечеловеческого цивилизационного кризиса, в этом контексте - возможная роль-миссия армянской цивилизации и практические шаги, необходимые для ее полноценного воплощения в жизнь.

Человечество сегодня находится на жизненном этапе, которому присущи системные проявления углубляющегося кризиса. Однако современный кризис, по словам специалистов, беспрецедентен.

Феноменальную часть современного кризиса можно охарактеризовать как обычный-сосуществующий, однако нынешний кризис в своей глубине – бессознательный, со своими ценностно-познавательными, духовно-нравственными, духовно-идеологическими и семантико-онтологическими слоями.

Следовательно, в будущем не только роль, но и вообще существование могут иметь только те цивилизации, которые будут иметь четкий проект-программу-архитектуру не только собственного, но и общечеловеческого жизненного процесса, механизм их реализации и волю-осознание их претворения в жизнь.

Выдвигается та научная парадигма, что армянская цивилизация своим перерастающим жизненным процессом снова получит возможность вновь обрести свою функцию-миссию и в соответствии с этим обеспечить биологическое развитие человечества в 3-е и последующие тысячелетия на основе преодоления современного кризиса.

NERSISYAN Armen (Armenia)

Shirak State University
e-mail: hajarmen77@gamil.com

**THE MISSION OF THE ARMENIAN CIVILIZATION IN THE
CONTEXT OF OVERCOMING THE CURRENT CRISIS AND SHAPING
THE FUTURE SOCIAL ORDER**

The paper discusses the possibilities of overcoming the modern universal civilizational crisis, in this context, the possible role-mission of the Armenian civilization and the practical steps necessary for its full implementation.

Today humanity is at a life stage characterized by systemic manifestations of a deepening crisis. However, the current crisis, according to experts, is unprecedented.

The phenomenal part of the modern crisis can be characterized as ordinary-coexisting. However, the current crisis in its depth is unionless, with its value-cognitive, spiritual-moral, spiritual-ideological and semantic-ontological layers.

Consequently, in the future, not only a role, but existence in general can have only those civilizations that will have a clear project-program-architecture of not only their own, but also the universal life process, the mechanism for their implementation and the will-consciousness of their implementation.

The scientific paradigm is to put forward the Armenian civilization, by its outgrowing life process, will again have the opportunity to regain its function-mission and, in accordance with it, ensure the biological development of mankind in the 3rd and subsequent millennia on the basis of overcoming the current crisis.

ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ Նահրա (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
Էլ. փոստ՝ nairahambardzumyan@yahoo.com

ՓԱՐՍԱԳՆԱՆՅԱՆ Սիրանուշ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
Էլ. փոստ՝ siranush.parsadanyan.2014@mail.ru

**ՍՐԲՈՒՀԻ ՏՅՈՒՍԱԲԸ ԵՎ ՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

«Սրբուհի Տյուսաբը և հայ բարեգործական ընկերությունները» թեման դեռևս ուսումնասիրված չէ: Վիեննայի Միխիթարյան միաբանության Հայր Եփրեմ Պողոսյանը «Պատմություն հայ մշակութային ընկերություններու» գրքում գրում է, թե 1859 թ. ստեղծված «Խնամակալուհի տիկնայք» Սրբուհի Վահանյանի մոր՝ Նազըր Վա-

հանի գլխավորությամբ, 1864 թ., հիմնում են «Աղքատախնամ Տիկնանց Ընկերությունը», իսկ Սրբուհին դառնում է ընկերության օգնական ատենադպիրը և աջակցում մորը, մասնակցում տարբեր միջոցառումների կազմակերպմանը: Այդ տարիներին է, որ նրա մեջ ձևավորվում է համարձակ և սկզբունքային մտավորականը: 1880 թ. Սրբուհի Տյուսաբը նաև «Դպրոցասեր հայուհյաց» բարեգործական ընկերության գործուն անդամներից էր, Ընդհանուր ժողովի ատենապետը:

Ուսումնասիրության նպատակը «Սրբուհի Տյուսաբը և հայ բարեգործական ընկերությունները» բազմաշերտ նյութի գիտական համակարգումն է, ինչը կարևոր է հայ գրականության պատմության ընթացականության և զարգացման տեսանկյուններից:

Ուսումնասիրության խնդիրը փաստական և վավերագրական նյութերի հիման վրա Սրբուհի Տյուսաբի բարեգործական և հովանավորչական գործունեության վրա լույս սփռելն է:

Կիրառել ենք կենսագրական և ֆենոմենոլոգիական մեթոդները:

Սրբուհի Տյուսաբը հայ առաջին վիպասանուհին է: Նրա ստեղծագործության և գործունեության առանցքը կանանց ազատագրության հիմնախնդիրներն էին՝ սոցիալ-տնտեսական, բարեգործական, իրավական, կրթական, քաղաքական և ազգային գիտակցությունը, դրանց դրսևորումները և պաշտպանությունը: Մասնակցելով Կ. Պոլսում հիմնադրված բարեգործական ընկերությունների գործունեությանը և ներգրավվելով որպես գործուն անդամ և ատենապետ՝ նա կազմակերպում էր հանգանակություններ, ներկայացումներ, ցուցահանդեսներ՝ դրանցով նպաստելով ազգի առաջադիմությանը, բարեգործական ընկերությունների՝ ճգնաժամային իրավիճակներից դուրսբերմանը:

АМБАРЦУМЯН Наира (Армения)

Институт литературы имени Манука Абегяна, НАН РА
e-mail: nairahambardzumyan@yahoo.com

ПАРСАДАНЯН Сирануш (Армения)

Институт литературы имени Манука Абегяна, НАН РА
e-mail: siranush.parsadanyan.2014@mail.ru

СРБУИ ТЮСАБ И АРМЯНСКИЕ БЛАГОТВОРИТЕЛЬНЫЕ ОРГАНИЗАЦИИ

Тема «Србуи Тюсаб и армянские благотворительные организации» до сих пор не исследована. В своей книге «История армянских культурных организаций» отец Епрем Погосян из Конгрегации венских Мхитаристов пишет, что под руководством Назлу Ваган, матери Србуи Ваганян, которая в 1859 году основала «Женское попечительское общество», в 1864 году была учреждена «Женская организация призрения неимущих», а Србуи становится делопроизводителем организации и содействует матери, участвует в подготовке различных мероприятий. Именно

в это время она формируется как отважная, принципиальная и интеллектуальная личность. В 1880-х гг. Србуи Тюсаб была также одним из активных членов благотворительной организации «Армянок-любительниц просвещения», председателем Всеобщего собрания.

Цель исследования – научная систематизация многоуровневого материала «Србуи Тюсаб и армянские благотворительные организации», что является важным с точки зрения изучения хода и развития истории армянской литературы.

Задачи исследования – раскрыть благотворительную и спонсорскую деятельность Србуи Тюсаб на основе фактических и документальных материалов.

Нами были применены биографический и феноменологический методы.

Србуи Тюсаб – первая армянская женщина-романист. Основой ее творчества и деятельности составляют проблемы женской эмансипации: социально-экономические, благотворительные, правовые, образовательные, политические и связанные с проявлением и защитой национального сознания. Участвуя в качестве активного члена и председателя в деятельности благотворительных организаций, основанных в Константинополе, она организовывала сбор пожертвований, спектакли, выставки, тем самым способствуя национальному прогрессу и выводу благотворительных организаций из кризисной ситуации.

HAMBARDZUMYAN Naira (Armenia)

Institute of Literature after Manuk Abeghian NAS RA
e-mail: nairahambardzumyan@yahoo.com

PARSADANYAN Siranush (Armenia)

Institute of Literature after Manuk Abeghian NAS RA
e-mail: siranush.parsadanyan.2014@mail.ru

SRBUHI TYUSAB AND ARMENIAN CHARITIES

The theme “Srbuhi Tyusab and Armenian Charities” has not been studied yet. Yeprem Poghosyan, Father of the Mekhitarist Congregation in Vienna, writes in his book “The History of the Armenian Cultural Companies” that “Guardian Ladies” founded in 1859 under the leadership of Nazli Vahan, Srbuhi Tyusab's mother, founded the “Women's Association for Poor Relief”, and Srbuhi became the assistant secretary of the company, supporting her mother and participating in the organization of various events. It was during those years that a brave, principled intellectual was formed within her. In 1880, Srbuhi Tyusab was also an active member and the chairwoman of the General Board of the Charity “School-loving Female Armenians”.

The aim of the study is the scientific systemization of the multi-layered material “Srbuhi Tyusab and Armenian Charities”, which is important from the angle of the development and course of the history of the Armenian literature.

The problem of the study is to shed light on Srбуhi Tyusab's charitable and sponsorship activities based on factual and documentary materials.

We have applied biographical and phenomenological methods.

To sum up, Srбуhi Tyusab is the first Armenian woman-novelist. The core of her work and activity was the issues of women's emancipation: socio-economic, charitable, legal, educational, political, and national consciousness, their manifestations and protection. Participating in the activities of charities founded in Constantinople, being involved as an active member and chairwoman, she organized fundraisers, performances, and exhibitions, thus contributing to the progress of the nation and the recovery of charities from crisis.

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԼԻԱՆՆԱ (Հայաստան)

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ
Հայաստանի պետական մանկավարժական համալսարան
Էլ. փոստ՝ gkp61@mail.ru

**ԻԼԻԿԸ՝ ՈՐՊԵՍ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ¹**

Նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը, պահպանումն ու փոխանցումը ժամանակակից թանգարանի կարևորագույն գործառնություններից են:

Հնագիտական արտեֆակտներից մինչև նույնատիպ ազգագրական սկզբնաղբյուրները համաժամանակյա և տարաժամանակյա տրամաբանական շղթա կազմելով միայն հնարավոր է դիտարկել ու ընկալել կոնկրետ մշակութային երևույթի ձևավորումն ու զարգացումը:

Ներկայումս այդ ոլորտում գիտությունն առաջարկում է հետազոտությունների ավելի արդիական և արդյունավետ մեթոդ: Դա յուրաքանչյուր արտեֆակտի և/կամ կոնկրետ երևույթի ձևավորման, զարգացման, օգտագործման, սոցիալականացման և հնարավոր այլ փոխակերպումների վերաբերյալ իրական, հիմնավոր ու խորքային եզրահանգումների, մեկնաբանությունների ու ընդհանրացումների համակարգված իրականացումն է:

Այս համատեքստում նույն խնդիրներն է արծարծում նաև իլիկներին վերաբերող սույն գեկուցումը:

Կենցաղային և ծիսական նշանակության իլիկները օգտագործվել են արդեն Միջագետքի, Եգիպտոսի, Փոքր Ասիայի և Հնդկաստանի հնագույն հասարակություններում:

Ոսկրից, քարից, կավից և փայտից պատրաստված իլիկների մեծ քանակություն հայտնաբերվել է նաև Հայկական լեռնաշխարհի տարբեր հատվածների մ.թ.ա. VI-I հազ. Էնեոլիթյան-երկաթեդարյան (Թիլի թեփե, Պուլուր, Ակնաշեն, Առատաշեն, Շենգավիթ, Մոխրաբլուր, Մեծ Սեպասար, Լճաշեն, Արթիկ, Լոռի բերդ, Սոթք, Սարուխան, Էրեբունի, Արգիշթիխինիլի, Կարմիր բլուր և այլն) բնակավայրերի ու դամբարանների պեղումներից:

Հին հասարակություններում իլիկը՝ որպես երևույթ, և՛ աշխարհիկ պատկերացումներում, և՛ հոգևոր ընկալումներում մշտապես կապվել է թել մանելու խորհրդանշական գործընթացին: Հնուց անտի դա կանանց մենաշնորհն էր: Ըստ այդմ, իգուր չէ, որ իլիկն աշխարհի շատ ժողովուրդների առասպելներում և ավանդագրույցներում այս կամ այն չափով ժամանակի ընթացքին, հավերժությանը, անդ-

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A060 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

րաշխարհին, վերածննդին առնչվող և որոշակի գործառնությունով օժտված կին աստվածների (Արաքնե, Արիադնա, հունական՝ Մոյրաներ, հռոմեական՝ Պաուկեր, սկանդինավյան՝ Նոռներ, սլավոնական՝ Ռոժանիցաներ և այն) անհրաժեշտ խորհրդանիշն է ու գործողությունների անմիջական միջոցը:

ГЕВОРГЯН Лианна (Армения)

«Служба по охране исторической среды и историко-культурных музеев-заповедников» ГНКО

Армянский государственный педагогический университет
e-mail: glp61@mail.ru

ВЕРЕТЕНО КАК ИСТОЧНИК ДЛЯ АРХЕОЛОГИЧЕСКИХ И ЭТНОГРАФИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ

Одной из важнейших функций современного музея является изучение, сохранение и передача последующим поколениям материального и нематериального культурного наследия.

Только лишь рассматривая явление на синхронных и диахронных уровнях, проведя логическую цепь от археологических артефактов к тождественным этнографическим, можно наблюдать и воспринимать происхождение и трансформацию конкретного культурного феномена.

В данной области современная наука предлагает современный и эффективный метод исследования. Это систематизированное проведение реальных, обоснованных и глубоких исследований, интерпретаций и обобщений о формировании, развитии, использовании, социализации и других возможных трансформациях каждого артефакта.

В этом контексте и рассматриваются веретена в данной статье.

Веретена бытового и ритуального назначения использовались уже в древних обществах Месопотамии, Египта, Малой Азии и Индии.

Большое количество веретен, датируемых начиная с VI-I тыс. до н.э. из кости, камня, глины и дерева были найдены также на территории Армянского нагорья из поселений и некрополей энеолита-железного века (Тилки Тепе, Пулур, Акнашен, Араташен, Шенгавит, Мохраблур, Мец Сепасар, Лчашен, Артик, Лори берд, Сотк, Сарухан, Эребуни, Аргиштихинили, Кармир блур и др.).

В древних обществах веретено, как явление, и в мирских, и в духовных представлениях всегда было связано с символическим процессом прядения нити. С незапамятных времен это было монополией женщин. Именно поэтому, не случайно, что в мифах и легендах многих народов мира веретено в той или иной мере являлось символом и необходимым атрибутом наделенных определенными функциями божеств женского пола, связанных с течением времени, вечностью,

загробной жизнью, перерождением (Аракна, Ариадна, греческие Мойры, римские Парки, скандинавские Норны, славянские Рожаницы).

GEVORGYAN Lianna (Armenia)

“Service for the Protection of Historical Environment and
Cultural Museum-Reservations” NSCO
Armenian State Pedagogical University
e-mail: glp61@mail.ru

SPINDLE AS A SOURCE OF ARCHEOLOGICAL AND ETHNOGRAPHIC RESEARCH

One of the most important functions of a modern museum is researching, preserving and transmitting the sources of tangible and intangible cultural heritage.

It is only possible to survey and perceive the formation and development of a specific cultural phenomenon forming from archeological artefacts to the same ethnographic sources as a simultaneous and asynchronous logical chain.

At present, science offers a more effective and modern method of research in this field. It is the systematic implementation of real, sound and in-depth conclusions, interpretations and generalizations about the formation, development, use, socialization and other possible transformations of each artefact or particular phenomenon.

In this context, this paper touches on the same issues relating to spindles.

Spindles of ordinary life and ritual significance have been used since ancient times in Mesopotamia, Egypt, Asia Minor and India.

A large number of spindles made of bone, stone, clay and wood were found in settlements and tombs from excavations carried out in different parts of the Armenian Highlands in VI-I millennium BC, /Eneolithic period-Iron Age/ (Tilki Tepe, Pular, Aknashen, Aratashen, Shengavit, Mokhrablur, Mets Sepasar, Lchashen, Artik, Lori Berd, Sotk, Sarukhan, Erebuni, Argishtikhinili, Karmir Blur, etc).

The spindle as a phenomenon in ancient societies, was always associated with the symbolic process of spinning, both in secular descriptions and spiritual perceptions. It has always been the monopoly of women since ancient times. Therefore, it is not in vain that the spindle in myths and legends of many peoples of the world, is a necessary symbol and direct means of action of goddess (Arachne, Ariadne, Greek Moirai, Roman Parcae, Scandinavian Norns, Slavic Rozhantsy, etc) related to the passage of time, eternity, underworld, rebirth and endowed with certain functions.

ԱՂԱՆՅԱՆ Գրիգոր (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Էլ. փոստ՝ aghanyan@mail.ru

**ԱԼԵՔՍԱՆԴՐՊՈԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԸ 1890-1910-ԱԿԱՆ
ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

Ռուսական կայսրությունում 1870-1880-ականների իրականացված տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումները մեծապես ազդեցին Ալեքսանդրապոլի քաղաքային համայնքի վրա: Շուրջ կես դար արմատացած պետություն - քաղաքային համայնք և տեղական ինքնակառավարում-քաղաքային համայնք ավանդական փոխհարաբերությունները էապես ձևափոխվեցին:

Հայաստանի ազգային արխիվում պահպանվող Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնակառավարման մարմիններին վերաբերող փաստաթղթերի և մեր կողմից հավաքված բանավոր նյութի համադրությամբ փորձ է արվելու ներկայացնել քաղաքային համայնքի կենսագործունեության տարբեր բնագավառները: Նորաստեղծ քաղաքային կառավարչության /Городская управа/ հաշվետվություններում և գրագրություններում հարուստ տվյալներ կան Ալեքսանդրապոլի բնակչության տնտեսական զբաղմունքների, քաղաքի կառուցապատման նորմերի, առողջապահական և սանիտարահիգիենիկ խնդիրների, կրթական գործի կազմակերպման, մշակութային հաստատությունների, սոցիալական հիմնարկների և այլ կարևոր հիմնահարցերի մասին:

АГАНЯН Григор (Армения)

Институт археологии и этнографии НАН РА
e-mail: aghanyan@mail.ru

ГОРОДСКАЯ ОБЩИНА АЛЕКСАНДРОПОЛЯ В 1890-1910 гг.

Реформы местного самоуправления в Российской империи 1870-1880-х годов оказали большое влияние на городскую общину Александрополя. Традиционные отношения государство-город, местное самоуправление-городская община, укоренившиеся почти полвека, существенно изменились. Сделана попытка представить различные сферы жизни городского сообщества путем объединения документов, относящихся к Александропольскому городскому самоуправлению, хранящихся в Национальном архиве Армении, с собранным нами устным материалом. Отчеты и переписка вновь созданной Городской управы содержат богатые данные о хозяйственной деятельности населения Александрополя, нормах городской застройки, медицинских и санитарно-гигиенических проблемах, организации работы учебных заведений, учреждениях культуры, социальных учреждениях и др. важные вопросы.

AGHANYAN Grigor (Armenia)

Institute of Archaeology and Ethnography NAS RA

e-mail: aghanyan@mail.ru

ALEXANDROPOL CITY COMMUNITY IN 1890-1910

Reforms of local self-government in the Russian Empire in the 1870s and 1880s greatly affected the urban community of Alexandropol. The traditional state-urban-local self-government-urban community relationship, which has been ingrained for almost half a century, has changed significantly. An attempt will be made to present the various spheres of life of the urban community by combining the documents related to the Alexandropol city self-government bodies preserved in the National Archives of Armenia with the oral material collected by us. The reports and correspondence of the newly established city administration / Gorodskaya's administration / contains rich data on economic activities of the population of Alexandropol, norms of city construction, health-sanitary-hygienic problems, organization of educational work, cultural institutions, social institutions and other important issues.

ԳՈՒԼԱՔԵԱՆ Յակոբ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Էլ. փոստ՝ hagopcholakian@hotmail.com

ՍՈՒՐԻՈՅ ՀԻՄՆՍԱՐԵԻՄՏԵԱՆ ՃՐՋԱՆԻ ԲՆԻԿ

ԱԼԱՌԻՆԵՐՆ ՈՒ ՀԱՅԵՐԸ

Սուրիոյ հիւսիսարեւմտեան, ներառեալ Ադեքսանդրէթի սանճաքը, դարերէ ի վեր բազմազգ միջավայր մը եղած է: 19-րդ դարուն սիւննի իսլամ խումբին մէջ կը մտնէին արաբները (7-րդ դարէն), թուրքմէնները (11-րդ դարէն), քիւրտերը (12-րդ դարէն): Քրիստոնէայ փոքրամասնութիւններ են հռոմէները (Ք.ա. 3-րդ դարէն) եւ հայերը (Ք. ա. առաջին դարէն): Սուրիոյ ալաուիները քանանացիներէն, իսկ ըստ ուրիշ տեսակէտի մը՝ Սուրիոյ հիթիթներէն սերած կը համարուին:

Ալաուիները կը ներկայացնեն այս աշխարհագրական շրջանին բնակչութեան երկու երրորդը, կ'ապրին Լիբանանի հիւսիսէն՝ Աքքարէն մինչեւ Տաւրոսեան լեռնաշղթայ, Որոնդէս գետի ձախ ափէն մինչեւ ծովեզերք: Ծովադէմի լեռնաշղթան կը կոչուի ճիշակ Ալաուիին՝ Ալաուիթ լեռներ: Անոնց գրականը համընդհանուր արարելէն է, իսկ խօսակցականը ունի բարբառային իր յատուկ երանգը: Ունին քանի մը տոհմային խմբաւորումներ՝ խուսէյպիէ, հայտարիէ, քիլազիէ, մըրըշտիէ:

Շրջանի բնիկ հայերը 19-րդ դարու պատկերով հիմնականին կեդրոնացած էին Պէլյանի, Սուէտիոյ եւ Քեսապի գաւառակներուն, Ռուհի հովիտին, Պոտամայի սարահարթին եւ Տերիւս լեռան վրայ ցրուած գիւղերուն մէջ ու ամենօրեայ շփումներ ունէին ալաուի տարրին հետ:

Հայերն ու ալաուիները հիմնականին գիւղական բնակչութիւնը կը ներկայացնէին ու գէթ մինչեւ Իպրահիմ փաշայի իշխանութիւնը (1832-1842)՝ հանդերձ ընտանեօք իբրեւ մարապա (քառորդ եկամուտը ստացող) կ'աշխատէին սիւննի (քիւրտ ու թուրքմէն) վասալներու կողմէ բռնագրաւուած կալուածներուն մէջ:

Օսմանեան իշխանութեան մէջ պաշտօնապէս ընդունուած ինքնութենէ գուրկ էր ալաուի տարրը, չունէր նոյնիսկ «միլլէթ»ի կարգավիճակ, ինչպէս ունէին իսլամ, հրեայ եւ քրիստոնէայ դաւանանքները իրենց բոլոր յարանուանութիւններով: Ուղղափառ մուսուլմանները ալաուիները կը համարեն հերետիկոսներ, որովհետեւ անոնց տօնախմբութիւններուն եւ ծէսերուն մէջ առկայ էին հեթանոսական եւ քրիստոնէական շատ տարրեր: Ան կը նկատուէր ընդհատակեայ դաւանանք: Ալաուիները թուրքմէններու կողմէ կը կոչուէին Ֆելլահ՝ հողագործ, իսկ հայոց կողմէ թաթ՝ չարքաշ աշխատող:

Չեկոյցը նիւթ կը դարձնէ հայ եւ ալաուի բնիկներուն պատմական, կրօնադաւանական, պաշտամունքային եւ ազգագրական նմանութիւններն ու փոխազդեցութիւնները:

ЧОЛАКЯН Акоп (Армения)

Институт археологии и этнографии НАН РА
e-mail: hagogcholakian@hotmail.com

МЕСТНЫЕ АЛАВИТЫ И АРМЯНЕ НА СЕВЕРО-ЗАПАДЕ СИРИИ

Северо-запад Сирии, включая санджак Александрии, на протяжении веков был многонациональной средой. В 19 веке исламская суннитская группа состояла из арабов (с 7 века), турок (с 11 века) и курдов (с 12 века). Христианскими меньшинствами были греки (с III века до н. э.) и армяне (с I века до н. э.). Алавиты Сирии считались хананеями или потомками хеттов Сирии. Алавиты составляют две трети населения этого географического региона, проживающего в северной части Ливана, от Аккара до Таврских гор, от левого берега реки Орондас до Средиземного моря. Горная цепь моря называется Алавитскими горами. Литературный язык повсеместно арабский, и в разговоре есть свой особый диалект. И есть много племенных групп, таких как хайдари, хубеси, килази, миришди. Коренные армяне, как и в 19 веке, населяли Бейлан, Суведие и Кесаб, деревни в долине Руж, на плато Потама, на горе дерус или Небеноус. Они ежедневно контактировали с алавитами. До правления Ибрагим-паши (1832-1842) алавиты работали марабами (получавшими четверть дохода) в землях суннитских вассалов. Алавиты не имели идентичности в Османской империи. Мусульмане-сунниты и шииты считали алавитов

еретиками, потому что в их праздниках и ритуалах было много языческих и христианских элементов. Турки называли алавитов «феллахами», а армян – «татами». Этот отчет посвящен историческим, религиозным и этнографическим сходствам и взаимодействию между коренными армянами и алавитами.

TCHOLAKIAN Hagop (Armenia)

Institute of Archaeology and Ethnography NAS RA

e-mail: hagopcholakian@hotmail.com

LOCAL ALAWITES AND ARMENIANS IN THE NORTHWEST OF SYRIA

The northwest of Syria, including the sanjak of Alexandria, has been a multinational environment for centuries. In the 19th century, the Islamic sunni group consisted of Arabs (from 7th century), the Turks (from 11th century), and the Kurds (from 12th century). Christian minorities were Greeks (from 3rd century B.C.E.) and Armenians (from first century B.C.E.). The Alawites of Syria were considered as canaanites, or the descendants of the Hittites of Syria. The Alawites represent two-thirds of the population in this geographical region, living in the northern part of Lebanon, from Akkar to the Taurus Mountains, from the left bank of the Orondas River to the Mediterranean Sea. The mountain range of the sea is called the Alawite Mountains. Literary language is universally Arabic, and the conversation has its own distinctive dialect. And there are many tribal groups, such as haydari, khoubesi, kilazi, mirishdi.

The native Armenians, as it was in the 19th-century, inhabited in Beylan, In Suwediye and Kessab districts, the villages in the valley of Rouge, on the plateau of Potama, and on the mount Derus or Nebenous. They had daily contact with Alawites. Until the reign of Ibrahim Pasha (1832-1842) Alawites worked as maraba (who received the quarter of the income) in the lands of sunni vassals. Alawites had no identity in the Ottoman Empire. Sunni and Shiah Muslims were considered the Alawites to be heretics, because they had many pagan and Christian elements in their festivals and rituals. The Alawites were called “Fellah” by Turks and “Tat” by Armenians. This report is about the historical, religious, and ethnographical similarities and interactions between indigenous Armenian and Alawite people.

ՊՈՂՈՍՅԱՆ Սվետլանա (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի
պատմության ազգային թանգարան
Էլ. փոստ՝ sv_ethnomuseum@yahoo.com

**ՏՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻԿՐՈՏԻԵՉԵՐՔ. ԳՅՈՒՄՐԵՑԻ ԿԱՆԱՆՑ
ՄԱՔՐԱԿԵՆՑԱԳՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Տունը ավանդական մշակույթի կրող յուրաքանչյուր հայի միկրոտիեզերքն է, որտեղ պարբերաբար իրականացվել և իրականացվում են նորոգչական, ներդաշնակեցման, կարգի բերելու և կարգավորելու, «քառսը կոսմոսի» վերածելու գործընթացներ: Կնոջ կենցաղի մեծագույն մասը անցել է իր թագավորությունում՝ տանը, որտեղ և նա անց է կացրել իր առտնին կյանքը: Այս առումով առանձնահատուկ է Գյումրու քաղաքային կենցաղը և առանձնապես գյումրեցի տանտիկիներին կենսագործունեությունը: Բացի մարմնի հիգիենայի, հաղորդակցման և շփման խնդիրները բաղնիքում՝ կանանց յուրահատուկ «ակումբներում» հոգալուց, կանայք առանձնահատուկ խնամք և հոգածություն են դրսևորել իրենց տան և իրենց տնօրինության տակ գտնվող տարածքների, առարկաների և միջավայրի նկատմամբ:

Ըստ գրավոր ազգագրական, գեղարվեստական գրականության և կինոարվեստի նյութերի՝ գյումրեցի կանանց բնութագրական գծերից էր մաքրակենցաղությունը և կոկիկությունը, որը հաճախ դարձել է հանրային կարծիքի, քննարկման առարկա:

Կանայք հատուկ պատրաստվել են ձմռանը և տան մաքրություն կատարել տարբեր սեզոնների՝ վաղ գարնանը և աշնանը: Առանձնահատուկ բնույթ ունեին բուրդ լվանալու, թել մանելու, լվացք անելու և տունը մաքրելու՝ «թոզ առնելու», սենյակները «պռչելու», պատերը սպիտակեցնելու գործընթացները: Լվացք արել են հատուկ կարգով, արդու կել միայն սպիտակեղենը, անկողնու ծածկոցները, բարձի երեսները, պատի սրբիչը և «դրսի» տոնական զգեստները:

Տունը պարբերաբար տոների նախօրեին, հանդիսություններին ընդառաջ կապիտալ մաքրելու և կարգի բերելու սովորույթը կենսունակ մնաց մինչև մեր օրերը:

ПОГОСЯН Светлана (Армения)

Институт археологии и этнографии НАН РА
Мемориальный комплекс Сардарapatской битвы,
национальный музей этнографии армян и истории освободительной борьбы
e-mail: sv_ethnomuseum@yahoo.com

**ДОМ КАК МИКРОКОСМОС: ОСОБЕННОСТИ ЧИСТОПЛОТИЯ
ЖЕНЩИН ГЮМРИ**

Дом-микрокосмос каждого армянина, носителя традиционной культуры, где периодически осуществлялись и осуществляются процессы обновления, гармонизации, приведения в порядок и регулирования, превращения хаоса в космос. Большая

часть быта женщина проводила в своем царстве - в доме, где и проходила вся ее повседневная жизнь. В этом плане своеобразен и городской быт города Гюмри, и жизнедеятельность гюмрийских домохозяек. Помимо заботы о гигиене тела и общении в уникальных женских «клубах» - в банях, женщины проявляли особую заботу и уход за своим домом и помещениями, предметами и окружающей средой, которые находились в их распоряжении.

По материалам письменной этнографической и художественной литературы, одной из характерных черт гюмрийских женщин было чистоплотие, которое часто становилось предметом общественного мнения и обсуждений. Женщины специально готовились к зиме и делали уборку дома в разные сезоны. Особый характер имели процессы стирки и прядения шерсти, стирки и уборки дома, «вытирание пыли».

POGHOSYAN Svetlana (Armenia)

Institute of Archaeology and Ethnography NAS RA
Memorial Complex of Sardarapat Battle,
National Museum of Armenian Ethnography and History of Liberal Struggle
e-mail: sv_ethnomuseum@yahoo.com

**THE HOUSE AS A MICROCOSM: FEATURES OF CLEANLINESS OF
THE WOMENS OF GYUMRI**

The house is a microcosm of every Armenian, a bearer of traditional culture, where the processes of repair, harmonization, tidying up and regulation, transformation of chaos into space have been and are still carried out periodically. Most of the woman's life was spent in her kingdom-in the house, where she spent her daily life. In this regard, the urban way of life of the city of Gyumri and its housewives is specific. Besides taking care of body hygiene and communicating with each other in the unique women's "clubs", in baths, women showed special care for their home and premises, objects and the environment that were at their disposal.

According to the materials of written ethnographic and fiction literature, one of the characteristic features of Gyumri women was cleanliness, which often became the topic of public opinion and discussion. Women specially got prepared for the winter season and cleaned the house in different seasons as well. The processes of wool washing and spinning, doing the laundry, cleaning the house and "dust wiping" had a special character.

ԲԱԶԵՅԱՆ Կարինե (Հայաստան)

«Հ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Էլ. փոստ՝ bazeyan60@yandex.ru

**ԱԼԵՔՍԱՆԴՐՊՈԼ-ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
1920-1930 ԹԹ.**

1920 թ. Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումն ու տնտեսավարման նոր՝ պետական եղանակին անցնելը էական փոփոխություններ առաջացրեցին Ալեքսանդրապոլի ավանդական տնտեսության մեջ: Նախկինում զարգացած արհեստավորական ավանդույթներ ունեցող քաղաքում սկսվեցին լուրջ տեղաշարժեր, որոնց արդյունքում որոշակիորեն փոխվեցին ոչ միայն բնակչության հիմնական զբաղմունքները, այլև տնտեսական, հասարակական հարաբերություններն ու դրանով պայմանավորված նաև կենցաղավարման մյուս ձևերը: 1918 և 1920 թթ. թուրքական ավերիչ արշավանքներից հետո ստեղծված սոցիալ-տնտեսական բարդ ու ծանր պայմաններում նման խորքային վերափոխումները դանդաղ էին ընթանում: Անցումային այդ խառը ժամանակների մասին հարուստ տեղեկություններ են պարունակում արխիվային նյութերն ու ժամանակի մամուլի, մասնավորապես՝ տեղական «Բանվոր» թերթի հրատարակումները, որոնք հնարավորություն են տալիս վերականգնելու ավանդական քաղաքային մշակույթ ունեցող Ալեքսանդրապոլից նոր՝ արդյունաբերական, խորհրդային Լենինականի անցման գործընթացը:

Չեկուցման մեջ ներկայացվելու են արհեստավորների ու արդյունագործական ձեռնարկությունների՝ խորհրդային արտադրահարաբերություններին հարմարվելու պրակտիկաներն ու պետական տնտեսավարմանն ինտեգրվելու ձևերը, ինչպես նաև նոր՝ բանվորական դասի ձևավորման առաջին քայլերն ու դրան ուղեկցող գործընթացները:

БАЗЕЯН Карине (Армения)

Ширакский центр арменоведческих исследований НАН РА
e-mail: bazeyan60@yandex.ru

ЭКОНОМИКА АЛЕКСАНДРОПОЛЯ-ЛЕНИНАКАНА В 1920-1930 ГГ.

Установление советской власти в Армении в 1920 г. и переход к новому режиму правления привели к значительным изменениям в экономической жизни Александрополя. В городе, с хорошо развитой ремесленной традицией, начались серьезные перемены, в результате которых изменились не только основные занятия населения, но и экономические, общественные отношения и, обусловленно этим, другие формы жизни. В сложных социально-экономических условиях, создавшихся после разрушительных турецких нашествий в 1918 и 1920 гг., столь глубокие преобразования происходили медленно. Архивные материалы и публикации пре-

сы того времени, в частности местной газеты «Банвор», содержат массу сведений об этом переходном времени, позволяющих восстановить процесс перехода от традиционного города Александрополя к советскому промышленному Ленинану.

В докладе будут представлены адаптационные практики ремесленников и производственных предприятий к новым-советским производственным отношениям и пути их интеграции в государственную экономику, а также первые шаги формирования рабочего класса и сопутствующие его процессы.

BAZEYAN Karine (Armenia)

Shirak Center for Armenological Studies of NAS RA

e-mail: bazeyan60@yandex.ru

THE ECONOMY OF ALEXANDRAPOL-LENINAKAN IN 1920-1930

Significant changes took place in the economic process of Alexandrapol after the Red Army invasion of Armenia in 1920 and the transition to a new state-run economy. Serious changes began in a city with a well-developed craft tradition, as a result of which not only the main occupations of the population changed, but also the economic, social relations and, consequently, other forms of livelihood.

Such profound transformations created in difficult and hard socioeconomic conditions were getting slower after the devastating Turkish invasions of 1918 and 1920. Archival materials and publications in the press of the time, particularly the local newspaper “Banvor”, contain great information about these mixed transitional times, which give an opportunity to reconstruct the process of transition from Alexandrapol, which has a traditional urban culture to a new, industrial Soviet Leninakan.

The practices of artisans and industrial enterprises adapting to Soviet industrial relations and the ways of integrating into the state economy, as well as the first steps of the formation of the working class and the accompanying processes will be presented in the report.

ԵՐԱՆՈՍՅԱՆ Արգամ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի
պահպանության ծառայություն
Էլ. փոստ՝ agyeranos@gmail.com

**ԿԻՐՃԻՑ՝ ՀԱՐԹՎՎԱՅՐ. ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՄՈԳԵԼԻ ԳՅՈՒՂԻ
ՁԵՎՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԳՈՐԻՍԻ
ՏԱՐԱԾԱՇՐՉԱՆՈՒՄ**

XIX դարում Սյունիքում Ռուսական կայսրության հաստատումը, կայագործի տեղակայումը, արդյունաբերության և տնտեսաձևերի ի հայտ գալը զգալի ազդեցություն ունեցան տարածաշրջանի սոցիալ-մշակութային միջավայրի փոխակերպման վրա: Զարանձավային բնակարանը աստիճանաբար փոխարինվում էր 2-3 սենյականոց արևահայաց տների, որոնցում երդիկը փոխարինվեց պատուհաններով, որոնք բացվում էին դեպի ընդարձակ պատշգամբ: Երկու հարկ ունեցող տների պարագայում վերին հարկը ծառայում է որպես բնակարան, ստորինը՝ որպես խոհանոց, թոնրատուն մառան, պահեստ կամ ախոռ:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո՝ գյուղատնտեսության կոլեկտիվացմանը զուգընթաց, սկսվեց Սյունիքի բնակավայրերի տեղափոխությունը կիրճերից մոտակա սարահարթեր: Տեղափոխման այս գործընթացին ինչ-որ չափով օժանդակեց 1931 թ. ապրիլի 27-ին Սյունիքում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժը, որի հետևանքով տասնյակ բնակավայրեր հիմնահատակ ավերվեցին, տեղափոխման մյուս կարևոր պատճառն էր այս շրջանին բնորոշ սողանքները: Բնակավայրերի վերականգնողական աշխատանքների ժամանակ մի շարք բնակավայրերի համար սարահարթերում նոր շինություններ կառուցվեցին, սակայն վատ եղանակային պայմանների պատճառով բնակիչները հրաժարվեցին սարահարթեր տեղափոխվելուց: Տեղափոխված որոշ գյուղերի պարագայում էլ հին բնակավայրերը, լինելով հասանելի բնակիչներին, մասամբ շարունակում էին օգտագործվել ողջ խորհրդային և նույնիսկ հետխորհրդային շրջանում, սակայն հիմնականում դրանք լքվեցին: Այսպիսով, լքված բնակավայրերի բնակարանների մի մասը պահպանեց ավանդական տան կառուցվածքը, և որոշ դեպքերում տեսանելի է հին գյուղի թաղային դասավորությունը:

Բնակավայրերի տեղափոխության առավել զանգվածային հոսքը սկսվեց Երկրորդ աշխարհամարտից հետո՝ 1950-70-ականներին: Բնակավայրերի տեղափոխման հարցում կարևոր էին նաև Որոտանի հիդրոէլեկտրակայանի կառուցման աշխատանքները, որոնց ընթացքում բնակիչները շինանյութ հայթայթելու հնարավորություն են ստացել: Նոր բնակարանների կառուցման նպատակով, բնակիչները հաճախ օգտագործել են նաև հին տների շինաքարը: Այդ տարիներին բուն քարանձավային հատվածը հիմնականում ծառայել է որպես օժանդակ տնտեսական կառույցներ՝ մառան, գոմ, հացատուն ևն: Յուրաքանչյուր թաղ, որտեղ մեծ մասամբ

ապրում էին նույն գերդաստանից առանձնացված ընտանիքներ, կրում էր այդ ազգի անունը. դրանք մինչ օրս ամրապնդված են, ինչպես օրինակ՝ Խնձորեսկում:

ЕРАНОСЯН Аргам (Армения)

Институт археологии и этнографии НАН РА
“Служба По Охране Исторической Среды
и Историко-культурных Музеев-заповедников”
e-mail: agyeranos@gmail.com

ОТ УЩЕЛЬЯ ДО РАВНИНЫ. ФОРМИРОВАНИЕ И ПРОЦЕСС МОДЕРНИЗАЦИИ СЕЛА СОВЕТСКОЙ МОДЕЛИ В ГОРИССКОМ РЕГИОНЕ

В XIX веке установление Российской империи в Сюнике, размещение гарнизона, появление промышленности и экономики оказали значительное влияние на трансформацию социокультурной среды региона. Пещерные жилища постепенно заменялись 2-3-комнатными солнечными домами, в которых «ертик» был заменен окнами, открывающимися на просторный балкон. В случае домов с двумя этажами верхний этаж служил квартирой. Внизу-кухня, пекарня или склад. После установления советской власти в Армении, параллельно с коллективизацией сельского хозяйства, начался переход населенных пунктов Сюника из ущелий на близлежащие плоскогорья. В какой-то мере этому процессу переселения способствовало разрушительное землетрясение в Сюнике (27 апреля 1931 года) в результате которого были разрушены десятки населенных пунктов. Во время реставрационных работ для ряда населенных пунктов на плато были построены новые здания, однако из-за плохих погодных условий жители отказались переезжать на плоскогорье. В случае некоторых переехавших сел старые поселения, будучи доступными жителям, частично продолжали использоваться на протяжении всего советского и даже постсоветского периода, однако в основном они были заброшены.

Наиболее массовый поток переселения поселений начался после Второй мировой войны, в 1950-70-х годах. В вопросе переселения населенных пунктов важную роль также играла строительство Воротанской ГЭС, в ходе которых жители получили возможность добывать стройматериалы. Для строительства новых квартир жители часто использовали и строительный камень старых домов. В те годы пещерная часть в основном служила вспомогательными экономическими структурами, такими как кладовая, сарай, пекарня и т. д.. Каждый район, в котором по большей части жили семьи, отделенные от одного и того же рода, носил имя этого рода, который до сих пор закреплен, как в Хндзореске.

YERANOSYAN Argam (Armenia)

Institute of Archeology and Ethnography of the NAS RA
“Service for the Protection of Historical Environment
and Cultural Museum-Reservations”
e-mail: agyeranos@gmail.com

**FROM CANYON TO TABLELAND: FORMATION AND PROCESS OF
MODERNIZATION OF THE SOVIET MODEL VILLAGE
IN THE GORIS REGION**

In the XIX century, the establishment of the Russian Empire in Syunik, the deployment of a garrison, the emergence of industry and economy had a significant impact on the transformation of the socio-cultural environment of the region. The cave dwellings were gradually replaced by 2-3-room sunny houses, in which the attic was replaced by windows opening onto a spacious balcony. In the case of houses with two floors, the upper floor serves as an apartment, the lower one serves as a kitchen, bakery pantry, storage, or a barn.

After the establishment of Soviet regime in Armenia, in parallel with the collectivization of agriculture, the transition of the settlements in Syunik started from the gorges to the nearby plateaus. To some extent, this transportation process was facilitated by the devastating earthquake that occurred on April 27, 1931, in Syunik. As a result, dozens of settlements were destroyed. During the restoration work, new buildings were built for several settlements on the plateau. However, due to bad weather conditions, residents refused to move to the plateau. In the case of some relocated villages, the old settlements that were still accessible to the residents, partially continued to be used throughout the Soviet and even post-Soviet period, but they were mostly abandoned.

The most massive flow of relocation started after the Second World War, from the 1950s through 1970s. In terms of relocation, Vorotan hydroelectric power plant (HPP) construction is also important, during which residents had the opportunity of utilizing building materials. For the construction of new apartments, residents often used the building stones of old houses. In those years, the cave section mainly served as adjunct economic structures, such as a pantry, a barn, a bakery, etc. In every district where families having the same family roots, the name of the family name who are still which is still fortified, as in Khndzoresk.

ՄԿՐՏՉՅԱՆ Սամվել (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Երևանի պետական համալսարան
Էլ. փոստ՝ sam1959dok@mail.ru

**ԿԻՐՈՎԱԿԱՆՑԻՆԵՐԻ ՏՈՆԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ**

Խորհրդային սկզբնական փուլում կիրովականցիների շրջանում արմատապես փոխվեցին ավանդական տոների տարածման մասշտաբները, որոնք կապված էին պետական քաղաքականության հետ: Արդյունքում, այդ տոների անկմանը զուգընթաց, կենցաղ ներթափանցեցին խորհրդային և միջազգային հեղափոխական բնույթի տոները:

Տվյալ շրջանն առանձնանում էր ընդգծված հակակրոնական քաղաքականությամբ, որի գլխավոր թիրախը եկեղեցական տոներն ու ծեսերն էին: Այդ քաղաքականության կազմակերպիչները հիմնականում հանրապետական և մասնավորապես՝ Ղարաքիլիսայի տեղական «Անաստված» կազմակերպություններն էին:

В сборнике материалов международной конференции в Лос-Анджелесе (2002, Университет Калифорнии) «Понтийские армяне: общины Трапезунда и Черного моря» (2009, англ.) эта ошибка встречается в докладах некоторых авторов (Ован Симонян, Клэр Мурадян, Роберт Хьюсен, Игорь Кузнецов).

«Homshetsma» проник также в очередной том серии «Языки мира» Института языкознания РАН (2013) и в первый том энциклопедии «Армяне Причерноморья» (2020, Москва).

Всюду отвергаются использовавшиеся в научных публикациях 110, 115, 120 лет назад термины «диалект Амшена», «диалект амшенских армян», «диалект амшенцев».

VARDANYAN Sergey (Armenia)

Institute of Archaeology and Ethnography NAS RA

e-mail: sergeyvardanyan@yahoo.com

ON INCORRECT NAME OF THE DIALECT OF HAMSHEN ARMENIANS

In 1995, Harvard University researchers Bert Vaux, Sergio La Porta and Emily Tucker wrote down folklore, “Temel’s Head” funny story among others, told in Hopa patois of Hamshen dialect by a 25-year-old Muslim Hamshen Armenian, who came to Boston from Turkey. Transcribed in Latin script and translated to English, it was printed

in “Annual of Armenian Linguistics” (1996, Cleveland). The authors noted that, at the informant’s request, his and his village names are not mentioned.

In the article “Hemshinli: the Forgotten Black Sea Armenians” in “Journal of Armenian Studies” (2001, Belmont), Bert Vaux added the version of the funny story in Armenian script. It is fair to say that the notes contain valuable folklore material, yet in Hamshen Studies, the wrong name of the patois of converted Hamshen Armenians – “Homshetsma”, used by the informant instead of “Hamshetsnak”, “Homshesnag”, left a greater mark.

From the papers in “Annual of Armenian Linguistics” and “Journal of Armenian Studies”, the error entered circulation. In his second article, Bert Vaux also gave the name “Homshetsma” to the dialects of Christian Hamshen Armenians of Georgia and Russia.

In his paper in “The Hemshin. History: Society and Identity in the Highlands of Northeast Turkey” (2007, London-New York) he and some other authors (Hovann Simonian, Hagop Hachikian, Uwe Bläsing) used the erroneous term.

In the international conference proceedings (2002, UCLA, Los-Angeles) “Armenian Pontus: the Trebizond-Black Sea Communities” (2009), the error is noted in the papers of some authors (Hovann Simonian, Claire Mouradian, Robert Hewsen, Igor Kuznetsov).

“Homshetsma” also occurs in the next volume of the “Languages of the World” series (RAS Institute of Linguistics, 2013, Rus.), and the 1st volume of the encyclopedia “Armenians of the Black Sea Region” (2020, Moscow, Rus.).

The terms “Dialect of Hamshen”, “Dialect of Hamshen Armenians”, “Dialect of Hamshenians”, used in scholarly publications for 110, 115, 120 years, are rejected everywhere.

ՔՈՒՄՈՒՆԻՑ ՄԻԵՐ (Հայաստան)

Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոն
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
Էլ. փոստ՝ mherkumunts@gmail.com

**ԱՐԵՎԵԼՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻՑ ԱՆՑԱԾ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՈՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ (ԸՍՏ ՍՅՈՒՆԻԹ-
ԱՐՑԱԽ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՌԱՊԱԾԱՐԻ)**

Հայերենին անցած փոխառություններին վերաբերող ուսումնասիրությունների հիմնական մասը նվիրված է գրական տարբերակներում տեղ գտած բառերին: Քիչ են ուսումնասիրված բարբառային բնույթի փոխառությունները: Բարբառագի-

տական աշխատանքներում փոխառյալ բառերի տվյալները հիմնականում ամփոփվում են բառացանկերով: Իսկ բարբառային բառապաշարի քննությունը ենթադրում է նաև անդրադառնալ օտար բառերին կամ փոխառություններին: Որքան տարբեր են գրական և բարբառային բնույթի փոխառությունները, նույնքան էլ միանման չէ նրանց շուրջ տարվող քննությունը: Բարբառային փոխառությունները կարելի է քննել մի քանի տեսանկյունից՝ ըստ թեմատիկ խմբերի, ըստ ծագման, խոսքիմասային պատկանելության և այլն: Նպատակահարմար ենք գտնում՝ Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարի փոխառյալ կազմը քննել ըստ որակական և քանակական հատկանիշների: Այն կարևոր տեղեկություններ կարող է հաղորդել ոչ միայն բարբառակիր հանրության տարաբնույթ շփումների, այլև փոխառյալ բառերի կրած ձևիմաստային, բառակազմական, քերականական հատկանիշների վերաբերյալ: Բարբառային փոխառությունների քննությունը կարևոր տեղեկություններ կարող է հաղորդել փոխատու լեզվի հանրալեզվաբանական տվյալների (ասպեկտների) մասին:

Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարում տեղ գտած արևելյան լեզուներից անցած փոխառությունները ըստ անցման ճանապարհի կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

1. Փոխառություններ, որ հին են և բարբառային բառապաշարին անցել են մասնավորապես հայերենի գրական տարբերակներից՝ գրաբար, միջին հայերեն և աշխարհաբար, ինչպես՝ տախտ, իշխան:
2. Փոխառություններ, որ բարբառային բառապաշարին անցել են միջնորդությամբ, այսինքն՝ փոխատու լեզուն այդ բառը փոխառել է մի այլ լեզվից: Այս խմբում տարբերակվում են երկու տիպի բառեր՝
 - Ա. հայերեն բառեր, որ՝ 1. ներկայանում են օտար ձևույթներով՝ բեշնորիք (թեն արմատը իրանական ծագում ունի, բայց հավանական է՝ հայերենում է ստացել բե ածանցը, ինչպես՝ բեհուշ), 2. սխալմամբ ընդգրվում են փոխառությունների շարքում՝ թաղ «գետնատարած բույսերի թուփը», հմմտ.՝ հ.-ե. *tol- «հարթ, հարթ գետին, տախտակ», անգլայի: 3. փոխանցվել են մի այլ լեզվի (մասնավորապես թյուրքերենին), ապա տվյալ լեզվի հնչյունական, մասամբ նաև իմաստաբանական հատկանիշներով կրկին անցել բարբառային բառապաշարին (այսպիսիք շատ են տեղանուններում, ինչպես՝ Դոդար-Դավուտտու, Այվազ-Էյվազար): Տվյալ բառերի ձևիմաստային հատկանիշները, այդուհանդերձ, թույլ չեն տալիս այդպիսիք համարել փոխառություններ, և լեզվաբանական աշխատանքներում պետք է քննել հայերեն (կամ այլևս այդպիսին համարվող) բառերի շրջանակում կամ օտար ձևիմաստային ազդեցությունը կրած բառերի շարքում:
 - Բ. Փոխառություններ, որ ծագումնաբանորեն փոխատու լեզվին չեն պատկանում. դրանցում տակավին զանազանվում են ծագման աղբյուր հանդիսացող լեզվի արտաքին և բովանդակային կողմերը՝ նիագ-նի/ըյաթ, թա՛գա-թա՛զլա՛միշ:
 - Գ. Բառեր, որ չնայած այլ ծագում ունեն, սակայն մթագնել են բուն լեզվի արտաքին և բառանվանական հատկանիշները՝ ավազան-հավուզ:
3. Փոխառություններ, որ բարբառային բնույթի են, հիմնականում Սյունիք-Արցախում են գործածվում, ինչպես՝ խաշփուշ:

4. Բարբառային բնույթի փոխառություններ, որ տարբերակներն ունեն այլ բարբառներում՝ ռանգ, դին:

Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարի՝ արևելյան լեզուներից անցած փոխառությունների հիմնական մասը կազմում են արարական, պարսկական և թյուրքական բառերը:

КУМУНЦ Мгер (Армения)

Центр арменологических исследований Сюника
Институт языка имени Р. Ачаряна НАН РА
e-mail: mherkumunts@gmail.com

КАЧЕСТВЕННЫЕ И КОЛИЧЕСТВЕННЫЕ ОСОБЕННОСТИ ЗАИМСТВОВАНИЙ ИЗ ВОСТОЧНЫХ ЯЗЫКОВ (ПО ЛЕКСИКЕ СЮНИКСКО-АРЦАХСКОГО ДИАЛЕКТНОГО АРЕАЛА)

Основная часть исследования армянских заимствований посвящена словам в литературных вариантах. Есть несколько изученных диалектических заимствований. В диалектологических работах данные заимствований в основном обобщаются в списках слов. Изучение диалектной лексики предполагает обращение также к иностранным словам или заимствованиям. Чем более различаются литературные и диалектические заимствования, тем более неодинаково их рассмотрение. Диалектические заимствования можно рассматривать с нескольких сторон: по тематическим группам, по происхождению, по глагольной принадлежности и т. д. Нам представляется удобным рассмотреть состав заимствований Сюникско-Арцахской диалектической лексики по качественным и количественным признакам. Он может дать важную информацию не только о различных контактах диалектоязычного сообщества, но и о семантических, словообразовательных и грамматических особенностях заимствованных слов. Изучение заимствованных слов может дать важную информацию о социолингвистических данных (аспектах) заимствованного языка. Заимствованные слова Сюникско-Арцахской диалектической лексики, заимствованные из восточных языков, по пути передачи можно разделить на следующие группы:

1. Старые заимствования, перешедшие в диалектическую лексику, особенно из литературных вариантов: древнеармянский, среднеармянский и новоармянский, как տախտ (тахт), իշխան (ишхан).
2. Заимствования, перешедшие в диалектическую лексику опосредованно: заимствованный язык заимствовал это слово из другого языка. В этой группе есть два типа слов:
 - а. Армянские слова, которые 1. Представлены в иноязычных формах: բեշնորք (бешнорк) (хотя корень имеет иранское происхождение, возможно, что он получил суффикс բե в армянском языке: как բեհուշ (бехуш)). 2. Неправильно

включены в список заимствования: թաղ (тах) «кустарниковые наземные растения», сост. *tol - «плоская, ровная площадка, доска», տնգալի (ангял). 3. Были перенесены на другой язык (в частности, на турецкий), затем с фонетическими, отчасти семантическими особенностями данного языка снова перешли в диалектную лексику (их много в топонимах), как Դոգար-Դաւտտու (Догар-Даутту), Այվազ-Քյւվազլար (Айваз-Эйвазлар). Семантические особенности этих слов, однако, не позволяют рассматривать их как заимствования, и в лингвистических работах их необходимо рассматривать в контексте армянских слов или среди слов, имеющих иноязычное семантическое влияние.

- б. Заимствованные слова, изначально не принадлежащие заимствованному языку: в них еще выделяются внешне-содержательные аспекты исходного языка: նիւազ-նի/ըյաթ (ниаз-ни/йят), թաւաւի-թաւաւիմիշ (таза-тазламыш).
- в. Слова разного происхождения, но с затемнением внешних именных признаков исходного языка: աւազան-խաւուզ (авазан-хавуз).
3. Диалектические заимствования, в основном используемые в Сюникско-Арцахском языке, как խաշփուշ (хашпуш).
4. Диалектические заимствования, имеющие версии в других языках: րանգ (ранг), դին (дин).

Основную часть заимствований в Сюникско-Арцахской диалектической лексике, перешедших из восточных языков, составляют арабские, иранские и турецкие слова.

KUMUNTS Mher (Armenia)

Syunik Armenological Research Center
Language Institute named after H. Acharyan NAS RA
e-mail: mherkumunts@gmail.com

QUALITATIVE AND QUANTITATIVE FEATURES OF BORROWINGS FROM EASTERN LANGUAGES (ACCORDING TO THE VOCABULARY OF SYUNIK-ARTSAKH DIALECT AREA)

The main part of the study on Armenian loanwords is dedicated to the words in the literary versions. There are few studied dialectic loanwords. In dialectological works the data of loanwords are mainly summarized in word lists. The examination of the dialect vocabulary supposes to refer also foreign words or loanwords. The more literary and dialectic loanwords are different, the more their examination is not the same. Dialectic loanwords can be examined from several aspects: by thematic groups, by origin, by verbal belonging, etc. We find it convenient to examine the constitution of the loanwords of Syunik-Artsakh dialectical vocabulary according to qualitative and quantitative features. It can provide important information not only about the various contacts of the

dialect-speaking community, but also about the semantic, word-formation, and grammatical features of the loanwords. The examination of loanwords can provide important information about sociolinguistic data (aspects) of the borrowing language. The loanwords of the Syunik-Artsakh dialectic vocabulary borrowed from Eastern languages can be divided into the following groups according to the way they passed:

1. Old loanwords that have passed to the dialectic vocabulary, especially from literary versions: Old Armenien, Middle Armenian and Modern Armenian, as տախտ (takht), իշխան (ishkhan).
2. Loanwords that have passed to the dialectic vocabulary through mediation: the lending language has borrowed that word from another language. There are two types of words in this group:
 - a. Armenian words that 1. Are presented in foreign forms: բեշնորք (beshnorq) (though the radical has Iranian origin, it is possible that it has got the suffix in Armenian: as բեհուշ (behush)), 2. Are incorrectly included in the loanwords list: թաղ (tagh) “shrub ground plants”, comp. *tol - “flat, flat ground, board”, աւնգալի: 3. Were transferred to another language (particularly Turkish), then with the phonetic, partly semantic features of the given language again passed to the dialect vocabulary (there are many in place names), as Դողար-Դավուսոնու (Doghar-Dauttu), Այվազ-Էյվազլար (Ayvaz-Eyvazlar)). The semantic features of these words, however, do not allow them to be considered as loanwords and in linguistic works they must be examined in the context of Armenian words or among words that have a foreign semantic influence.
 - b. Loanwords that do not originally belong to the lending language: the external-substantive aspects of the source language are still distinguished in them: նիազ-նի/ըյաթ (niaz-ni/yyat), թաւիգաւ-թաւիգաւմիշ (taza-tazlamish).
 - c. Words of different origin, but have obscured the external nominal features of the original language: աւազան-հաւուզ (avazan-havuz).
3. Dialectic loanwords mainly used in Syunik-Artsakh, as խաշփուշ (khashpush).
4. Dialectic loanwords that have versions in other languages: ռանգ (rang), դին (din).

The main part of the loanwords in Syunik-Artsakh dialectic vocabulary passed from Eastern languages are Arabic, Iranian and Turkish words.

ԽԱՉԱՏՐՅԱՆ Մարիետա (Հայաստան)

Շիրակի պետական համալսարան
Էլ. փոստ՝ a_hayrapetyan@list.ru

**ԲԱՅԱԿԱՆ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ
ԱՐԺԵՔԸ ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ԱԲՈՒ-ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ» ՊՈԵՄՈՒՄ**

Հայտնի է, որ գեղարվեստական երկը նախ՝ գնահատվում է ձևի և բովանդակության միասնությամբ: Այս իմաստով ներկա պոեմը օրինակ կարող է ծառայել. այն գրական արևելահայերենի աննախադեպ գեղեցկության և անմրցելի հարստության արտահայտություն է: Պոեմի ժանրային առանձնահատկությամբ, ներկայացվող իրականության և ժամանակաշրջանի բովանդակային առանձնահատկություններով, բանաստեղծի լեզվամտածողության և բառընտրության շնորհով է պայմանավորված լեզվատնային միջոցների անօրինակ բազմազանությունը, որի մեջ, սակայն, առանձնահատուկ է դիմավոր բայը: Իր՝ ստորոգյալ դառնալու գործառույթով պայմանավորված՝ այն առանցքային դեր է կատարում խոսքում: Այս հետազոտությունը ևս իրականացվել է լեզու-խոսք հակադրամիասնության հիման վրա: Հենվելով ստորոգյալի՝ նախադասության ծանրաբեռնվածությունն իր վրա կրելու առանձնահատկությանը և անդրադառնալով բայի բոլոր ժամանակաձևերի՝ բայական ստորոգյալ դառնալու մեր լեզվի իրողությունը՝ ներկայացրել ենք բայական ստորոգյալի դրսևորումները պոեմի լեզվում և ըստ արտահայտությունների՝ քննել ենք նրանց իմաստային-ոճական արժեքը: Մասնավորապես գաղափարական-իմաստային տեսակետից արժեքավոր են բայերի հոմանիշ և հականիշ խմբերի գործածությունները, դրական և ժխտական ձևերի գույքորոշումները, դրական և բացասական հարիմաստների համադրումները, ինչպես՝ «Ես չեմ կամենա ողջունել մարդկանց, նրանց սեղանից պատառ չեմ կտրի», սակայն «Գազանների մոտ հացի կնստեմ, ողջունը կամենեմ բորենիների», հոմանիշներ՝ «Մի՞թե կարող է այս մեծ սահարան Պարուրել, գրկել իր ծիրերի մեջ ազատությունը...», հականիշներ՝ «Ծանոթ շները չեն հաչում վրադ, ծանոթ մարդիկ են հաչում քո վրա»: Հուզական մեծ լիցքով օժտված են բայերի փոխաբերական կիրառությունները, ստորոգյալն է գերիշխող դեր կատարում համատեքստում, ինչպես՝ «Եվ արեգական վառ ցնցուղի տակ բոցկլտում էին ուղտերը գվարթ», կամ՝ «Հորիզոնները հրդեհվում էին իրենց ամայի, ազատ ափերում» և այլն:

Ընդգծված բայերի, նաև ուղեկցող այլ բառերի գույքորոշումներով Իսահակյանը մի տեսակ գունավորում է միջավայրը, և արևի ոսկեգույնը վերջին սուրահների գույնն է դառնում:

Բայերի որոշակի իմաստային խմբերի հմուտ գործածություններով Իսահակյանը նաև պոեմին լեզվի ճայն, մեղեդայնություն է հաղորդել, ինչպես՝ «Եվ գալարվում են շեղջերն ավազի, շյում ու ճշում նման օձերին», կամ՝ «Եվ մրրիկները մոնչում էին, արմավն ու նոճին շաչում, շառաչում» և այլն:

Կենդանի խոսքին ռիթմ են հաղորդում բազմաբնույթ կրկնությունները, որոնցով լուծվում են նաև բովանդակայնության և ոճական-հուզական հիմնա-

խնդիրներ, ինչպես՝ «Համայնքից փախի՛ր, փախի՛ր վրեժից, ... փախի՛ր կնոջից, ... շնչահեղձ փախի՛ր մարդու սովերից»:

Ստորոգյալի կրկնությունը գորեղ միջոց է տպավորությունն ապահովելու առումով, այդպես է նաև, երբ ձևաբանական և շարահյուսական ժամանակները չեն համընկնում, այսինքն՝ տեղի է ունենում եղանակաժամանակային ձևերի փոխարինելիություն, և առաջանում է ոճական տեսակետից անփոխարինելի իրողություն՝ հոմանշություն, ստատիկ և ռեյատիվ իմաստների հոմանշություն: Այն ևս բովանդակային – ոճական առումով չափազանց արժեքավոր է, օրինակ՝ «Խարխուլ մակույկով հանձնվի՛ր ծովին, քան թե հավատա կնոջ երդումին» և այլն:

Պոեմի լեզվում բայական ստորոգյալի բոլոր արտահայտությունները բովանդակային-ոճական միասնությամբ իրականություն են դարձնում հեղինակի գեղագիտական նպատակադրումը:

ХАЧАТРЯН Мариетта (Армения)

Ширакский государственный университет
e-mail: a_hayrapetyan@list.ru

СМЫСЛОВАЯ-ХУДОЖЕСТВЕННАЯ ЦЕННОСТЬ ГЛАГОЛЬНОГО СКАЗУЕМОГО В ПОЭМЕ АВ. ИСААКЯНА «АБУ-ЛАЛА-МААРИ».

Не секрет, что художественное произведение оценивается единством формы и содержания. В этом смысле примером может служить указанное выше произведение. Оно является отражением неопишуемой красоты и несравненного богатства восточно-армянского языка. Жанровая специфика поэмы, характерные черты реальности и колорит эпохи, благодаря специфике языкового мышления автора и умелому подбору лексики, предопределили бесподобное обилие стилистических выразительных средств, среди которых особое место занимают личные формы глагола. Эта часть речи, благодаря функции сказуемого в предложении, выполняет центральную роль в речи. Данное исследование проводилось на основе противопоставления-сопоставления язык-речь. Опираясь на функцию сказуемого нести на себе всю нагрузку предложения и видо-временные свойства глагола, а также на способность образовывать глагольное сказуемое, мы представили отражение глагольного сказуемого в языке поэмы и исследовали его смысловую-стилистическую ценность на базе словосочетаний. В частности, ценным с идейно-смысловой точки зрения представляется употребление синонимичных и антонимичных групп глаголов, одновременное употребление утвердительных и отрицательных форм, противопоставление утвердительных и отрицательных значимых глаголов, как, например, в следующих выражениях: «Я не захочу увидеть людей, друзей былых и кровных родных, Я не захочу услышать об них, об их делах, ничтожных и злых!» однако: «Под грозной стеной медно-рыжих скал там сделай привал, меж зверей отдыхай! Где гнезда ехидн, разобью свой шатер! Разобью свой шатер, где спит

скорпион!» Далее употреблены синонимы: «Как свободен, свободен безбрежно я! Ужель берега пустыни сполна Вместят, заключат свободу мою, обнимут свободу без граней, без дна?» Большой эмоциональный заряд несут в себе метафорически использованные глаголы; в контексте ведущую роль играет сказуемое, например: «Под пылающим сонмом небесных лучей над верблюдами словно горели венцы. Немолкнущим звоном, вольней, веселей, свободней звенели везде бубенцы» или «За ним расстилалась пустыня одна, залитая светом, лишь светом одним». Разнообразные повторы создают ритм живого слова, что решает также вопрос содержания и стилистически-эмоционального настроения произведения, например: «... от мерзостных скопищ без капли стыда ... От женщин беги, и беги от любви, от дружбы и мести беги целый день. Мне ненавистно все, что с людьми, мне ненавистна людей даже тень...» Повтор сказуемого – мощное средство в смысле произведения впечатления даже тогда, когда морфологическое время не совпадает с синтаксическим, то есть происходит замена видо-временных форм и возникает незаменимое с точки зрения стилистики явление: синонимия статического и релятивного смыслов. Это тоже очень важно с содержательно-стилистической точки зрения, например: «На ветхой ладье лучше в море плыви, чем женщине, клятве преступной поверь ...» В языке поэмы все выражения глагольного сказуемого своим содержательно-стилистическим единством превращают в реальность художественный замысел автора.

KNACHATRYAN Marietta (Armenia)

Shirak State University
e-mail: a_hayrapetyan@list.ru

THE SEMANTIC-ARTISTIC VALUE OF THE VERBAL PREDICATE IN THE POEM “ABU-LALA-MAHARI” BY AVETIK ISAHAKIAN

It's not a secret that the works of fiction are assessed via the unity of their form and content. In this sense the above mentioned work can serve as a good example: it is a reflection of the indescribable beauty and incomparable vocabulary of the East-Armenian language. Due to the author's unique linguistic thinking and skillful application of the lexical units, the genre specificity of the poem, the characteristic features of the reality, the flavour of the era were able to define the abundance of stylistic devices used in the poem, among which the personal forms of the verbs take a special significance. This part of speech, due to the function of the predicate, plays the central part in speech. The present research was done on the language – speech comparison - contrast. Basing upon the function of the predicate to carry the whole load of the sentence, as well as on the tense-aspect features of the verb and its ability to form a verbal predicate, we present the expression of the verbal predicates in the poem and study their semantic-stylistic value within the phrases. In particular, from the ideological

and semantic point of view, it is interesting to observe the use of synonymous and antonymous verb-groups with the simultaneous use of the positive and negative forms, contrasting the positive and negative forms of meaningful verbs, e.g.: “I will not return to the haunts of men, nor will salute them or with them eat...” However “the beasts of the wild my comrades shall be, with them I will gladly sit down to meat...”; the synonyms: “... Did the desert perform this miracle? Has it taken me into its sandy arms my tortured spirit to soothe and still?” the antonyms: “The dog who calls you his friend will not bite; the friend will attack and slander your deeds.”

Of great emotional load are the verbs used metaphorically; in the context the predicate plays the leading part, e.g.: “With loosened halters the camels flew on – exalted, alert, still quickening their pace...” or “... All the horizon, the wastes of sand, and the desert around flame fiery red...” Various repetitions represent the rhythm of the live word, thus solving the problem of the content and the stylistic-emotional colouring of the poem, e.g.: “Escape from it all – from the vengeance of man – his bloodstained justice and righteousness; Fly from your friend, your wife and your love – discard all those pleasures that storm and stress...” The repetition of the predicate is a powerful device for making an impression even when the morphological and syntactical tenses do not correspond, i.e. when the change of the tense-forms takes place calling forth an interesting, from the viewpoint of stylistics, phenomenon – synonymy, synonymy of the stative and relative meanings. It is also very important from the semantic-stylistic aspect. “Trust yourself to the sea, in a rotten boat, but never trust a woman’s word...”, etc. In the language of the poem, all the verbal expressions turn the author’s artistic ideas into a reality due to the semantic-stylistic features of the verbal predicate.

ՄԵՍՐՈՊԵՄՆ Հայկանուշ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
Էլ. փոստ՝ haykanushm@mail.ru

**ՇԻՐԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԾՎԱԾ
ԲՈՒՄԱՆՈՒՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ-ԳՈՐԾԱՌԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Շիրակի ժողովրդական երգերում գործածված են մի շարք բուսանուններ, հարակից կամ ածանցյալ հասկացություն նշող լեզվական միավորներ, որոնք ներկայացրել ենք երեք հիմնական խմբով:

ա) Որոշակի բույս, ծառատեսակ կամ ծաղկատեսակ նշող անուններ (ծներակ, թրթնջուկ, ըռեհան, սուսամբար, խնկի, չինարի և այլն): Ուշագրավ է մեխակի ծառաակապակցությունը:

- բ) Բույսից ածանցյալ, բույսի արդյունք նշող բառանվանումներ. «բար», «պտուղ» նշող բառեր (դամբուլ, Էրըվընու նուռ, շամամ, ցորեն, գարի, բրինձ, բիրբար և այլն):
- գ) Բույս հասկացությանն առնչվող, բույսով պայմանավորվող իրողությունն նշող բառեր (բաղչա, արտ, ցել, բանջրիսի, մեշա և այլն):

Ժողովրդական խաղիկներում բուսաբառերն ունեն ոչ միայն լեզվաոճական արժեք, այլև բանաստեղծական երգատողը հանգավորելու նպատակ (Երևան ասի-Բաղդաստ խուրմասի, բութա-բութա-կարմիր թութա ա, ծնեփակ-արեգակ, դամիշ-եմիշ և այլն):

Փոխառյալ բուսաբառեր են՝ մեյվա, դարանֆիլ, չիչակ, չիման, ֆիշնա և այլն:

Այսպիսով, Կարնո բարբառի Ծիրակի խոսվածքով ժողովրդական երգերում ընդգրկված բուսանունները հատկանշում են տվյալ տարածքի բուսապատկերը, այլև շիրակցիների յուրօրինակ լեզվամտածողությունը, ժողովրդական չափածոյում դրանց գործածության հմտությունը՝ հարստացնելով հայերենի բառապաշարը:

МЕСРОПЯН Айкануш (Армения)

Институт языка имени Р. Ачаряна НАН РА
e-mail: haykanushm@mail.ru

ФУНКЦИОНАЛЬНО- СМЫСЛОВАЯ ХАРАКТЕРИСТИКА НАЗВАНИЯ РАСТЕНИЙ, ИСПОЛЬЗУЕМЫХ В НАРОДНЫХ ПЕСНЯХ ШИРАКА

Исследование названий растений в лексике армянских диалектов важно для разделения семантических групп словарного запаса и развития лексикологии. Слова, обозначающие названия растений, помимо диалектных версий, имеются в исконно армянской, общепотребительной лексике армянского языка и имеют ряд синонимов, которые в положительном или отрицательном смысле особенно отражаются в народных произведениях. В народных песнях Ширака встречаются три основные группы названия растений и фруктов, которые имеют стилистическое значение.

MESROPYAN Haykanush (Armenia)

Language Institute Named after H. Acharyan NAS RA
e-mail: haykanushm@mail.ru

SEMANTIC AND FUNCTIONAL CHARACTERISTICS OF PLANT NAMES IN SHIRAK'S FOLK SONGS

The investigation of plant names in Armenian dialects is important for the division of semantic groups and development of general lexicology. Words indicating plant names have native Armenian origin have and synonymic paradigms, which are reflected in positive or negative terms in especially oral traditional creations. In the folk songs of Shirak, there are three main groups of plant names and fruits, which have stylistic value.

ԲԵՐԻՉԵ ՄԵՐԱՔ (Վրաստան)

Սամցխե-Չավախեթի պետական համալսարան

ԲԵՐԻՉԵ ՄԱԿԱ (Վրաստան)

Սամցխե-Չավախեթի պետական համալսարան

Էլ. փոստ՝ beridzemaka@gmail.com

**ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԻ ԳԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ
ՄԱՄՑԽԵ-ՉԱՎԱԽԵԹՈՒՄ**

Բազմալեզնիկությունն նշանակում է բազմազգություն, հիմնականում տերմինը վերաբերում է երկու կամ ավելի էթնիկ խմբերի համակեցությանը մեկ պետության մեջ և մեկ պետական լեզվի շրջանակներում:

Սամցխե-Չավախեթին գտնվում է Վրաստանի հարավում, այս տարածաշրջանը դեռ XX դ. վերջում բնակեցված էր բազմազգ բնակչությամբ: Այսօր հիմնականում վրացիներն ու հայերն են ապրում: Այսպիսով, տարածաշրջանում բազմազգություն ասելով նկատի ունենք երկազգություն:

Բազմալեզնիկ միջավայրը, որն այսօր գոյություն ունի Սամցխե-Չավախեթում, ձևավորվել է վերջին երկու դարերի ընթացքում: Տարածաշրջանի էթնիկ դեմքի վերջնական ձևավորման գործում իր դերն ունի բազմադավանական միջավայրը: Տարածված է չորս հիմնական կրոն: Խորհրդային տարիներին տարբեր ազգությունների մարդիկ չէին սովորում միմյանց լեզուն, քանի որ ընտրել էին հաղորդակցման երրորդ լեզու՝ ռուսերենը: Դա նրանց միակ ընտրությունը չէր: Հասարակական-քաղաքական իրավիճակը որոշեց այս ընտրությունը: Ձևականորեն Վրաստանի պետական լեզուն համարվում էր վրացերենը, բայց իրականում ռուսաց լեզուն էր կատարում պետական և հաղորդակցման լեզվի դեր:

Միմյանց լեզվի չիմացությունը, պատմության սեփական դատողությունը, խորհրդային տարածքով սահմանափակվածությունը, որին ավելանում էին որոշ կրոնական հիմնախնդիրներ, կոմունիստական վարչակարգի կայսերական քաղաքականությունը ազգային հակամարտությունների հիմքն էր հանդիսանում հատկապես բազմազգ շրջաններում, այդ թվում՝ Սամցխե-Չավախեթիում:

Համալսարանական կրթությունը որոշակի ազատություն ձեռք բերեց XX դ. 90-ական թվականներից:

Սամցխե-Չավախեթիում 1990 թ. հիմնվում է Իվ. Չավախիշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարանի Ախալցխայի մասնաճյուղը, իսկ 2002 թ.՝ Ախալքալաքում: Ի վերջո այս երկու մասնաճյուղերի միավորմամբ ձևավորվում է Սամցխե-Չավախեթիի պետական համալսարանը:

Ցանկացած տեսակի հարաբերություն ի վերջո վերածվում է լեզվական հարաբերությունների:

Սամցխե-Չավախեթիի նոր սերունդը՝ թե՛ վրացիները, թե՛ հայերը, այլևս չգիտի ռուսերեն: Սա արդեն նշան է, որ տարածաշրջանային լեզուն փոխարինվում է անգլերենով, բայց այս գործընթացը պետության համար ունի մեկ կարևոր արդյունք՝ վրաց-հայերեն լեզվական հարաբերություններում անգլերենը չի կարող փո-

խարինել ռուսերենին: Այս դեպքում միջազգային լեզուն անգլերենն է, իսկ վրացերենը՝ Վրաստանի պետական լեզուն, որի իմացությունը միանշանակ կարևոր է երկրում ապրող բոլոր ազգությունների համար, քանի որ միայն պետական լեզվով է իրականացվում կանոնադրությունը:

БЕРИДЗЕ Мераб (Грузия)

Самцхе-Джавахетский государственный университет

БЕРИДЗЕ Мака (Грузия)

Самцхе-Джавахетский государственный университет

e-mail: beridzemaka@gmail.com

РОЛЬ И ФУНКЦИИ ГОСУДАРСТВЕННОГО ЯЗЫКА В САМЦХЕ-ДЖАВАХЕТИ

Мультиэтничность означает многонациональность, в основном под этим термином понимается сосуществование двух или более этнических групп в одном государстве и в рамках одного государственного языка.

Самцхе-Джавахети - это юг Грузии с многоэтническим населением, проживающим в этом регионе еще с конца 20-го века. Сегодня здесь живут в основном грузины и армяне. Таким образом, мультиэтничность в регионе подразумевает наличие двух национальностей.

Многонациональная мультиэтничная среда, существующая сегодня в Самцхе-Джавахети, сформировалась за последние два столетия. Мультиконфессиональная среда играет определенную роль в окончательном формировании этнического облика региона. Образуются последовательность четырех основных религий.

В советское время люди разных национальностей не учили язык друг друга, потому что выбирали третий язык общения - русский. Это был не их выбор. Социально-политическая ситуация определяла этот выбор. Формально государственным языком Грузии был грузинский, но фактически русский язык служил государственным языком, языком общения.

Незнание языка друг друга, собственная интерпретация истории, замкнутость на советском пространстве, в определенной степени дополненная религиозными проблемами, имперская политика коммунистического режима создавали основу для национальных конфронтаций.

В 90-е годы 20-го века университетское образование получило некоторую свободу. В Самцхе-Джавахети был основан Ахалцихский филиал Тбилисского государственного университета имени Ив. Джавахишвили, в 2002 году – Джавахетский филиал в Ахалкалаки и с их объединением окончательно формируется Самцхе-Джавахетский государственный университет.

Любые отношения в конечном итоге сводятся к лингвистическим отношениям.

Новое поколение в Самцхе-Джавахети, как грузины, так и армяне, больше не знает русского языка, уже не говорит по-русски. Это уже признак того, что региональный язык заменяется английским, но этот процесс имеет одно важное последствие для государства: английский не может заменить русский в грузино-армянских языковых отношениях. На этот раз английский язык является международным, а грузинский - государственным языком Грузии, знание которого необходимо для всех национальностей, проживающих в стране, потому что только на государственном языке реализуется законодательство.

BERIDZE Merab (Georgia)

LEPL-Samtskhe-Javakheti State University

BERIDZE Maka (Georgia)

LEPL-Samtskhe-Javakheti State University

e-mail: beridzemaka@gmail.com

THE ROLE AND FUNCTION OF THE STATE LANGUAGE IN SAMTSKHE-JAVAKHETI REGION

Basically the term “multiethnicity” refers to the coexistence of two or more ethnic groups in one state and within one state language.

Samtskhe-Javakheti region is the south of Georgia. This region was inhabited by a multi-ethnic population as far back as the end of the 20-th century. Today Georgians and Armenians live mainly. Thus, multiethnicity in the region implies dual nationalities.

The multiethnic environment that exists today in Samtskhe-Javakheti region has evolved over the last two centuries. The multi-confessional environment plays a role in the final formation of the ethnic face of the region. A sequence of four major religions is formed.

During the Soviet era, people of different nationalities did not learn each other's language because they chose a third language, Russian. It was not their only choice. The socio-political situation determined this choice. Formally, the state language of Georgia was Georgian. In fact, the Russian language served as the state language, as the language of communication.

Ignorance of each other's language, their own interpretation of history, closure to the Soviet space, to which a certain dose of religious problems were added, the imperial policy of the communist regime formed the basis of national conflicts especially in the multiethnic regions, including Samtskhe-Javakheti region.

Iv. Javakhishvili Tbilisi State University, Akhaltsikhe Branch and Javakheti Branch in Akhalkalaki were finally merged to form Samtskhe-Javakheti State University.

Any kind of relationship will eventually be reduced to linguistic unity.

The new generation in Samtskhe-Javakheti, both Georgians and Armenians, no longer speaks Russian. This is already a sign that the regional language is being replaced

by English, but this process has one important consequence for the state: Russian can not be replaced by English in Georgian-Armenian language relations. This time English is the international language, and Georgian is the state language of Georgia, which is definitely needed by all nationalities living in the country, because only in this language is the implementation of state legislation.

ՎՎԱԳՅԱՆ Արմենուհի (Հայաստան)

Շիրակի պետական համալսարան (Հայաստան)

Էլ. փոստ՝ arm5_83_7@mail.ru

**ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ-
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ Վ. ԱՆԱՆՅԱՆԻ
ԵՐԿԵՐՈՒՄ**

Եղանակավորող դարձվածային միավորների միջոցով դրսևորվում է խոսողի անհատական վերաբերմունքը, արտահայտվում են հույզերը, ապրումներն ու գգացմունքները: Այս դարձվածքները «խոսքի մեջ կատարում են զուտ եղանակավորող, խոսքը զունավորող դեր և նախադասության անդամներ չեն հանդիսանում»: Եղանակավորող դարձվածքներում հետին պլան է մղվում անվանողական արժեքը. այստեղ գերակշռում է խոսողի իմացական, գնահատողական վերաբերմունքը, սրանք նաև «հաղորդակցական արժեք ունեն»: Եղանակավորող (անիծական, հորդորական, հանդիմանական, մաղթանքի խոսք) դարձվածքները մեծ մասամբ խոսակցական-բարբառային ծագում ունեն, բնորոշ են լեզվի այդ տարբերակային ձևերին, հատկանշվում են ընդգծված հասարակաբանական (երբեմն էլ՝ գռեհկաբանական) երանգով և գեղարվեստական խոսքում հետապնդում են ոճական-արտահայտչական հատուկ նպատակ. սրանց միջոցով դրսևորվում է խոսողի համապատասխան վերաբերմունքը՝ գոհունակությունը, գովասանքն ու հիացմունքը, մտերմական վերաբերմունքը կամ էլ հեզմանքն ու հանդիմանությունը, զայրույթն ու սպառնալիքը, զիջումն ու երկբայությունը:

Վախթանգ Անանյանը, լինելով ժողովրդաշունչ գրող, իր գրեթե բոլոր ստեղծագործություններում՝ և՛ վեպերում, և՛ պատմվածքներում, հաճախ է գործածել եղանակավորող ԴՄ-ներ՝ խոսքն օժտելով պարզությամբ ու ժողովրդայնությամբ: Սրանք գործածվում են հերոսների խոսքում՝ որպես խոսքի ոճավորման, կերպարի տիպականացման կարևոր միջոց:

Վ. Անանյանի երկերում առանձնանում են հանելիություն, զովասանք, գոհունակություն, փաղաքշանք, օրհնանք ու պատրաստակամություն արտահայտող (**աչքներդ լույս, հոգուն մատաղ, արևը կծեմ**), ափսոսանք, խնդրանք արտահայ-

տող (**լեզուս չորանա, հողն իմ գլխին**), գովասանք, մաղթանք արտահայտող (**բերանդ տաճար դառնա**), հեզնանք, երգիծանք արտահայտող (**խելքի պուտուկ**), նախատինք, հանդիմանանք, սպառնալիք արտահայտող (**քու տունը շինվի, կաշին կքերթեն**), զարմացական բնույթի (**դու մի ասի**), հուսահատություն արտահայտող (**ճար չկա**), հիացմունք արտահայտող (**մերդ չմեռնի**), արհամարհական բովանդակությամբ (գրեհկարանական երանգով) (**իշի գուլիս, քաֆթառ շուն**), երկբայական իմաստով (**ո՞վ գիտի**), զիջական (**հերն էլ անիծած**), խնդրանք, իղձ, ցանկություն, վերհուշ արտահայտող (**աստծու սիրուն, ականջներդ կանչի**), զայրույթ արտահայտող (**դրա ջանը քրքրվի**) եղանակավորող դարձվածների վերաբերմունքային խմբերը:

Սույն զեկուցման շրջանակներում ուսումնասիրել ենք եղանակավորող ԴՄ-ների կառուցվածքային բաղադրիչների իմաստաքերականական ձևավորվածությունն ու արտահայտվածությունը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սրանց կազմում բաղադրիչները իմաստային առումով հիմնականում առարկայանիշ են. մարդու մարմնի մասերի անվանումներ են, կենդանիների անուններ են կամ բնության մեջ գոյություն ունեցող իրերի ու երևույթների անվանումներ, որոնց հարաբերվելով կամ որոնց հետ համեմատության մեջ դրվելով էլ կերտվել են լեզվական այս պատրաստի, վերարտադրելի իրողությունները, իսկ քերականական ձևավորվածության ու ձևաբանական արտահայտվածության տեսանկյունից սրանցում կարևոր դեր ունեն բայերն ու գոյականները (առկայացման կարգի համապատասխան իմաստների դրսևորմամբ), մասամբ էլ՝ դերանունները:

АВАГЯН Армения (Армения)
Ширакский Государственный университет
e-mail: arm5_83_7@mail.ru

СМЫСЛОВОЕ И ГРАММАТИЧЕСКОЕ ВЫРАЖЕНИЕ МОДАЛЬНЫХ ФРАЗЕОЛОГИЗМОВ В ПРОИЗВЕДЕНИЯХ В. АНАНЯНА

Посредством модальных фразеологизмов демонстрируется индивидуальное отношение говорящего, выражаются эмоции, чувства и переживания. Эти словосочетания «в речи выполняют лишь моделирующую, речекрашающую роль и членами предложения не являются». В моделирующих фразеологизмах номинальное значение отодвигается на задний план, здесь преобладает познавательная, оценочная установка говорящего, которые также имеют «коммуникативное значение». Модальные (проклятия, просьба, пожелания) фразеологизмы в большинстве своем имеют разговорно-диалектное происхождение, характерны для таких вариантных форм языка, характеризуются ярко выраженным социологическим (иногда вульгарным) оттенком и преследуют особую стилистико-экспрессивную цель в художественной речи, посредством таких фразеологизмов проявляется стилистическое выражение отношения говорящего: удовлетворение, похвала и восхищение, интимное отношение или сарказм и упрек, гнев и угроза, уступка и амбивалентность.

Вахтанг Ананян, будучи народным писателем, почти во всех своих произведениях, как в романах, так и в рассказах, часто употреблял описательные слова, придавая речи простоту и популярность. Они используются в речи героев как важное средство стилизации речи и характеристики образов.

В произведениях В. Ананяна встречаются относительные группы модальных фразеологизмов, таких как выражения удовольствия, похвалы, удовлетворения, восхищения, благословения и готовности (աչքներդ լույս, հոգուն մտտադ, արևը կծեմ), сожаления, просьбы (լեզուս չորանա, հողն իմ գլխին), похвалы, пожелания (բերանդ տանար դանա), выражение иронии, сатиры (խելքի պուտուկ), упрека, угрозы (քու սուտը շինվի, կաշին կբերթեմ), удивления (դու մի ապի), отчаяния (ծար չկա), восхищения (մերդ չմեռնի), с пренебрежительным содержанием (вульгарно с оттенком) (իշի գուլի, քաֆթառ շուն), с двойным значением (ն՛վ գիտի), с уступками (հերն էլ անիծած), просьбы, пожелания (աւտծու սիրուն, ականջներդ կանչի), гнева (դրա ջանը քրքրվի).

В рамках данной статьи было рассмотрено семантическое формирование и выражение структурных компонентов модальных фразеологизмов. Исследование показывает, что семантические компоненты в них в основном указывают на предметы: названия частей человеческого тела, названия животных или названия существующих в природе вещей и явлений, с которыми эти готовые, воспроизводимые языковые реальности были созданы путем соотнесения или сравнения. С точки зрения грамматического образования и морфологического выражения важную роль в них играют глаголы и существительные (показывая соответствующие значения в порядке возникновения), а отчасти и местоимения.

AVAGYAN Armenuhi (Armenia)

State University of Shirak
e-mail: arm5_83_7@mail.ru

SEMANTIC AND GRAMMATICAL EXPRESSION OF MODAL PHRASES IN THE WORKS OF ANANYAN

With the help of modal phraseological units the individual attitude of the speaker is shown, his feelings and emotions are expressed. These phrases “play just modal role, giving coloring to the speech and they do not become members of sentences”. In phraseological units the nominal value appears in the background; the cognitive evaluative value of the speaker dominates here; they also have “communicative value”. Modal(cursing, admonishing, reprimanding, wishful words) phrases have colloquial dialectal origin in general, they are typical of these language variants, they are featured by underlined sociological (sometimes vulgar) shade and in artistic speech they pursue stylistic expressive special aim; with the help of these the appropriate attitude of the speaker is expressed: satisfaction, praise and admiration, close relation or irony and

rebuke, anger and threat, concession and duality. Vakhtang Ananyan, being a traditional writer nearly in all his works, both in novels and stories, had used phraseological units, which gave clarity and popularity to the speech. They are used in speeches of heroes as styling tools for the speech and important ways of characterisation.

In the works of Ananyan the following attitudinal groups of phraseological units are distinguished: phrases that express pleasure, praise, satisfaction, caress, blessing, readiness (**աչքներդ լույս, հոգուն մատաղ, արևը կծեմ**), regret, request (**լեզուս չորանա, հողն իմ գլխին**), praise, wish (բերանդ տաճար դառնա), irony, humor (**խելքի պուտուկ**), reproach, scolding, threat (**քու տունը շինվի, կաշին կքերթեմ**), surprise (**դու մի ասի**), disappointment, (**ճար չկա**), admiration (**մերդ չմեռնի**), despise with vulgar coloring (**իշի գլուխ, քաֆթառ շուն**), in a dualistic sense (**ո՞վ գիտի**), condescending (**հերն էլ անիծած**) request, wish (**աստծու սիրուն, ականջներդ կանչի**), anger (**դրա ջանը քրքրվի**).

Within the framework of this paper, we have investigated the semantic formation and self-expression of the structural-forming components of modal phraseological units. The study shows that the components in their composition are semantically mostly subject-specific: these are the names of parts of the human body, the names of animals or of things and phenomena that existed in nature, in connection with which, or in comparison with which, these ready-made, true linguistic realities were created, and from the grammatical point of view and morphological expression, verbs and nouns play an important role in this (with the manifestation of the corresponding values of the order of objectification), partially pronouns too.

ՉԱՔԱՐՅԱՆ Հովհաննես (Հայաստան)

«Տաթև» գիտակրթական համալիր
Էլ. փոստ՝ hovzakaryan@gmail.com

Հ.-Ե. *(S)Ս(E)- «ԿՏՐԵԼ, ԾԱԿԵԼ» ԵՎ *(A)Ս(E)- «ԾԻՇՏ, ՀԱՎԱՏԱՐԻՄ» ԱՐՄԱՏՆԵՐԻՑ ՍԵՐՎԱԾ ՀԱՅԵՐԵՆ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինչ վերաբերում է բառասկզբին, ապա հայերենագիտության մեջ ընդունված է այն կարծիքը, որ այդ դիրքում հ.-ե. *ս- ձայնորդը վերածվել է միայն գ-ի (չկա բացատրություն, թե ինչու չէր կարող վերածվել վ-ի), իսկ վ սկզբնահնչյունով հայերեն բառերը իբր փոխառություններ են մեծ մասամբ իրանական աղբյուրից: Կասկածի ենթարկելով կարծրատիպի վերածված այդ կարծիքը՝ առաջադրել ենք այն վարկածը, որ վ սկզբնահնչյունով հայերեն բառերի մեծագույն մասի հնագույն ձևերում այդ վ-ն եղել է ոչ թե սկզբնահնչյուն, այլ հաջորդել է հետագայում ընկած թույլ

սկզբնաձայնավորին կամ սահող *s-ին, այսինքն՝ իրականում սկզբնապես եղել է բառամիջյան *ս ձայնորդ, որի զարգացման օրինաչափ արդյունքներից մեկն է վ-ն: Այս վարկածը հիմնավորող մի շարք ստուգաբանություններ արդեն ներկայացրել ենք մեր մի քանի հոդվածներում: Մույն գեկուցման մեջ անդրադարձել ենք մեր կարծիքով հ.-ե. *(s)u(e)-r-«կտրել, ծակել» և *(a)u(e)-«ճիշտ, հավատարիմ» արմատներից անմիջականորեն սերված հայերեն մի քանի բառերի, որոնց թվում կան գրային հայերենում վ սկզբնահնչյունով ձևեր:

Այդ բառերը և դրանց համար առաջարկվող նոր ստուգաբանություններն են. վարսել (վասել) «զամել (հողի մեջ), մեխել (պատին)» <*(s)uər-k'- <*(s)u- «կտրել, ծակել», վետ «1. ծակ, փոս, 2. ցուում» <*(s)uei-d-, վտառ «մարմնի վրայի անցք (բերան, քթանցք ևն)» <* վիտ-առ <*(s)uē-d-, վիր-ապ «1. խոր փոս, 2. գետնափոր բանտ» <*(s)uēr-, վիհ (վիրի) «1. անդունդ, 2. երկրի պատռվածք» <վիր-h <*(s)uēr-ti, վաւեր «հավաստի, ստույգ, վստահելի, արժանահավատ» <*վեր+վեր <*(a)ue-r- <*(a)u(e)- «ճիշտ; հավատարիմ», վստահ «1. հաւատով, 2.ապահով, 3. համարձակ, աներկյուղ» <*վի-ստ-ահ <*(a)uē-st(i)-, հաւատ (աւատ) «1.կրոն, դավանանք, 2. համոզմունք, վստահություն, ստուգություն, 3.փաստ, հավաստիք» <*(h₂)auə-d-, հաւատ «1. ստույգ, ճշմարիտ, վավեր,հաստատ, 2.ապացույց, երաշխիք» <*h₂auə-sti-, հաւաս-ար «1. ուղիղ, միազիծ, 2. ճիշտ նույն չափի, 3. ընդհանուր» <*h₂auə-k'- և այլն:

ЗАКАРЯН Оганес (Армения)

Научно-образовательный комплекс "Татев"
e-mail: hovzakaryan@gmail.com

ЭТИМОЛОГИЯ НЕКОТОРЫХ АРМЯНСКИХ СЛОВ, ВОЗНИКШИХ ОТ ПИЕ КОРНЕЙ *(S)U(E)- «РЕЗАТЬ, КОЛОТЬ» И *(A)U(E)- «ИСТИННЫЙ, ВЕРНЫЙ, ПРЕДАННЫЙ».

Как известно, ПИЕ сонорный звук *u в армянском языке в середине и в конце слова превратился в основном в звуки վ/լ или q (*diw->տիլ, *awed->աւեւ, *gwow->լուվ, *owi-pa->հովիվ, *gwowio->լոզի, *rew->արեւ и т. д.).

Что касается начала слова, то в арменоведении принято мнение, что в этой позиции ПИЕ сонорный звук *u превратился только в q (нет объяснения, почему невозможно было превращение в վ), а армянские слова с начальным վ якобы заимствованы в основном из иранского источника. Сомневаясь в этом стереотипном мнении, мы выдвинули гипотезу, что в древних формах большинства армянских слов с начальным վ этот վ был не начальным звуком, а следовал начальному слабому гласному звуку или *s-mobile, то есть на самом деле изначально был срединный сонорный звук *u, одним из закономерных результатов развития которого является վ. В нескольких наших статьях мы уже представили ряд этимологий, подтверждающих эту гипотезу. В настоящей статье мы рассмотрели некоторые

армянские слова, которые, по нашему мнению, произошли от ПИЕ корней *(s)u(e)- «резать, колоть» и *(a)u(e)- «истинный, верный; преданный», и среди которых есть слова с начальным լ в письменном армянском языке.

Эти слова и предложенные для них новые этимологии — следующие: լարու-լի (լարուլի) «пригвоздить (в землю, в стену)» <*(s)uṛ-k'- <*(s)uṛ- «резать, колоть», լէտ «1. дыра, отверстие, 2. тату» <*(s)uṛi-d-, լուտ «отверстие на теле (рот, ноздри и т. д.)» <*(s)uṛ-d-, լիր-ւոյ «1. глубокая яма, 2. подземная тюрьма» <*(s)uṛ-ṛ-, լի (լի) «1. бездна, 2. трещина земли» <*(s)uṛ-ti-, լուր «достоверный, подлинный, благонадежный» <*(a)uṛ- <*(a)uṛ- «истинный, верный; преданный», լուտ «1. убеждённый, 2. надёжный, 3. уверенный» <*(a)uṛ-st(i)-, հաւտ (հաւտ) «1. вера, религия, 2. убеждение, доверие» <*(h₂)uṛ-d-, հաւտ «1. верный, достоверный, надёжный, 2. залог, гарантия» <*(h₂)uṛ-sti-, հաւտ-ւոյ «1. ровный, прямой, 2. равный, точный, 3. общий» <*(h₂)uṛ-k'- и т. д.

ZAKARYAN Hovhannes (Armenia)

«Tatev» Center of Research and Education

e-mail: hovzakaryan@gmail.com

**ETYMOLOGY OF SEVERAL ARMENIAN WORDS DERIVED FROM
PIE ROOTS *(S)U(E)- «TO CUT, TO PIERCE»
AND *(A)U(E)- «TRUE, FAITHFUL».**

As it is known, PIE sonorant *u in Armenian in the middle and at the end of the word has mostly turned into լ/l or q sounds (*diw- >տիլ, *awed- >աւտ, *gwow- >լոյ, *owi-pa- >հովիլ, *gwowio- >լոյի, *rew- >ւրեւ etc.).

As for the beginning of the word, the opinion is accepted in Armenian studies that PIE *u in this position has turned only into q (there is no explanation why it could not be turned into լ), and the Armenian words with the initial sound լ are supposedly borrowings mostly from Iranian sources. Doubting this stereotypical opinion, we have hypothesized that in the ancient forms of most Armenian words with the initial sound լ, this լ was not an initial sound, but has followed the initial weak vowel or the *s-mobile, that is, in fact, originally there was a medial sonorant *u, one of the regular results of the development of which is the sound լ. We have already presented a number of etymologies substantiating this hypothesis in several of our articles. In this paper, we have touched on some Armenian words, in our opinion originating from PIE roots *(s)u(e)- "to cut, to pierce" and *(a)u(e)- «true, faithful», among which there are words with initial լ in written Armenian.

Those words and suggested for them new etymologies are: լարու-լի (լարուլի) «to rivet (in the ground), to nail (to the wall)» <*(s)uṛ-k'- <*(s)uṛ- «to cut, to pierce», լէտ «1. hole, moat, 2. tattoo» <*(s)uṛi-d-, լուտ «hole on the body (mouth, nostrils etc.)» <*

վիտ-առ <*(s)uē-d-, վիր-ապ «1. deep pit, 2. underground prison» <*(s)uēr-, վիհ (վիրհ) «1.abyss, 2.tear of the earth» <վիր-հ <*(s)uēr-ti-, վաւեր «valid, authentic, reliable» <*վեր+վեր <*(a)uē-r- <*(a)u(e)- «true, faithful», վստահ «1.sure, 2.reliant, 3.confident» <*վի-ստ-ահ <*(a)uē-st(i)-, հաւատ (աւատ) «1. belief, 2. faith, credence, trust» <*(h₂)auə-d-, հաւաստ «1. reliable, faithful, secure, 2. proof, warranty» <*h₂auə-sti-, հաւաս-ար «1. straight, right, 2. equal, exactly the same size, 3. overall» <*h₂auə-k'- etc.

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՀԵՆՐԻԵՏԱ (Հայաստան)

Մ. Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարան
Էլ.փոստ՝ henvs@mail.ru

ՉԱԲԱՐՅԱՆ ՀՈՎԻԱՆՆԵՍ (Հայաստան)

«Տաթև» գիտակրթական համալիր
Էլ. փոստ՝ hovzakaryan@gmail.com

**ԲԺՇԿԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆԱԳՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ**

